

I

(Օրենսդրական ակտեր)

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

009/125/ԵՀ եւ**2010/30/ԵՄ հրահանգները փոփոխող եւ****2004/8/ԵՀ ու 2006/32/ԵՀ հրահանգներն ուժը կորցրած
ճանաչող՝ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՌԼԱՄԵՆՏԻ****ԵՎ ԽՈՐՀՐԴԻ «Էներգաարդյունավետության մասին»
2012 թվականի հոկտեմբերի 25-ի 2012/27/ԵՄ ՀՐԱՀԱՆԳ
(Եվրոպական տնտեսական տարածքին առնչվող տեքստ)**

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՌԼԱՄԵՆՏԸ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ,

հաշվի առնելով «Եվրոպական միության գործունեության մասին» պայմանագիրը
եւ մասնավորապես՝ դրա 194(2) հոդվածը,

հաշվի առնելով Եվրոպական հանձնաժողովից ստացված առաջարկը,

օրենսդրական ակտի նախագիծն ազգային խորհրդարաններին փոխանցելուց հետո,

հաշվի առնելով Տնտեսական եւ սոցիալական հարցերով Եվրոպական կոմիտեի
եզրակացությունը¹,

¹⁾ ՊՏ C 24, 28.1.2012 թ., էջ 134:

հաշվի առնելով Տարածաշրջանային հարցերով կոմիտեի եզրակացությունը²,
գործելով ընդունված օրենսդրական ընթացակարգին համապատասխան³,

քանի որ՝

- 1) Միությունը էներգակիրների ներմուծումից մեծ կախվածություն ունենալու, էներգիայի աղբյուրների սակավության, ինչպես նաև կլիմայական փոփոխությունների ազդեցությունը նվազեցնելու եւ տնտեսական ճգնաժամը հաղթահարելու անհրաժեշտության պատճառով նախադեպը չունեցող մարտահրավերների առջև է կանգնել: Էներգաարդյունավետությունն այդ մարտահրավերներին դիմակայելու կարելու միջոցներից է: Այն բարձրացնում է Միության էներգամատակարարման անվտանգությունը՝ նվազեցնելով առաջնային էներգիայի սպառումն ու էներգակիրների ներմուծումը: Այն նպաստում է ջերմոցային գազերի արտանետումները ծախսարդյունավետ ձեով նվազեցնելուն եւ հետեւաբար կլիմայական փոփոխությունները մեղմելուն: Առավել էներգաարդյունավետ տնտեսության անցնելը կարող է նաև թափ հաղորդել նորարարական տեխնոլոգիական լուծումների տարածմանը եւ բարելավել արդյունավետության ճյուղի մրցունակությունը Միությունում՝ նպաստելով տնտեսական աճին եւ էներգաարդյունավետությանն առնչվող մի քանի ոլորտներում բարձր վարձատրվող աշխատատեղերի ստեղծմանը:
- 2) Եվրոպական խորհրդի՝ 2007 թվականի մարտի 8-ի եւ 9-ի եզրակացություններով շեշտվեց Միությունում էներգաարդյունավետության մակարդակի բարձրացման անհրաժեշտությունը, որը միտված էր, հակառակ կանխատեսումներին, մինչեւ 2020 թվականը Միության առաջնային էներգիայի սպառման ծավալները 20 տոկոսով խնայելուն ուղղված

² ՊՏ C 54, 23.2.2012 թ., էջ 49:

³ Եվրոպական պառլամենտի 2012 թվականի սեպտեմբերի 11-ի դիրքորոշում (Պաշտոնական տեղեկագրում դեռեւս հրապարակված չէ) եւ Խորհրդի 2012 թվականի հոկտեմբերի 4-ի որոշում:

նպատակի ապահովմանը: Եվրոպական խորհրդի՝ 2011 թվականի փետրվարի 4-ի եզրակացություններով շեշտվեց, որ անհրաժեշտ է ապահովել Եվրոպայի խորհրդի կողմից 2010 թվականին 2020 թվականի համար համաձայնեցված՝ 20 տոկոս կազմող էներգաարդյունավետության թիրախը, որին ուղղված աշխատանքները ներկայումս ժամանակացույցին համապատասխան չեն ընթանում: 2007 թվականին կատարված կանխատեսումներում 2020 թվականի համար սահմանվել էր առաջնային էներգիայի սպառման 1 842 մլն.տնհ կազմող ցուցանիշ: 20 տոկոսով նվազեցման արդյունքում 2020 թվականին ցուցանիշը կազմում է 1 474 մլն.տնհ, այն է՝ հակառակ կանխատեսումներին՝ նախատեսված ցուցանիշի 368 մլն.տնհ-ի նվազեցում:

- 3) Եվրոպական խորհրդի՝ 2010 թվականի հունիսի 17-ի եզրակացություններով հաստատվեցին, որ էներգաարդյունավետության թիրախը Միության՝ աշխատատեղերի ստեղծմանը, խելամիտ, ինչպես նաեւ կայուն եւ ներառական աճին նպատակաուղղված նոր ռազմավարության կարելորագույն թիրախներից է («Եվրոպա-2020» ռազմավարություն): Այդ գործընթացի համաձայն, ինչպես նաեւ ազգային մակարդակով այդ նպատակն իրականացնելու համար անդամ պետություններից պահանջվում է Հանձնաժողովի հետ սերտ երկխոսության միջոցով սահմանել ազգային թիրախներ, ինչպես նաեւ իրենց բարեփոխումների ազգային ծրագրերում նշել, թե ինչպես են նախատեսում ապահովել այդ թիրախները:
- 4) Հանձնաժողովի՝ «էներգետիկա-2020»-ի մասին 2010 թվականի նոյեմբերի 10-ի հաղորդագրությամբ Միության՝ էներգետիկայի վերաբերյալ 2020 թվականի ռազմավարության հիմքում դրվում է էներգաարդյունավետությունը, ինչպես նաեւ համառոտ ներկայացվում է էներգաարդյունավետության վերաբերյալ նոր ռազմավարության անհրաժեշտությունը, որի շնորհիվ բոլոր անդամ պետությունները կկարողանան էներգաօգտագործումը տարանջատել տնտեսական աճից:

- 5) Եվրոպական պառլամենտը «Էներգաարդյունավետության գործողությունների ծրագրի վերանայման մասին» 2010 թվականի դեկտեմբերի 15-ի իր բանաձեւում կոչ է արել Հանձնաժողովին իր՝ էներգաարդյունավետության գործողությունների ծրագրի վերանայված տարբերակում ներառել միջոցառումներ, որոնք ուղղված են 2020 թվականին Միության ողջ մակարդակով էներգաարդյունավետության նպատակի իրականացմանը խոչընդոտող բացը վերացնելուն.
- 6) «Եվրոպա - 2020» ռազմավարության մեջ ներառված նախաձեռնություններից մեկը Հանձնաժողովի կողմից 2011 թվականի հունվարի 26-ին ընդունված՝ «Կարելորագույն ռեսուրսների արդյունավետ օգտագործումը Եվրոպայում» նախաձեռնությունն է: Դրանում էներգաարդյունավետությունը սահմանվում է որպես էներգիայի աղբյուրների կայուն օգտագործումն ապահովող կարելի տարր.
- 7) Եվրոպական խորհրդի՝ 2011 թվականի փետրվարի 4-ի եզրակացություններում հաստատվել է, որ Միության էներգաարդյունավետության թիրախն ապահովելու գործընթացը ժամանակացույցին համապատասխան չի ընթանում, եւ որ վճռական գործողություններ են պահանջվում շենքերի, տրանսպորտի, արտադրանքի եւ որոշակի գործընթացների մասով էներգախնայողության առավել բարձր մակարդակ ապահովելու զգալի ներուժն օգտագործելու համար: Այդ եզրակացություններով նաեւ նախատեսվում է մինչեւ 2013 թվականը վերանայել Միության էներգաարդյունավետության թիրախի ապահովման գործողությունները, ինչպես նաեւ անհրաժեշտության դեպքում՝ դիտարկել այլ միջոցառումներ.

8) 2011 թվականի մարտի 8-ին Հանձնաժողովն ընդունել է 2011 թվականի էներգաարդյունավետության գործողությունների ծրագրի մասին իր հաղորդագրությունը: Հաղորդագրությամբ հաստատվել է, որ Միությունն էներգաարդյունավետության թիրախն ապահովելու նպատակով նախատեսված ժամանակացույցով չի ընթանում: Վերոնշյալը տեղի ունեցավ՝ չնայած անդամ պետությունների կողմից որպես Եվրոպական պառլամենտի և Խորհրդի «էներգիայի վերջնական սպառման արդյունավետության և էներգետիկ ծառայությունների մասին» 2006 թվականի ապրիլի 5-ի 2006/32/ԵՀ հրահանգի⁴ պահանջների կատարում ներկայացված էներգաարդյունավետության գործողությունների առաջին ազգային ծրագրերում համառոտ ներկայացված՝ էներգաարդյունավետության ազգային քաղաքականությունների մասով գրանցած առաջընթացին: Գործողությունների երկրորդ ծրագրերի նախնական վերլուծությամբ հաստատվում է, որ Միությունը նախատեսված ժամանակացույցով չի ընթանում: Իրավիճակը շտկելու նպատակով 2011 թվականի էներգաարդյունավետության գործողությունների ծրագրում մանրամասն ներկայացվել են էներգաարդյունավետության մի շարք քաղաքականություններ և միջոցառումներ, որոնք ընդգրկում են ամբողջ էներգետիկ շղթան, այդ թվում՝ էներգիայի արտադրությունը, հաղորդումը և բաշխումը, ինչպես նաև էներգաարդյունավետության ոլորտում պետական հատվածի առաջատար դերը, շենքերն ու սարքերը, արդյունաբերությունը և վերջնական սպառողներին իրենց էներգասպառումը կառավարելու նպատակով աջակցություն տրամադրելու անհրաժեշտությունը: Էներգաարդյունավետությունը տրանսպորտի ոլորտում դիտարկվել է 2011 թվականի մարտի 28-ին ընդունված՝ «Տրանսպորտի մասին» տեղեկատվական փաստաթղթին համապատասխան: Մասնավորապես, տեղեկատվական փաստաթղթի 26-րդ նախաձեռնությամբ կոչ է արվում բոլոր տեսակի տրանսպորտային միջոցների արտանետած ածխաթթու գազի

⁴ ՊՏ L 114, 27.4.2006 թ., էջ 64:

- մասով պատշաճ չափանիշներ մշակել, իսկ անհրաժեշտության դեպքում դրանք լրացնել Էներգաարդյունավետության մասին պահանջներով՝ բոլոր տեսակի շարժիչային համակարգերին անդրադառնալու նպատակով.
- 9) 2011 թվականի մարտի 8-ին Հանձնաժողովը նաեւ ընդունել է 2050 թվականին մրցակցային եւ ցածր ածխածնային տնտեսության անցնելու ճանապարհային քարտեզը՝ վերհանելով այդ տեսանկյունից Էներգաարդյունավետության վրա ավելի շատ կենտրոնանալու անհրաժեշտությունը.
- 10) այս համատեքստում անհրաժեշտ է արդիականացնել Միության՝ Էներգաարդյունավետության մասով իրավական դաշտը որեւէ հրահանգի միջոցով, որն ուղղված է մինչեւ 2020 թվականը Միության առաջնային Էներգիայի սպառման ծավալները 20 տոկոսով խնայելու հետ կապված Էներգաարդյունավետության թիրախն ապահովելու եւ 2020 թվականից հետո Էներգաարդյունավետության ոլորտում այլ բարեփոխումներ կատարելու ընդհանուր նպատակներին: Այդ նպատակով սույն հրահանգով պետք է ընդհանուր շրջանակ սահմանվի Միությունում Էներգաարդյունավետությունը խթանելու համար, ինչպես նաեւ պետք է նախատեսվեն որոշակի գործողություններ 2011 թվականի Էներգաարդյունավետության գործողությունների ծրագրում ներառված որոշ առաջարկություններ իրականացնելու, ինչպես նաեւ դրանով սահմանված եւ չկիրառված Էներգախնայողության զգալի ներուժն օգտագործելու նպատակով.
- 11) Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի՝ «Մինչեւ 2020 թվականը Համայնքի ջերմոցային գազերի արտանետումների մակարդակը կրճատելուն ուղղված անդամ պետությունների հանձնառությունների կատարման մասով ձեռնարկված միջոցների մասին» 2009 թվականի ապրիլի 23-ի

թիվ 406/2009/ԵՀ որոշմամբ⁵ Հանձնաժողովից պահանջվում է մինչև 2012 թվականը գնահատել եւ ներկայացնել Միության ու դրա անդամ պետությունների առաջընթացը մինչև 2020 թվականն էներգասպառման ծավալները 20 տոկոսով կրճատելու նպատակն իրականացնելու հարցում՝ հակառակ կանխատեսումներին: Դրանում նաեւ նշվում է, որ անդամ պետություններին Միության ջերմոցային գազերի արտանետումների մակարդակը կրճատելու իրենց հանձնառությունների կատարման հարցում օգնելու նպատակով Հանձնաժողովը պետք է մինչև 2012 թվականի դեկտեմբերի 31-ն էներգաարդյունավետության բարեփոխումներին թափ հաղորդելուն նպատակաուղղված առավել հիմնավոր կամ նոր միջոցառումներ առաջարկի: Սույն հրահանգը հաշվի է առնում այդ պահանջը: Այն նաեւ նպաստում է 2050 թվականին մրցակցային եւ ցածր ածխածնային տնտեսության անցնելու ճանապարհային քարտեզում ներկայացված նպատակներն իրականացնելուն, մասնավորապես՝ էներգետիկայի ոլորտում ջերմոցային գազերի արտանետումների մակարդակը կրճատելու միջոցով, ինչպես նաեւ նպաստում է մինչև 2050 թվականն առանց արտանետումների էլեկտրաէներգիայի արտադրություն ունենալուն:

- 12) էներգախնայողության գոյություն ունեցող ողջ ներուժն օգտագործելու նպատակով պետք է միասնական մոտեցում ցուցաբերել, ինչն ընդգրկում է էներգամատակարարման եւ էներգիայի վերջնական սպառման դաշտում խնայողությունը: Միեւնույն ժամանակ, Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի՝ «էներգիայի ներքին շուկայում օգտակար ջերմության պահանջարկի հիման վրա համակցված արտադրության խթանման մասին» 2004 թվականի փետրվարի 11-ի 2004/8/ԵՀ հրահանգի⁶ եւ 2006/32/ԵՀ հրահանգի դրույթները պետք է բարելավվեն:

⁵ ՊՏ L 140, 5.6.2009 թ., էջ 136:

⁶ ՊՏ թիվ L 52, 21.2.2004 թ., էջ 50:

13) նախընտրելի է, որ 20 տոկոս կազմող էներգաարդյունավետության թիրախն ապահովվի տարբեր ոլորտներում էներգաարդյունավետությունը խթանող որոշակի ազգային եւ եվրոպական համընդհանուր միջոցառումների իրականացման արդյունքում: Պետք է պահանջել, որ անդամ պետությունները սահմանեն էներգաարդյունավետության ազգային ինդիկատիվ թիրախներ, սխեմաներ եւ ծրագրեր: Այդ թիրախները եւ յուրաքանչյուր անդամ պետության առանձին ջանքերը՝ գրանցված առաջընթացի վերաբերյալ տվյալների հետ մեկտեղ, պետք է գնահատվեն Հանձնաժողովի կողմից, որպեսզի դիտարկվի Միության ողջ մակարդակով թիրախն ապահովելու հավանականությունը եւ այն, թե որքանով են առանձին ջանքերը բավարար ընդհանուր նպատակին հասնելու համար: Հետեւաբար Հանձնաժողովը պետք է իր՝ վերանայված իրավական դաշտի միջոցով եւ «Եվրոպա-2020» ռազմավարության հետ կապված գործընթացների շրջանակներում անմիջականորեն վերահսկի էներգաարդյունավետության ազգային ծրագրերի իրականացման գործընթացը: Էներգաարդյունավետության ազգային ինդիկատիվ թիրախները սահմանելիս անդամ պետությունները պետք է կարողանան հաշվի առնել առաջնային էներգիայի սպառման վրա ազդեցություն գործող ազգային պայմանները, ինչպիսիք են էներգախնայողության չօգտագործված ծախսարդյունավետ ներուժը, էներգակիրների ներմուծման եւ արտահանման հետ կապված փոփոխությունները, վերականգնվող էներգիայի բոլոր աղբյուրների զարգացումը, ատոմային էներգիան, ածխաթթու գազի հավաքումը եւ պահեստավորումը, ինչպես նաեւ հրատապ գործողությունները: Մոդելավորման փորձեր իրականացնելիս Հանձնաժողովը պետք է ժամանակին եւ թափանցիկ ձեռով մոդելների մասին կանխատեսումների եւ մոդելների նախագծերի արդյունքների վերաբերյալ խորհրդակցի անդամ պետությունների հետ: Անհրաժեշտ է էներգաարդյունավետության

բարձրացմանն ուղղված միջոցառումների ազդեցության եւ շենքային ֆոնդի բարելավված մոդելավորումը, ինչպես նաեւ տեխնոլոգիաների բնութագիրը.

- 14) Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի՝ «Վերականգնվող աղբյուրներից ստացվող էներգիայի օգտագործման խթանման մասին» 2009 թվականի ապրիլի 23-ի 2009/28/ԵՀ հրահանգում⁷ նշվում է, որ Կիպրոսն ու Մալթան մեկուսացած եւ ծայրամասային դիրքում գտնվելու պատճառով որպես տրանսպորտային միջոց օգտագործում են ավիացիան, ինչը կարելի է նրանց քաղաքացիների եւ տնտեսության համար: Արդյունքում ազգային օդային տրանսպորտի ոլորտում Կիպրոսի եւ Մալթայի վերջնական համախառն էներգասպառումն անհամամասնորեն մեծ է, այսինքն՝ երեք անգամ ավելի, քան 2005 թվականի միջին էներգասպառումը Համայնքում, եւ հետեւաբար այդ երկրներն անհամաչափ ազդեցություն են կրում ներկայիս տեխնոլոգիական եւ կարգավորող սահմանափակումներից.
- 15) պետական ծախսերի ընդհանուր ծավալը համարժեք է Միության համախառն ներքին արդյունքի 19 տոկոսին: Այդ պատճառով պետական հատվածը շուկայի վերափոխման կարելի խթան է համարվում այն առավել արդյունավետ արտադրանքով, շենքերով եւ ծառայություններով ապահովելու, ինչպես նաեւ քաղաքացիների եւ ձեռնարկությունների կողմից էներգասպառման ոլորտում վարքագծային փոփոխություններին նպաստելու առումով: Ավելին, էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումների շնորհիվ էներգասպառումը նվազեցնելու արդյունքում պետական ռեսուրսները կարող են այլ նպատակների ծառայել: Ազգային, տարածաշրջանային եւ տեղական մակարդակներում պետական մարմինները պետք է էներգաարդյունավետության առումով օրինակ ծառայեն.

⁷ ՊՏ L 140, 5.6.2009 թ., էջ 16:

- 16) հաշվի առնելով այն, որ Խորհրդի՝ 2011 թվականի էներգաարդյունավետության գործողությունների ծրագրի վերաբերյալ 2011 թվականի հունիսի 10-ի եզրակացություններում շեշտվել է այն հանգամանքը, որ շենքերին Միության էներգիայի վերջնական սպառման 40 տոկոսն է բաժին ընկնում, եւ որ որակավորում պահանջող արհեստների ու շինարարության, ինչպես նաեւ շինարարական արտադրանքի արտադրության եւ այնպիսի մասնագիտական գործունեության ոլորտներում, ինչպիսիք են ճարտարապետությունը, խորհրդատվությունն ու ճարտարագիտությունը, աճի եւ զբաղվածության հետ կապված հնարավորություններից օգտվելու համար անդամ պետությունները պետք է 2020 թվականին հաջորդող տարիների համար բնակելի եւ առետրային շենքերի վերանորոգմանն ուղղված ներդրումներ գրավելու նպատակով երկարաժամկետ ռազմավարություն մշակեն՝ շենքային ֆոնդի էներգաարդյունավետությունը բարձրացնելու նպատակով: Այդ ռազմավարության մեջ պետք է անդրադարձ կատարվի ծախսարդյունավետ հիմնանորոգումներին՝ հանգեցնելով այնպիսի բարեկարգումների, որոնք զգալի տոկոսով կնվազեցնեն շենքի փոխանցված եւ վերջնական սպառման էներգիան՝ համեմատած նորոգմանը նախորդող այն մակարդակների հետ, որոնք հանգեցնում են բավականին բարձր էներգաարդյունավետության: Այդպիսի հիմնանորոգումները կարող են նաեւ իրականացվել փուլերով.
- 17) շենքերի վերանորոգման ծավալներն անհրաժեշտ է մեծացնել, քանի որ էներգախնայողության ոլորտում միակ ամենամեծ ներուժը բաժին է ընկնում գոյություն ունեցող շենքային ֆոնդին: Դրանից բացի, շենքերն առանցքային նշանակություն ունեն Միության՝ ջերմոցային գազերի արտանետումները մինչեւ 2050 թվականը, 1990 թվականի հետ համեմատած, 80-95 տոկոսով նվազեցնելու նպատակն իրականացնելու հարցում: Պետական մարմիններին պատկանող շենքերին բաժին է ընկնում շենքային ֆոնդի

զգալի մասը, ինչպես նաև այդ շենքերը հասարակական կյանքում բարձր տեսանելիություն ունեն: Հետեւաբար նպատակահարմար է որեւէ անդամ պետության տարածքում գտնվող եւ կենտրոնական կառավարման մարմիններին պատկանող ու նրանց կողմից զբաղեցված շենքերի վերանորոգման տարեկան ցուցանիշ սահմանել՝ դրանց էներգաարդյունավետությունը բարձրացնելու նպատակով: Վերանորոգման այս ցուցանիշը չպետք է սահմանափակի Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի՝ «Շենքերի էներգաարդյունավետության մասին» 2010 թվականի մայիսի 19-ի 2010/31/ԵՄ հրահանգով⁸ նախատեսված՝ գրեթե զրոյական էներգասպառմամբ շենքերին առնչվող պարտավորությունները: Սույն հրահանգում նշված՝ կենտրոնական կառավարման մարմինների շենքերը վերանորոգելու պարտավորությունը լրացնում է վերոնշյալ հրահանգը, որով անդամ պետություններից պահանջվում է գոյություն ունեցող շենքերի հիմնանորոգման դեպքում էներգաարդյունավետության նվազագույն պահանջներին համապատասխանելու նպատակով ապահովել այդ շենքերի էներգաարդյունավետության բարձրացումը: Անդամ պետությունները պետք է այլընտրանքային ծախսարդյունավետ միջոցառումներ ձեռնարկելու հնարավորություն ունենան՝ կենտրոնական կառավարման մարմինների գույքակազմի մեջ մտնող շենքերի էներգաարդյունավետությունը համարժեք մակարդակով բարելավելու նպատակով: Կենտրոնական կառավարման մարմինների շենքերի ընդհանուր մակերեսը վերանորոգելու պարտավորությունը պետք է վերաբերի այն վարչական բաժիններին, որոնց իրավասությունը տարածվում է որեւէ անդամ պետության ամբողջ տարածքի վրա: Երբ տվյալ անդամ պետությունում չկա համապատասխան վարչական բաժին, որի իրավասությունը տարածվում է ամբողջ տարածքի վրա, ապա պարտավորությունը պետք է վերաբերի այն վարչական բաժիններին, որոնց իրավասությունները միասին վերցրած տարածվում են ամբողջ տարածքի վրա.

⁸ ՊՏ թիվ L 153, 18.6.2010 թ., էջ 136:

- 18) անդամ պետությունների մի շարք քաղաքապետարաններ եւ այլ պետական մարմիններ արդեն իսկ կիրառում են միասնական մոտեցումներ էներգախնայողության եւ էներգամատակարարման մասով, օրինակ՝ կայուն էներգիային վերաբերող այնպիսի գործողությունների ծրագրերի միջոցով, ինչպիսիք են Քաղաքապետերի դաշնագրի նախաձեռնությամբ մշակված գործողությունների ծրագրերը, ինչպես նաեւ քաղաքաշինությանն առնչվող միասնական մոտեցումներ, որոնք ավելին են, քան շենքերի կամ տրանսպորտային տարբեր միջոցների մասով արվող առանձին միջամտությունները: Անդամ պետությունները պետք է քաղաքապետարաններին եւ այլ պետական մարմիններին խրախուսեն կայուն էներգաարդյունավետության՝ հստակ նպատակներ սահմանող միասնական ծրագրեր ընդունելու, քաղաքացիներին դրանց մշակման եւ իրականացման մեջ ընդգրկելու, ինչպես նաեւ վերջիններիս դրանց բովանդակության եւ նպատակներին հասնելու առաջընթացի վերաբերյալ պատշաճ տեղեկացնելու հարցում: Այդպիսի ծրագրերը կարող են հանգեցնել զգալի էներգախնայողության հատկապես այն դեպքում, երբ դրանք իրականացվում են էներգակառավարման այնպիսի համակարգերի միջոցով, որոնք շահագրգիռ պետական մարմիններին թույլ են տալիս ավելի լավ կառավարել իրենց էներգասպառումը: Պետք է խրախուսել մեծ ու փոքր քաղաքների, այլ պետական մարմինների միջեւ փորձի փոխանակումը՝ առավել նորարարական փորձ ձեռք բերելու առումով.
- 19) ինչ վերաբերում է որոշակի արտադրանք եւ ծառայություններ գնելուն, ինչպես նաեւ շենքեր գնելուն եւ վարձակալելուն, կենտրոնական կառավարման մարմինները, որոնք հանրային աշխատանքների, մատակարարման կամ ծառայությունների մատուցման պայմանագրեր են կնքում, պետք է օրինակ ծառայեն եւ էներգաարդյունավետ գնումներ կատարելու վերաբերյալ որոշումներ կայացնեն: Սա պետք է վերաբերի այն վարչական բաժիններին, որոնց իրավասությունը տարածվում է որեւէ

անդամ պետության ամբողջ տարածքի վրա: Երբ տվյալ անդամ պետությունում չկա համապատասխան վարչական բաժին, որի իրավասությունը տարածվում է ամբողջ տարածքի վրա, ապա պարտավորությունը պետք է վերաբերի այն վարչական բաժիններին, որոնց իրավասությունները միասին վերցրած տարածվում են ամբողջ տարածքի վրա: Սակայն սա չպետք է ազդեցություն ունենա Միության՝ պետական գնումների վերաբերյալ հրահանգների դրույթների վրա: Ինչ վերաբերում է այնպիսի արտադրանքին, որի նկատմամբ սույն հրահանգի՝ գնումներին ներկայացվող էներգաարդյունավետության պահանջները չեն կիրառվում, անդամ պետությունները պետք է պետական մարմիններին խրախուսեն հաշվի առնել տվյալ գնման էներգաարդյունավետությունը.

- 20) Միության մակարդակով «սպիտակ հավաստագրերի» համակարգի ներդրման հնարավորության գնահատումը ցույց է տվել, որ ներկայիս պայմաններում նման համակարգն ավելորդ վարչական ծախսերի կհանգեցնի, եւ որ կան ռիսկեր՝ մի շարք անդամ պետություններում եւ ոչ թե ամբողջ Միության մակարդակով էներգախնայողության կենտրոնացման հետ կապված: Միության մակարդակով ներդրվող այդպիսի համակարգի նպատակն առնվազն այս փուլում կարելի է առավել արդյունավետորեն իրականացնել էներգամատակարարող կազմակերպությունների համար նախատեսված՝ էներգաարդյունավետության մասով պարտավորությունների ազգային սխեմաների կամ քաղաքականության այլընտրանքային միջոցառումների միջոցով, որոնց շնորհիվ կարելի է հասնել էներգախնայողության միեւնույն մակարդակին: Նպատակահարմար է, որ այդպիսի սխեմաներով նախատեսվող հավակնությունների մակարդակը ներդրվի Միության մակարդակով մեկ ընդհանուր շրջանակում՝ միեւնույն ժամանակ անդամ պետություններին շուկայի դերակատարների ազգային կազմակերպությունը, էներգետիկայի ոլորտի որոշակի համատեքստն ու վերջնական սպառողների սովորություններն ամբողջությամբ հաշվի առնելու

հարցում էական ճկունություն դրսևորելու հնարավորություն ընձեռելով: Ընդհանուր շրջանակը պետք է էներգամատակարարող կազմակերպություններին հնարավորություն ընձեռի էներգետիկ ծառայություններ առաջարկելու ոչ միայն այն սպառողներին, որոնց նրանք էներգիա են վաճառում, այլև բոլոր վերջնական սպառողներին: Դրա արդյունքում էներգետիկ շուկայում մեծանում է մրցակցությունը, որովհետև էներգամատակարարող կազմակերպությունները կարող են տարբերակել իրենց արտադրանքը մատուցվող լրացուցիչ էներգետիկ ծառայությունների շնորհիվ: Ընդհանուր շրջանակը պետք է թույլ տա անդամ պետություններին իրենց ազգային սխեմաներում ներառել այնպիսի պահանջներ, որոնք ուղղված են սոցիալական նպատակներին, մասնավորապես՝ խոցելի սպառողների համար առավել բարձր էներգաարդյունավետության օգուտների մատչելիությունն ապահովելուն: Անդամ պետությունները պետք է օբյեկտիվ եւ ոչ խտրական չափանիշների հիման վրա որոշեն, թե էներգաբաշխիչ կամ էներգիայի մանրաձախ իրացմամբ զբաղվող որ ընկերությունները պետք է կրեն սույն հրահանգով նախատեսված՝ վերջնական սպառման էներգախնայողության թիրախն ապահովելու պարտավորությունը:

Անդամ պետություններին պետք է մասնավորապես թույլ տալ այդ պարտավորությունը չդնել էներգաբաշխիչ կամ մանրաձախ իրացմամբ զբաղվող փոքր ընկերությունների, ինչպես նաև էներգետիկ փոքր ոլորտների վրա՝ վարչական անհամաչափ բեռից խուսափելու նպատակով: Հանձնաժողովի՝ 2008 թվականի հունիսի 25-ի հաղորդագրությամբ սահմանվել են սկզբունքներ, որոնք վերոնշյալ հնարավորությունը կիրառելուց ձեռնպահ մնալու վերաբերյալ որոշում ընդունող անդամ պետությունները պետք է հաշվի առնեն: Որպես էներգաարդյունավետության ազգային նախաձեռնություններին աջակցելու միջոց՝ էներգաարդյունավետության մասով պարտավորությունների

ազգային սխեմաների համաձայն պարտավորություններ ստանձնած կողմերը կարող են իրենց պարտավորությունները կատարել՝ որպես տարեկան օժանդակություն էներգաարդյունավետության ազգային հիմնադրամին սխեմայով պահանջվող ներդրումների չափին համարժեք գումար փոխանցելով.

- 21) պետական ֆինանսական միջոցների կայունությունը վերականգնելու եւ հարկաբյուջետային կոնսոլիդացիայի համընդգրկուն պահանջը հաշվի առնելով՝ սույն հրահանգի շրջանակներում կարգավորվող որոշակի միջոցառումներ իրականացնելիս անհրաժեշտ է պատշաճ ուշադրություն դարձնել անդամ պետության մակարդակով էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումներն իրականացնելու ծախսարդյունավետությանը՝ համապատասխան մակարդակի վերլուծության եւ գնահատման հիման վրա.
- 22) վերջնական սպառողներին տարեկան վաճառվող էներգիայի՝ էներգիայի վաճառքի ծավալներին համարժեք խնայում ապահովելու պահանջը չի համարվում էներգիայի վաճառքի կամ էներգասպառման վերին սահմանը: Անդամ պետությունները պետք է կարողանան, ըստ ծավալի, բացառել ամբողջ էներգիայի կամ դրա մի մասի վաճառքը, որն օգտագործվել է Համայնքի տարածքում ջերմոցային գազերի արտահանումների քվոտաների առեստրի համակարգ սահմանող՝ Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2003 թվականի հոկտեմբերի 13-ի 2003/87/ԵՀ հրահանգի⁹ I հավելվածում թվարկված արդյունաբերական գործունեության տեսակների ընթացքում՝ վերջնական սպառողներին վաճառվող էներգիան հաշվարկելու նպատակով, քանի որ հայտնի է, որ այդ գործունեության տեսակների որոշ ճյուղեր կամ ենթաճյուղեր կարող են ենթարկվել ածխածնի արտահոսքի էական ռիսկի: Նպատակահարմար է, որ անդամ պետությունները տեղյակ լինեն համակարգերի հետ կապված

⁹⁾ ՊՏ L 275, 25.10.2003 թ., էջ 32:

ծախսերի մասին, որպեսզի կարողանան ճշգրտորեն հաշվարկել միջոցառումների հետ կապված ծախսերը.

- 23) չսահմանափակելով 7-րդ հոդվածով նախատեսվող պահանջները եւ վարչական բեռը թեթեւացնելու համար յուրաքանչյուր անդամ պետություն կարող է 7-րդ հոդվածի պահանջները կատարելու նպատակով քաղաքականության բոլոր առանձին միջոցառումներն ընդգրկել էներգաարդյունավետության ազգային համապարփակ ծրագրի մեջ.
- 24) շուկայի որոշակի հատվածներում, որտեղ, առեստրային շահերը հաշվի առնելով, սովորաբար չեն առաջարկվում էներգետիկ աուդիտներ (ինչպիսիք են փոքր եւ միջին ձեռնարկությունները (ՓՄՁ-ներ)), առկա էներգախնայողության ներուժն օգտագործելու նպատակով անդամ պետությունները պետք է մշակեն այնպիսի ծրագրեր, որոնք կխրախուսեն ՓՄՁ-ներին անցնել էներգետիկ աուդիտ: Էներգետիկ աուդիտները պետք է պարտադիր եւ կանոնավոր կերպով անցկացվեն խոշոր ձեռնարկություններում, քանի որ դրանց էներգախնայողությունը կարող է զգալի լինել: Էներգետիկ աուդիտներ անցկացնելիս պետք է հաշվի առնել համապատասխան եվրոպական կամ միջազգային չափանիշները, ինչպիսիք են ՀՄՍ ԻՍՕ 50001-ը (Էներգակառավարման համակարգեր), ՀՄՍ 16247-1-ը (Էներգետիկ աուդիտ) կամ էներգետիկ աուդիտ ներառելու դեպքում՝ ՀՄՍ ԻՍՕ 14000-ը (Շրջակա միջավայրի կառավարման համակարգեր), եւ հետեւաբար այդ աուդիտները պետք է համապատասխանեն սույն հրահանգի VI հավելվածի դրույթներին, քանի որ այդ դրույթները չեն խախտում այդ համապատասխան չափանիշների պահանջները: Ներկայումս մշակման փուլում է գտնվում էներգետիկ աուդիտների վերաբերյալ կոնկրետ եվրոպական չափանիշը.
- 25) եթե էներգետիկ աուդիտներն անցկացվում են միայն ներքին փորձագետների կողմից, ապա անհրաժեշտ անկախությունն ապահովելու

նպատակով պահանջվում է, որ այդ փորձագետներն անմիջականորեն չընդգրկվեն աուդիտի ենթարկվող գործունեության մեջ.

- 26) էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումներ մշակելիս պետք է հաշվի առնել այնպիսի ծախսարդյունավետ տեխնոլոգիական նորարարությունների լայն կիրառման միջոցով ձեռք բերված արդյունավետության ցուցանիշներն ու խնայողությունները, ինչպիսիք են խելացի չափիչ սարքերը: Խելացի չափիչ սարքեր տեղադրելու դեպքում դրանք ընկերությունների կողմից չպետք է օգտագործվեն առանց հիմնավորման հետին թվով հաշվարկների համար.
- 27) ինչ վերաբերում է էլեկտրաէներգիային, Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի՝ «Էլեկտրաէներգիայի ներքին շուկայի ընդհանուր կանոնների մասին» 2009 թվականի հուլիսի 13-ի 2009/72/ԵՀ հրահանգին համապատասխան¹⁰ այն դեպքում, երբ խելացի չափիչ սարքերի գործադրումը գնահատվում է դրական, ապա մինչեւ 2020 թվականը սպառողների առնվազն 80 տոկոսի մոտ պետք է տեղադրվեն չափման բանական համակարգեր: Ինչ վերաբերում է գազին, Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի՝ «Բնական գազի ներքին շուկայի ընդհանուր կանոնների մասին» 2009 թվականի հուլիսի 13-ի 2009/73/ԵՀ հրահանգին համապատասխան¹¹ այն դեպքում, երբ չափման բանական համակարգերի գործադրումը գնահատվում է դրական, ապա անդամ պետությունները կամ նրանց կողմից նշանակված ցանկացած իրավասու մարմին պետք է մշակի չափման բանական համակարգերի ներդրման ժամանակացույց.
- 28) տարածքային ջեռուցմամբ կամ կենտրոնական ջեռուցմամբ ապահովված բազմաբնակարան շենքերում ջերմության առանձին սպառումը չափելու նպատակով առանձին չափիչ սարքերի կամ սպառված ջերմային էներգիայի բաշխիչների օգտագործումն արդյունավետ է, երբ վերջնական սպառողներն

¹⁰ ՊՏ L 211, 14.8.2009 թ., էջ 55:

¹¹ ՊՏ L 211, 14.8.2009 թ., էջ 94:

իրենց իսկ առանձին սպառումը վերահսկելու հնարավորություն ունեն: Հետևաբար դրանց օգտագործումը տեղին է միայն այնպիսի շենքերում, որտեղ ռադիատորների վրա տեղադրված են ռադիատորների ջերմապահպանիչ կափույրներ.

29) տարածքային ջեռուցմամբ կամ կենտրոնական ջեռուցմամբ ապահովված որոշ բազմաբնակարան շենքերում ջերմության առանձին ճշգրիտ չափիչ սարքերի օգտագործումը տեխնիկապես բարդ է եւ ծախսատար, քանի որ ջեռուցման համար օգտագործվող տաք ջուրը բնակարաններ մտնում եւ դուրս է գալիս մի քանի կետերով: Կարելի է ենթադրել, որ ջերմության սպառման առանձին չափումը բազմաբնակարան շենքերում, այնուամենայնիվ, տեխնիկապես հնարավոր է այն դեպքում, երբ առանձին չափիչ սարքերը տեղադրելիս չի պահանջվում կատարել շենքի տաք ջրամատակարարման համակարգի գոյություն ունեցող ներքին խողովակաշարերի փոփոխություններ: Այդպիսի շենքերում ջերմության առանձին սպառման չափումները կարող են իրականացվել յուրաքանչյուր ռադիատորի վրա տեղադրված՝ սպառված ջերմության առանձին բաշխիչի միջոցով.

30) 2006/32/ԵՀ հրահանգով անդամ պետություններից պահանջվում է վերջնական սպառողներին տրամադրել մրցակցային գներ ունեցող այնպիսի առանձին չափիչ սարքեր, որոնք ճշգրտորեն կարտացոլեն նրանց կողմից փաստացի սպառված էներգիան եւ տեղեկություններ կտրամադրեն օգտագործման իրական ժամանակահատվածի վերաբերյալ: Մեծամասամբ, այդ պահանջը կարող է կատարվել այն դեպքում, երբ դա տեխնիկապես հնարավոր է եւ ֆինանսական առումով ողջամիտ, ինչպես նաեւ համարժեք է հնարավոր էներգախնայողությանը: Այնուամենայնիվ, երբ նոր շենքում 2010/31/ԵՄ հրահանգով սահմանված կապի միացումներ կամ հիմնանորոգումներ են իրականացվում, այդպիսի առանձին չափիչ սարքերը պետք է մշտապես տրամադրվեն: 2006/32/ԵՀ հրահանգով նաեւ

պահանջվում է սպառման փաստացի ծավալների հիման վրա հստակ հաշիվներ ներկայացնել այնպիսի հաճախականությամբ, որը բավարար կլինի սպառողների կողմից սեփական էներգոգտագործումը կարգավորելու համար.

31) 2009/72/ԵՀ եւ 2009/73/ԵՀ հրահանգներով անդամ պետություններից պահանջվում է ներդնել չափման բանական համակարգեր՝ էլեկտրաէներգիայի եւ գազի մատակարարման շուկաներում սպառողների ակտիվ մասնակցությանն օժանդակելու նպատակով: Ինչ վերաբերում է էլեկտրաէներգիային, այն դեպքում, երբ պարզվում է, որ խելացի չափիչ սարքերի գործադրումը ծախսարդյունավետ է, ապա մինչեւ 2020 թվականը սպառողների առնվազն 80 տոկոսի մոտ պետք է տեղադրվեն չափման բանական համակարգեր: Ինչ վերաբերում է բնական գազին, վերջնաժամկետ սահմանված չէ, սակայն պահանջվում է մշակել ժամանակացույց: Այդ հրահանգներում նաեւ նշվում է, որ վերջնական սպառողները պետք է պատշաճ ձեւով տեղեկացվեն էլեկտրականության (գազի) սպառման փաստացի ծավալի եւ ծախսերի մասին այնպիսի հաճախականությամբ, որը բավարար կլինի իրենց կողմից սեփական սպառումը կարգավորելու համար.

32) 2006/32/ԵՀ եւ 2009/72/ԵՀ հրահանգներում ներառված՝ չափման եւ հաշիվներ ներկայացնելու վերաբերյալ, ինչպես նաեւ 2009/73/ԵՀ հրահանգում ներառված՝ էներգախնայողության վերաբերյալ դրույթների ազդեցությունը սահմանափակվել է: Միության շատ հատվածներում այդ դրույթները չեն հանգեցրել սպառողների կողմից իրենց էներգասպառման վերաբերյալ թարմացված տեղեկություններ ստանալուն կամ սպառման փաստացի ծավալների հիման վրա հստակ հաշիվներ ստանալուն այնպիսի հաճախականությամբ, որը, ըստ ուսումնասիրությունների, անհրաժեշտ է սպառողներին սեփական էներգասպառումը կարգավորելու հնարավորություն տալու համար:

Այդ դրույթների ոչ բավարար հստակությունը տարածքների ջեռուցման եւ բազմաբնակարան շենքերում տաք ջրամատակարարման ոլորտներում նաեւ հանգեցրել է քաղաքացիներից ստացված բազմաթիվ բողոքների.

33) վերջնական սպառողների համար իրենց սեփական էներգասպառման ծավալների չափման եւ հաշիվների ներկայացման միջոցով ստացվող տեղեկատվության մատչելիության մասով աջակցությունը մեծացնելու նպատակով, ինչպես նաեւ նկատի ունենալով անդամ պետություններում չափման բանական համակարգերի ներդրման եւ խելացի չափիչ սարքերի գործադրման գործընթացին առնչվող հնարավորությունները՝ կարելու է հստակեցնել Միության՝ այդ ոլորտին վերաբերող օրենսդրությունը: Դա պետք է օգնի նվազեցնել չափման այնպիսի բանական համակարգերի ներդրման հետ կապված ծախսերը, որոնք ունեն էներգախնայողության ծավալը մեծացնող գործառույթներ, ինչպես նաեւ պետք է նպաստի էներգետիկ ծառայությունների շուկաների եւ պահանջարկի կառավարման զարգացմանը: Չափման բանական համակարգերի ներդրումը հնարավորություն է տալիս սպառման փաստացի ծավալների հիման վրա հաճախակի հաշիվներ ներկայացնել: Այնուամենայնիվ, նաեւ անհրաժեշտություն կա հստակեցնելու տեղեկատվության մատչելիության եւ սպառման փաստացի ծավալների հիման վրա պարզ եւ ճշգրիտ հաշիվներ ներկայացնելու հետ կապված պահանջներն այն դեպքերում, երբ խելացի չափիչ սարքերը հասանելի չլինեն մինչեւ 2020 թվականը, այդ թվում՝ բազմաբնակարան շենքերում տեղադրված տարածքային ջեռուցման (հովացման) կամ սեփական կենտրոնական ջեռուցման համակարգերի միջոցով այդ շենքերին մատակարարվող ջեռուցման, հովացման եւ տաք ջրամատակարարման առանձին սպառման ծավալների չափման եւ դրանց վերաբերյալ հաշիվների ներկայացման նկատմամբ պահանջները.

34) էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումներ մշակելիս անդամ պետությունները պետք է պատշաճորեն հաշվի առնեն

ներքին շուկայի ճիշտ աշխատանքն ապահովելու անհրաժեշտությունը եւ միասնական նորմատիվային բազայի հետեւողական կիրառումը՝ «Եվրոպական միության գործունեության մասին» պայմանագրին համապատասխան.

- 35) բարձր արդյունավետություն ապահովող համակցված արտադրության եւ տարածքային ջեռուցման ու հովացման ոլորտում առկա է առաջնային էներգիայի խնայման զգալի ներուժ, որը հիմնականում չի օգտագործվում Միությունում: Անդամ պետությունները պետք է բարձր արդյունավետություն ապահովող համակցված արտադրության եւ տարածքային ջեռուցման ու հովացման ոլորտներում առկա ներուժի համապարփակ գնահատում իրականացնեն: Այդ գնահատումները Հանձնաժողովի պահանջով պետք է թարմացվեն՝ ներդրողներին զարգացման ազգային ծրագրերի վերաբերյալ տեղեկություններ տրամադրելու եւ կայուն ու բարենպաստ ներդրումային միջավայրի զարգացմանը նպաստելու համար:

Էլեկտրաէներգիա արտադրող նոր կայանքներն ու գործող կայանքները, որոնք էականորեն բարեկարգվել են, կամ որոնց թույլտվությունը կամ արտոնագիրը թարմացվել է, պետք է ծախսերի եւ օգուտների վերլուծության արդյունքում ի հայտ եկած ծախսերի եւ օգուտների ավելցուկի դեպքում զինվեն բարձր արդյունավետություն ապահովող համակցված արտադրության տեղակայանքներով՝ էլեկտրաէներգիայի արտադրությունից արտանետվող ջերմությունն օգտագործելու նպատակով: Հետո արտանետվող այդ ջերմությունը կարելի է տարածքային ջեռուցման ցանցերով տեղափոխել այնտեղ, որտեղ դրա անհրաժեշտությունը զգացվում է: Այն իրադարձությունները, որոնք լիազորման չափանիշներ կիրառելու պահանջ են առաջացնում, սովորաբար այնպիսի իրադարձություններ են, որոնք նաեւ պահանջներ են առաջացնում Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի՝

«Արդյունաբերական արտանետումների մասին» 2010 թվականի նոյեմբերի 24-ի 2010/75/ԵՄ հրահանգով¹² նախատեսված թույլտվությունների համար.

36) ատոմային էներգիայի կամ էլեկտրաէներգիա արտադրող այնպիսի կայանքների դեպքում, որոնցով նախատեսվում է իրականացնել Եվրոպական պառլամենտի և Խորհրդի՝ «Ածխաթթու գազի ստորերկրյա պահեստավորման մասին» 2009 թվականի ապրիլի 23-ի 2009/31/ԵՀ հրահանգով¹³ թույլատրված ստորերկրյա պահեստավորումը, կարող է նպատակահարմար լինել գտնվելու այնպիսի վայրերում, որտեղ արտանետվող ջերմության վերականգնումը բարձր արդյունավետություն ապահովող համակցված արտադրության կամ տարածքային ջեռուցման կամ հովացման ցանցի ապահովման շնորհիվ ծախսարդյունավետ չէ: Անդամ պետությունները, հետեւաբար, պետք է կարողանան այդ կայանքներն ազատել ծախսերի և օգուտների վերլուծություն իրականացնելու պարտավորությունից՝ կայանքի համար այնպիսի սարքավորումներ ապահովելով, որոնք թույլ կտան բարձր արդյունավետություն ապահովող համակցված արտադրության տեղակայանքի միջոցով օգտագործել արտանետվող ջերմությունը: Պետք է նաեւ հնարավոր լինի ջերմություն ապահովելու պահանջից ազատել էլեկտրաէներգիա արտադրող գերծանրաբեռնված և վթարային նշանակության էլեկտրաէներգիա արտադրող այն կայանքները, որոնք, ըստ նախատեսվածի, հինգ տարի ժամանակահատվածում որպես սահող միջին պետք է տարեկան շահագործվեն 1500 ժամ.

37) նպատակահարմար է, որ անդամ պետությունները խրախուսեն 20 ՄՎտ-ից պակաս ընդհանուր գնահատված ջերմային հզորություն ունեցող համակցված արտադրության կայանքները խթանող

¹² ՊՏ L 334, 17.12.2010 թ., էջ 17:

¹³ ՊՏ L 140, 5.6.2009 թ., էջ 114:

միջոցառումների եւ ընթացակարգերի կիրառումը՝ էներգիայի բաշխված արտադրությունը խրախուսելու նպատակով.

- 38) բարձր արդյունավետություն ապահովող համակցված արտադրությունը պետք է սահմանվի էներգախնայողությամբ, որը տեղի է ունեցել համակցված արտադրության, այլ ոչ թե ջերմության եւ էլեկտրաէներգիայի առանձին արտադրության միջոցով: Համակցված արտադրության եւ բարձր արդյունավետություն ապահովող համակցված արտադրության՝ Միության օրենսդրությունում օգտագործված սահմանումները չպետք է սահմանափակեն ազգային օրենսդրությունում տարբեր սահմանումների օգտագործումը Միության համապատասխան օրենսդրությամբ սահմանված նպատակներից բացի այլ նպատակներով: Էներգախնայողության ծավալն առավելագույնի հասցնելու եւ էներգախնայողության հնարավորությունների բացթողումից խուսափելու նպատակով հնարավորինս մեծ ուշադրություն պետք է դարձվի համակցված արտադրության տեղակայանքների շահագործման պայմաններին.
- 39) համակցված արտադրությամբ եւ այլ մեթոդներով արտադրված էլեկտրաէներգիայի միջեւ վերջնական սպառողի ընտրության թափանցիկությունը մեծացնելու նպատակով անհրաժեշտ է արդյունավետության ներդաշնակեցված բազային (հղումային) արժեքների հիման վրա երաշխավորել բարձր արդյունավետություն ապահովող համակցված արտադրության ծագումը: Ծագման երաշխիք տրամադրելու համակարգերն ինքնին չեն ենթադրում պետական աջակցության մեխանիզմներից օգտվելու իրավունքի շնորհում: Կարելու է, որ բարձր արդյունավետություն ապահովող համակցված արտադրությամբ արտադրվող էլեկտրաէներգիայի բոլոր ձեւերն ունենան ծագման երաշխիքներ: Անհրաժեշտ է ծագման երաշխիքները տարբերակել փոխանակելի հավաստագրերից.

- 40) համակցված արտադրության, տարածքային ջեռուցման եւ հովացման ոլորտների՝ փոքր եւ միջին արտադրողներ ներառող յուրահատուկ կառուցվածքը պետք է հաշվի առնվի հատկապես համակցված արտադրական հզորություն կամ փոխկապակցված ցանցեր կառուցելու համար թույլտվություն ստանալու վարչական ընթացակարգերը վերանայելու ժամանակ՝ որպես «Սկզբում փոքրերի մասին մտածիր» սկզբունքի կիրառում.
- 41) Միության ձեռնարկությունների մեծամասնությունը ՓՄՁ-ներ են: Դրանք Միությունում էներգախնայողության մեծ ներուժ ունեն: Վերջիններիս էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումներ ընդունելու հարցում օգնություն ցուցաբերելու նպատակով անդամ պետությունները պետք է ՓՄՁ-ներին տեխնիկական աջակցություն եւ նպատակային տեղեկատվություն տրամադրելուն ուղղված նպաստավոր դաշտ ստեղծեն.
- 42) 2010/75/ԵՄ հրահանգում էներգաարդյունավետությունը ներառված է լավագույն հասանելի մեթոդները որոշելու չափանիշների շարքում, որոնք պետք է ծառայեն որպես հղում՝ դրա շրջանակներում կարգավորվող կայանքների, այդ թվում՝ 50 կամ ավելի ՄՎտ ընդհանուր գնահատված ջերմային հզորություն ունեցող այրման կայանքների համար թույլտվության պայմաններ սահմանելու նպատակով: Սակայն այդ հրահանգն անդամ պետություններին հնարավորություն է տալիս 2003/87/ԵՀ հրահանգի I հավելվածում թվարկված գործունեության տեսակների համար պահանջներ չսահմանել այրման կայանքների կամ այդ տարածքում ածխաթթու գազ արտանետող այլ կայանքների էներգաարդյունավետության վերաբերյալ: Անդամ պետությունները կարող են էներգաարդյունավետության մակարդակների վերաբերյալ տեղեկությունները ներառել իրենց կողմից 2010/75/ԵՄ հրահանգին համապատասխան ներկայացվող հաշվետվության մեջ.

43) անդամ պետությունները պետք է օբյեկտիվ, թափանցիկ եւ ոչ խտրական չափանիշների հիման վրա սահմանեն ցանցային միացումների եւ ցանցի վերաշահագործման հետ կապված ծախսերը կրելու եւ կիսելու գործընթացը կարգավորող կանոններ, ինչպես նաեւ բարձր արդյունավետություն ապահովող համակցված արտադրությամբ արտադրվող էլեկտրաէներգիայի նոր արտադրողներին ինտեգրելու համար անհրաժեշտ տեխնիկական համապատասխանեցումների վերաբերյալ կանոններ՝ հաշվի առնելով Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի՝ «Էլեկտրաէներգիայի միջսահմանային փոխանակման ցանցին միանալու պայմանների մասին» 2009 թվականի հուլիսի 13-ի թիվ 714/2009 կանոնակարգի (ԵՀ)¹⁴ ու Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի «Բնական գազի փոխադրման ցանցերի հասանելիության պայմանների մասին» 2009 թվականի հուլիսի 13-ի թիվ 715/2009 կանոնակարգի (ԵՀ)¹⁵ համաձայն մշակված ուղեցույցներն ու օրենսգրքերը: Բարձր արդյունավետություն ապահովող համակցված արտադրությամբ ստացվող էլեկտրաէներգիա արտադրողներին պետք է թույլատրել միացման աշխատանքների մրցույթի հայտարարություն ներկայացնել: Բարձր արդյունավետություն ապահովող համակցված արտադրությամբ արտադրվող էլեկտրաէներգիայի, մասնավորապես՝ համակցված արտադրության փոքրամասշտաբ եւ միկրո տեղակայանքների համար ցանցային համակարգի հասանելիության հնարավորություններից օգտվելը պետք է դյուրացվի: 2009/72/ԵՀ հրահանգի 3(2) հոդվածին եւ 2009/73/ԵՀ հրահանգի 3(2) հոդվածին համապատասխան՝ անդամ պետությունները կարող են էլեկտրաէներգիայի եւ գազի ոլորտներում ծառայություններ մատուցող ընկերությունների վրա հանրային սպասարկման պարտավորություններ դնել, այդ թվում՝ էներգաարդյունավետության առնչությամբ.

¹⁴ ՊՏ L 211, 14.8.2009 թ., էջ 15:

¹⁵ ՊՏ L 211, 14.8.2009 թ., էջ 36:

- 44) պահանջարկի կարգավորումն էներգաարդյունավետությունը բարձրացնելու կարելի գործիք է, քանի որ այն զգալիորեն մեծացնում է սպառողների կամ նրանց կողմից նշանակված երրորդ կողմերի՝ սպառման եւ հաշիվների վերաբերյալ տեղեկությունների մասով գործողություններ ձեռնարկելու հնարավորությունները եւ հետեւաբար ապահովում է մեխանիզմ՝ սպառումը նվազեցնելու կամ սպառման մոդելները վերափոխելու համար՝ հանգեցնելով էներգախնայողության ինչպես վերջնական սպառման ժամանակ, այնպես էլ ցանցերի եւ արտադրական ակտիվների ավելի օպտիմալ օգտագործման միջոցով՝ էներգիայի արտադրության, հաղորդման ու բաշխման ժամանակ.
- 45) պահանջարկի կարգավորումը կարող է հիմնված լինել վերջնական սպառողների՝ գնային ազդանշանների կամ շենքերի ավտոմատացման վերաբերյալ արձագանքների վրա: Պետք է բարելավվեն պահանջարկի կարգավորման պայմաններն ու դրանց մատչելիությունը, այդ թվում՝ փոքր վերջնական սպառողների համար: Հաշվի առնելով խելացի ցանցերի շարունակական կիրառությունը՝ անդամ պետությունները պետք է այնպես անեն, որ էներգետիկայի ոլորտը կարգավորող ազգային մարմինները հնարավորություն ունենան ապահովելու, որ ցանցային սակագներն ու կանոնակարգերը խթանեն էներգաարդյունավետության բարձրացումը, ինչպես նաեւ աջակցելու վերջնական սպառողների կողմից պահանջարկի կարգավորման միջոցառումների համար համապատասխան դինամիկ գնագոյացմանը: Արտադրության հետ մեկտեղ պետք է հետամուտ լինել պահանջարկի ռեսուրսների (մատակարարման եւ սպառման բեռի)՝ շուկային ինտեգրվելու եւ շուկա մուտք գործելու հավասար հնարավորություններին: Բացի այդ, անդամ պետությունները պետք է ապահովեն էներգետիկայի ոլորտը կարգավորող ազգային մարմինների կողմից միասնական մոտեցման կիրառումը, ինչն ընդգրկում է էներգիայի մատակարարման եւ վերջնական սպառման ոլորտներում հնարավոր էներգախնայողությունը.

- 46) սույն հրահանգի արդյունավետ եւ ժամանակին կիրարկումն ապահովելու նպատակով պետք է հասանելի լինեն էներգաարդյունավետության ոլորտի բավարար թվով վստահելի եւ արհեստավարժ մասնագետներ, օրինակ՝ էներգետիկ աուդիտների եւ էներգաարդյունավետության մասով պարտավորությունների սխեմաների իրականացման պահանջները բավարարելու համար: Անդամ պետությունները, հետեւաբար, պետք է էներգետիկ ծառայություններ մատուցողների, էներգետիկ աուդիտներ եւ էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված այլ միջոցառումներ իրականացնողների համար նախատեսված հավաստագրման համակարգեր ներդնեն.
- 47) անհրաժեշտ է շարունակաբար զարգացնել էներգետիկ ծառայությունների շուկան՝ էներգետիկ ծառայությունների առաջարկն ու պահանջարկն ապահովելու նպատակով: Օրինակ՝ էներգետիկ ծառայություններ մատուցողների ցանկի միջոցով ապահովվող թափանցիկությունը կարող է նպաստել վերոնշյալին: Օրինակելի պայմանագրերը, լավագույն գործելակերպի եւ ուղեցույցների փոխանակումը, մասնավորապես՝ էներգաարդյունավետության բարձրացման վերաբերյալ պայմանագրերի կնքումը նույնպես կարող է օգնել պահանջարկը խթանելու հարցում: Ինչպես երրորդ կողմի կողմից ֆինանսավորման պայմանավորվածությունների այլ ձեւերի, այնպես էլ էներգաարդյունավետության բարձրացման վերաբերյալ պայմանագրի դեպքում էներգետիկ ծառայության շահառուն խուսափում է ներդրումային ծախսերից՝ օգտագործելով էներգախնայողության ֆինանսական արժեքի մի մասը՝ երրորդ կողմի կողմից ամբողջությամբ կամ մասնակիորեն կատարված ներդրման գումարը վերադարձնելու նպատակով.
- 48) անհրաժեշտ է վերհանել եւ վերացնել էներգաարդյունավետության բարձրացման վերաբերյալ պայմանագրերի կնքման եւ էներգախնայողության վերաբերյալ երրորդ կողմի կողմից ֆինանսավորման

պայմանավորվածությունների կիրառման օրենսդրական եւ ոչ օրենսդրական խոչընդոտները: Այդ խոչընդոտները ներառում են հաշվապահական հաշվառման վարման կանոններն ու այն գործելակերպերը, որոնք կանխում են էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումներից բխող կապիտալ ներդրումների ու ֆինանսական միջոցների տարեկան խնայումների պատշաճ արտացոլումը հաշիվներում ներդրման ամբողջ ժամանակահատվածում: Գոյություն ունեցող շենքային ֆոնդի վերանորոգման հետ կապված խոչընդոտներին, որոնք պայմանավորված են տարբեր շահագրգիռ դերակատարների միջեւ դրդապատճառների հարցում առկա հակասություններով, նույնպես պետք է ազգային մակարդակով լուրջ անդրադարձ կատարվի.

- 49) անդամ պետություններին եւ տարածաշրջաններին պետք է խրախուսել կառուցվածքային հիմնադրամներից եւ Համախմբվածության հիմնադրամից լիարժեք օգտվելու հարցում՝ էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումներին ուղղված ներդրումները խթանելու նպատակով: Էներգաարդյունավետության բնագավառում ներդրումները տնտեսական աճին, զբաղվածությանը, նորարարությանն ու տնային տնտեսություններում վառելիքի սակավության նվազեցմանը նպաստելու ներուժ ունեն, եւ հետեւաբար դրանք դրական ազդեցություն են գործում տնտեսական, սոցիալական եւ տարածքային համախմբվածության վրա: Ֆինանսավորման հնարավոր բնագավառները ներառում են հանրային շենքերում եւ բնակարաններում իրականացվող էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումները, ինչպես նաեւ էներգաարդյունավետության ոլորտում զբաղվածությունը խթանելու նպատակով նոր հմտությունների ապահովումը.
- 50) անդամ պետությունները սույն հրահանգի նպատակներն իրականացնելու համար պետք է խրախուսեն ֆինանսավորման գործիքների կիրառումը: Այդպիսի ֆինանսավորման գործիքները կարող են ներառել ֆինանսական

ներդրումներ եւ սույն հրահանգի որոշակի դրույթները չկատարելու համար գանձվող տուգանքներ, 2003/87/ԵՀ հրահանգի 10(3) հոդվածի համաձայն էներգաարդյունավետության համար հատկացված ռեսուրսներ, ֆինանսական զարգացման բազմամյա ծրագրի համաձայն էներգաարդյունավետության համար հատկացված ռեսուրսներ, մասնավորապես՝ համախմբվածության, կառուցվածքային եւ գյուղական տարածքների զարգացման հիմնադրամներ, ինչպես նաեւ այնպիսի հատուկ եվրոպական ֆինանսական գործիքներ, ինչպիսին է Եվրոպայի էներգաարդյունավետության հիմնադրամը.

51) ֆինանսավորման գործիքներն անհրաժեշտության դեպքում կարող են հիմնված լինել Միության ծրագրային պարտատոմսերից էներգաարդյունավետության համար հատկացված ռեսուրսների, Եվրոպական ներդրումային բանկից եւ այլ եվրոպական ֆինանսական հաստատություններից, մասնավորապես՝ Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկից եւ Եվրոպայի խորհրդի զագացման բանկից էներգաարդյունավետության համար հատկացված ռեսուրսների, ֆինանսական հաստատություններում լիարժեքորեն օգտագործվող ռեսուրսների, ինչպես նաեւ ազգային ռեսուրսների վրա, այդ թվում՝ կարգավորման եւ հարկաբյուջետային այնպիսի դաշտ ստեղծելու միջոցով, որը կխրախուսի էներգաարդյունավետությանն ուղղված նախաձեռնություններն ու ծրագրերը, ինչպես նաեւ թիվ 406/2009/ԵՀ որոշմամբ նախատեսված սահմանային թույլատրելի տարեկան արտանետումներից ստացվող եկամուտների վրա.

52) ֆինանսավորման գործիքներով այդ ներդրումները, ռեսուրսները եւ եկամուտները մասնավորապես կարող են օգտագործվել մասնավոր կապիտալի ներդրումները հնարավոր դարձնելու եւ խրախուսելու նպատակով՝ հատկապես միջազգային ներդրողների վրա հենվելու միջոցով՝ միեւնույն ժամանակ դրամական միջոցներ տրամադրելիս կիրառելով

ինչպես բնապահպանական, այնպես էլ սոցիալական նպատակների իրականացումն ապահովող չափանիշներ. այդ գործիքների դեպքում կարելի է օգտվել ֆինանսավորման նորարարական մեխանիզմներից (օր.՝ վարկային երաշխիքներ՝ մասնավոր կապիտալի համար, էներգաարդյունավետության բարձրացման վերաբերյալ պայմանագրերի կնքումը խթանելու նպատակով տրվող վարկային երաշխիքներ, դրամաշնորհներ, սուբսիդավորված վարկեր եւ նպատակային վարկային գծեր, երրորդ կողմի կողմից ֆինանսավորման համակարգեր), որոնք նվազեցնում են էներգաարդյունավետությանն ուղղված ծրագրերի ռիսկերը եւ թույլ են տալիս ծախսարդյունավետ վերանորոգումներ իրականացնել նույնիսկ ցածր եւ միջին եկամուտ ունեցող տնային տնտեսություններում: Այդ գործիքները կարելի է կապել այնպիսի ծրագրերի կամ գերատեսչությունների հետ, որոնք կամբողջացնեն եւ կգնահատեն էներգախնայողության ծրագրերի որակը, տեխնիկական աջակցություն կտրամադրեն, կխթանեն էներգետիկ ծառայությունների շուկան, ինչպես նաեւ կօժանդակեն էներգետիկ ծառայությունների նկատմամբ սպառողների շրջանում պահանջարկ առաջացնելու հարցում.

- 53) ֆինանսավորման գործիքներով նաեւ կարող են տրամադրվել համապատասխան ռեսուրսներ՝ էներգաարդյունավետության հետ կապված հմտություններ ապահովող եւ դրանք բարելավող վերապատրաստման ու հավաստագրման օժանդակ ծրագրերին նպաստելու համար, ռեսուրսներ՝ էներգիա արտադրող փոքրամասշտաբ եւ միկրո տեխնոլոգիաների կիրառության վերաբերյալ ուսումնասիրություններ անցկացնելու, դրանց կիրառությունը ցուցադրելու եւ խթանելու, ինչպես նաեւ ցանցին այդ գեներատորների միացումներն օպտիմալացնելու համար: Այդ գործիքները կարելի է կապել այնպիսի ծրագրերի հետ, որոնցով բոլոր բնակավայրերում էներգաարդյունավետության խթանմանն ուղղված գործողություններ են իրականացվում՝ էներգիայի սակավությունը կանխելու եւ բնակավայրերը

լքող տանտերերին իրենց գույքը հնարավորինս էներգաարդյունավետ դարձնելու հարցում խրախուսելու նպատակով: Գործիքներով կարող են տրամադրվել համապատասխան ռեսուրսներ՝ սոցիալական երկխոսությանն աջակցելու, ինչպես նաև էներգաարդյունավետությունը բարձրացնելուն եւ լավ աշխատանքային պայմաններ, աշխատանքի վայրում առողջության եւ անվտանգության պահպանումն ապահովելուն նպատակաուղղված չափանիշներ սահմանելուն աջակցելու նպատակով.

54) Միության հասանելի ֆինանսական գործիքներն ու ֆինանսավորման նորարարական մեխանիզմները պետք է օգտագործվեն պետական մարմիններին պատկանող շենքերի էներգաարդյունավետությունը բարձրացնելու նպատակին գործնական կիրառում հաղորդելու համար: Այդ առնչությամբ անդամ պետությունները կարող են այդպիսի մեխանիզմների մշակման համար կամավոր հիմունքներով օգտագործել թիվ 406/2009/ԵՀ որոշմամբ նախատեսված սահմանային թույլատրելի տարեկան արտանետումներից ստացվող իրենց եկամուտները՝ հաշվի առնելով ազգային բյուջետային կանոնները.

55) 20 տոկոս կազմող էներգաարդյունավետության թիրախն իրականացնելիս Հանձնաժողովը ստիպված կլինի վերահսկել նոր միջոցառումների ազդեցությունը Միության արտանետումների արտոնագրերի վաճառքի համակարգ (ԱԱՀ) սահմանող 2003/87/ԵՀ հրահանգի վրա, որպեսզի արտանետումների արտոնագրերի վաճառքի համակարգում պահպանվեն ածխածնի արտանետումների ցածր մակարդակ ունեցող ձեռնարկություններում ներդրումները քաջալերող եւ ԱԱՀ-ի ոլորտներն ապագայում անհրաժեշտ նորարարություններին պատրաստող խրախուսանքի միջոցները: Անհրաժեշտ է, որ Հանձնաժողովը վերահսկի ազդեցությունն արդյունաբերության այն ոլորտների վրա, որոնք ածխածնի արտահոսքի զգալի վտանգի տակ են, ինչպես սահմանված է Հանձնաժողովի՝ 2009 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 2010/2/ԵՄ

որոշմամբ, որը Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2003/87/ԵՀ հրահանգի համաձայն¹⁶ սահմանում է այն ոլորտների և ենթաօլորտների ցանկը, որոնք ենթադրաբար ածխածնի արտահոսքի զգալի վտանգի տակ են՝ այդ ոլորտների զարգացումը սույն հրահանգի միջոցով ապահովելու և դրա կողմից զարգացման խոչընդոտումը կանխելու նպատակով.

- 56) 2006/32/ԵՀ հրահանգով անդամ պետություններից պահանջվում է մինչև 2016 թվականն ընդունել և իրականացնել 9 տոկոս կազմող էներգախնայողության ազգային ինդիկատիվ համընդհանուր թիրախը, որը պետք է ապահովել էներգետիկ ծառայություններ և էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված այլ միջոցառումներ իրականացնելու շնորհիվ: Այդ հրահանգում նշվում է, որ նպատակահարմար լինելու և անհրաժեշտության դեպքում անդամ պետությունների կողմից ընդունված էներգաարդյունավետության գործողությունների երկրորդ ծրագրին պետք է հետեւեն Հանձնաժողովի՝ լրացուցիչ միջոցառումների վերաբերյալ առաջարկությունները, այդ թվում՝ թիրախների կիրառման ժամկետի երկարաձգումը: Եթե զեկույցում եզրակացություն է արվում այն մասին, որ այդ հրահանգով սահմանված ազգային ինդիկատիվ թիրախների իրականացման մասով ոչ բավարար առաջընթաց է արձանագրվել, ապա այդ առաջարկություններում պետք է անդրադարձ կատարվի թիրախների մակարդակին ու բնույթին: Ըստ սույն հրահանգին կից ներկայացվող ազդեցությունների գնահատման՝ անդամ պետությունները 9 տոկոս կազմող թիրախն իրականացնելու ճանապարհին են, որը զգալիորեն պակաս հավակնոտ է, քան հետագայում ընդունված և 2020 թվականի համար նախատեսված՝ 20 տոկոս կազմող էներգախնայողության թիրախը, և հետեւաբար թիրախների մակարդակին անդրադառնալու կարիք չկա.

¹⁶ ՊՏ L 1, 5.1.2010 թ., էջ 10:

- 57) Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի՝ 2006 թվականի հոկտեմբերի 24-ի թիվ 1639/2006/ԵՀ որոշմամբ հաստատված «Էներգիայի խելամիտ օգտագործում — Եվրոպա» ծրագիրը, որով հաստատվում է Մրցակցության եւ նորարարության շրջանակային ծրագիրը (2007-2013 թթ.)¹⁷, կարելի է դիտարկել որպես Միության կայուն էներգիայի վերաբերյալ քաղաքականության պատշաճ իրականացման համար բարենպաստ միջավայր ստեղծելու հարցում այնպիսի շուկայական խոչընդոտներ վերացնելու միջոցով, ինչպիսիք են շուկայի դերակատարների ու հաստատությունների ոչ բավարար իրազեկվածությունն ու կարողությունները, ներքին էներգետիկ շուկայի կամ ոչ զարգացած աշխատաշուկաների պատշաճ գործունեության ազգային տեխնիկական կամ վարչական խոչընդոտները՝ ցածր ածխածնային տնտեսության անցնելու մարտահրավերը հաղթահարելու նպատակով: Այդ խոչընդոտներից շատերը դեռեւս առկա են.
- 58) Էներգասպառող արտադրանքի էներգախնայողության զգալի ներուժն օգտագործելու նպատակով Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի՝ Էներգասպառող արտադրանքին ներկայացվող էկոնախազման պահանջները սահմանող շրջանակ ստեղծող՝ 2009 թվականի հոկտեմբերի 21-ի 2009/125/ԵՀ հրահանգի¹⁸ ու Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի՝ «Էներգասպառող արտադրանքի կողմից էներգիայի եւ այլ աղբյուրների սպառման վերաբերյալ՝ պիտակավորման եւ արտադրանքի¹⁹ ստանդարտ տեխնիկական բնութագրի միջոցով նշում կատարելու մասին» 2010 թվականի մայիսի 19-ի 2010/30/ԵՄ հրահանգի կիրարկումը պետք է խթանել, ինչպես նաեւ ընդլայնել դրա շրջանակը: Նախապատվությունը պետք է տրվի այն արտադրանքին, որն ունի էներգախնայողության ամենամեծ ներուժը, ինչպես սահմանված է

¹⁷ ՊՏ L 310, 9.11.2006 թ., էջ 15:

¹⁸ ՊՏ L 285, 31.10.2009 թ., էջ 10:

¹⁹ ՊՏ L 153, 18.6.2010 թ., էջ 1:

էկոնոմիկայի աշխատանքային պլանով, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում՝ գոյություն ունեցող միջոցառումների լրամշակված տարբերակով.

- 59) որպեսզի հստակեցվեն այն պայմանները, որոնց համաձայն անդամ պետությունները կարող են 2010/31/ԵՄ հրահանգին համապատասխան էներգաարդյունավետության պահանջներ սահմանել՝ միեւնոյն ժամանակ պահպանելով 2009/125/ԵՀ հրահանգի եւ դրա կիրարկումն ապահովող միջոցառումների պահանջները, 2009/125/ԵՀ հրահանգը պետք է համապատասխան փոփոխությունների ենթարկվի.
- 60) քանի որ սույն հրահանգի նպատակը, մասնավորապես՝ Միությունում մինչև 2020 թվականը 20 տոկոս կազմող էներգաարդյունավետության թիրախն ապահովելն ու 2020 թվականին հաջորդող տարիներին էներգաարդյունավետության հետագա բարեփոխումների համար ճանապարհի հարթելն առանց էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված լրացուցիչ միջոցառումներ ձեռնարկելու հնարավոր չէ պատշաճ իրականացնել, եւ դա կարելի է առավել արդյունավետորեն իրականացնել Միության մակարդակով, Միությունը կարող է ընդունել միջոցառումներ՝ «Եվրոպական միության մասին» պայմանագրի 5-րդ հոդվածով նախատեսված սուբսիդիարության սկզբունքին համապատասխան: Այդ հոդվածով սահմանված համաչափության սկզբունքին համապատասխան՝ սույն հրահանգը չի նախատեսում ավելին, քան անհրաժեշտ է նշված նպատակն իրականացնելու համար.
- 61) էներգիայի աղբյուրների բաշխման բնագավառում տեխնիկական առաջընթացին եւ փոփոխություններին համապատասխանեցում թույլ տալու նպատակով «Եվրոպական միության գործունեության մասին» պայմանագրի 290-րդ հոդվածի համաձայն ակտեր ընդունելու լիազորությունը պետք է 2004/8/ԵՀ հրահանգի հիման վրա սահմանված արդյունավետության ներդաշնակեցված բազային (հղումային) արժեքների վերանայման եւ սույն

հրահանգի հավելվածներում ներկայացված արժեքների, հաշվարկման մեթոդների, առաջնային էներգիայի ստանդարտ գործակցի եւ պահանջների մասով պատվիրակվի Հանձնաժողովին: Հատկապես կարելի է, որ Հանձնաժողովն իր կողմից անցկացվող նախապատրաստական աշխատանքների ընթացքում իրականացնի համապատասխան խորհրդատվություններ, այդ թվում՝ փորձագիտական մակարդակով: Պատվիրակված ակտերը նախապատրաստելիս եւ մշակելիս Հանձնաժողովը պետք է ապահովի համապատասխան փաստաթղթերի համաժամանակյա, ժամանակին եւ պատշաճ ձեւով փոխանցումը Եվրոպական պառլամենտին եւ Խորհրդին:

- 62) սույն հրահանգի կիրարկման համար միատեսակ պայմաններ ապահովելու նպատակով կիրարկումն ապահովող լիազորությունները վերապահվում են Հանձնաժողովին: Այդ լիազորություններն իրականացվում են Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2011 թվականի փետրվարի 16-ի թիվ 182/2011 կանոնակարգի (ԵՄ) համաձայն, որով սահմանվում են այն մեխանիզմներին վերաբերող կանոններն ու ընդհանուր սկզբունքները, որոնցով անդամ պետությունները հսկողություն են իրականացնում Հանձնաժողովի կողմից կիրարկումն ապահովող լիազորությունների իրականացման նկատմամբ²⁰.
- 63) 2004/8/ԵՀ եւ 2006/32/ԵՀ հրահանգների բոլոր նորմատիվ դրույթները, բացառությամբ 2006/32/ԵՀ հրահանգի 4(1)-(4) հոդվածների եւ I, III եւ IV հավելվածների, պետք է ուժը կորցրած ճանաչել: Վերոնշյալ դրույթները պետք է շարունակվեն կիրառվել մինչեւ 9 տոկոս կազմող թիրախն իրականացնելու համար նախատեսված ժամկետի ավարտը: 2010/30/ԵՄ հրահանգի 9(1)եւ (2) հոդվածը, որով անդամ պետությունների համար նախատեսվում է էներգաարդյունավետության ամենաբարձր դաս ունեցող արտադրանքի գնմանը միայն ձգտելու պարտավորություն, պետք է հանել:

²⁰ ՊՏ L 55, 28.2.2011 թ., էջ 13:

- 64) Սույն հրահանգն ազգային օրենսդրության մեջ փոխատեղելու պարտավորությունը պետք է սահմանափակվի այն դրույթներով, որոնք, 2004/8/ԵՀ եւ 2006/32/ԵՀ հրահանգների հետ համեմատած, էական փոփոխություններ են կրել: Չփոփոխված դրույթները փոխատեղելու պարտավորությունը բխում է այդ հրահանգներից.
- 65) Սույն հրահանգով չպետք է սահմանափակվեն 2004/8/ԵՀ եւ 2006/32/ԵՀ հրահանգներն ազգային օրենսդրության մեջ փոխատեղելու եւ դրանք կիրառելու ժամկետների վերաբերյալ անդամ պետությունների պարտավորությունները.
- 66) անդամ պետությունների եւ Հանձնաժողովի՝ 2011 թվականի սեպտեմբերի 28-ի բացատրական փաստաթղթերի վերաբերյալ համատեղ քաղաքական հռչակագրի համաձայն՝ անդամ պետությունները պարտավորություն են ստանձնել հիմնավորված դեպքերում իրենց կողմից իրականացվող փոխատեղման միջոցառումների վերաբերյալ ծանուցմանը կից ներկայացնել հրահանգի բաղադրիչների եւ ազգային փոխատեղման փաստաթղթերի համապատասխան մասերի միջեւ կապը բացատրող մեկ կամ ավել փաստաթուղթ: Սույն հրահանգի առնչությամբ օրենսդիր մարմինը գտնում է, որ այդ փաստաթղթերի փոխանցումը հիմնավորված է,

ԸՆԴՈՒՆԵՑԻՆ ՍՈՒՅՆ ՀՐԱՀԱՆԳԸ.

ԳԼՈՒԽ I

**ԱՌԱՐԿԱՆ, ՇՐՋԱՆԱԿԸ, ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐՆ ՈՒ
ԷՆԵՐԳԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԹԻՐԱԽՆԵՐԸ***Հոդված 1***Կարգավորման առարկան եւ գործողության ոլորտը**

1. Սույն հրահանգը սահմանում է ընդհանուր շրջանակ՝ Միության ներսում էներգաարդյունավետության խթանմանը նպատակուղղված միջոցառումների համար՝ Միությունում մինչեւ 2020 թվականը 20 տոկոս կազմող էներգաարդյունավետության հիմնական թիրախի իրականացումն ապահովելու եւ այդ տարեթվին հաջորդող տարիներին էներգաարդյունավետության հետագա բարեփոխումների համար ճանապարհի հարթելու նպատակով:

Դրանով սահմանվում են կանոններ, որոնք նախատեսված են էներգիայի շուկայում խոչընդոտները վերացնելու եւ շուկայում էներգամատակարարման ու էներգաօգտագործման արդյունավետությունը խոչընդոտող սխալները հաղթահարելու համար, ինչպես նաեւ նախատեսվում է 2020 թվականի համար էներգաարդյունավետության ազգային ինդիկատիվ թիրախների սահմանում:

2. Սույն հրահանգով սահմանված պահանջները նվազագույն պահանջներ են եւ չեն խոչընդոտում ցանկացած անդամ պետության կողմից ավելի խիստ միջոցառումների ապահովումը կամ ներկայացումը: Այդպիսի միջոցառումները պետք է համատեղելի լինեն Միության օրենսդրության հետ: Այն դեպքում, երբ ազգային օրենսդրությամբ նախատեսվում են ավելի խիստ միջոցառումներ, անդամ պետությունն այդպիսի օրենսդրության մասին ծանուցում է Հանձնաժողովին:

Հոդված 2

Սահմանումները

Սույն հրահանգի նպատակներով կիրառվում են հետևյալ սահմանումները՝

- 1) «Էներգիա» նշանակում է էներգակիրների, այրվող վառելիքների, ջերմության, վերականգնվող էներգիայի բոլոր ձևերը կամ էներգիայի՝ Եվրոպական պառլամենտի և Խորհրդի «Էներգետիկայի վիճակագրության մասին» 2008 թվականի հոկտեմբերի 22-ի թիվ 1099/2008 կանոնակարգով (ԵՀ) սահմանված որեւէ այլ ձեւ²¹.
- 2) «առաջնային էներգասպառում» նշանակում է համախառն ներքին սպառում՝ բացառությամբ ոչ էներգետիկ նպատակներով սպառման.
- 3) «էներգիայի վերջնական սպառում» նշանակում է արդյունաբերությանը, տրանսպորտին, տնային տնտեսություններին, ծառայություններին և գյուղատնտեսությանը մատակարարվող ամբողջ էներգիան: Դրանով բացառվում է էներգիայի մատակարարումն էներգիայի փոխակերպման ոլորտին և ինքնին էներգետիկ արդյունաբերությանը.
- 4) «էներգաարդյունավետություն» նշանակում է արդյունավետության, ծառայությունների, ապրանքների կամ էներգիայի արտահոսքի հարաբերակցությունն էներգիայի ներհոսքին.
- 5) «էներգախնայողություն» նշանակում է խնայված էներգիայի քանակ, որը որոշվում է էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումներ անցկացնելուց առաջ և հետո սպառումը չափելու և (կամ) գնահատելու միջոցով՝ միեւնույն ժամանակ ապահովելով էներգասպառման վրա ազդեցություն գործող արտաքին պայմանների կարգավորումը.

²¹ ՊՏ թիվ L 304, 14.11.2008 թ., էջ 1:

- 6) «Էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումներ» նշանակում է էներգաարդյունավետության բարձրացում տեխնոլոգիական, վարքագծային եւ (կամ) տնտեսական փոփոխությունների արդյունքում.
- 7) «Էներգետիկ ծառայություն» նշանակում է էներգիայի եւ էներգաարդյունավետ տեխնոլոգիայի կամ գործողության համատեղման արդյունքում ստացված այն նյութական օգուտը, կոմունալ ծառայությունը կամ ապրանքը, որոնք կարող են ներառել այնպիսի գործողություններ, սպասարկում ու հսկողություն, որոնք անհրաժեշտ են պայմանագրի հիման վրա տրամադրվող եւ նորմալ պայմաններում ստուգման, չափման կամ գնահատման ենթակա հիմնավորված էներգաարդյունավետության բարձրացմանը կամ առաջնային էներգիայի խնայողությանը հանգեցնող ծառայություն մատուցելու համար.
- 8) «պետական մարմիններ» նշանակում է Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի՝ «Հանրային աշխատանքների պայմանագրերի, հանրային մատակարարման պայմանագրերի եւ հանրային ծառայությունների պայմանագրերի կնքման ընթացակարգերի համակարգման մասին» 2004/18/ԵՀ հրահանգով սահմանված «պայմանավորվող մարմիններ»²².
- 9) «կենտրոնական կառավարման մարմիններ» նշանակում է բոլոր այն վարչական բաժինները, որոնց իրավասությունը տարածվում է որեւէ անդամ պետության ամբողջ տարածքի վրա.
- 10) «ընդհանուր օգտակար մակերես» նշանակում է շենքի կամ շենքի որեւէ հատվածի ընդհանուր մակերես, որտեղ էներգիան օգտագործվում է տարածքի միկրոկլիմայական պայմանները կարգավորելու նպատակով.
- 11) «էներգակառավարման համակարգ» նշանակում է էներգաարդյունավետության նպատակ եւ այդ նպատակն իրականացնելու ռազմավարություն նախատեսող որեւէ ծրագրի փոխկապակցված եւ փոխազդող տարրերի համակարգ.

²² ՊՏ թիվ L 134, 30.4.2004 թ., էջ 114:

- 12) «Եվրոպական ստանդարտ» նշանակում է Ստանդարտացման եվրոպական կոմիտեի, Էլեկտրատեխնիկական ստանդարտացման եվրոպական կոմիտեի կամ Հեռահաղորդակցման ստանդարտների եվրոպական ինստիտուտի կողմից ընդունված եւ հանրային օգտագործման համար հասանելի դարձած ստանդարտ.
- 13) «միջազգային ստանդարտ» նշանակում է Ստանդարտացման միջազգային կազմակերպության կողմից ընդունված եւ հանրությանը հասանելի դարձած ստանդարտ.
- 14) «պարտավորություն ստանձնած կողմ» նշանակում է էներգաբաշխիչ կամ մանրածախ իրացմամբ զբաղվող ընկերություն, որը ստանձնել է 7-րդ հոդվածում նշված՝ էներգաարդյունավետության մասով պարտավորությունների ազգային սխեմաներով նախատեսված պարտավորություն.
- 15) «լիազորված կողմ» նշանակում է որեւէ ֆինանսական սխեմա կառավարության կամ այլ պետական մարմնի անունից մշակելու, կառավարելու կամ կիրառելու նպատակով կառավարության կամ այլ պետական մարմնի կողմից պատվիրակված լիազորությամբ օժտված իրավաբանական անձ.
- 16) «մասնակից կողմ» նշանակում է ձեռնարկություն կամ պետական մարմին, որը կամավոր համաձայնագրի հիման վրա հանձն է առել որոշակի նպատակների իրականացումը, կամ որը ներառված է ազգային քաղաքականության կարգավորման որեւէ փաստաթղթում.
- 17) «իրականացնող պետական մարմին» նշանակում է հանրային իրավունքով կարգավորվող մարմին, որը պատասխանատու է էներգիայի կամ ածխածնի հարկումը, ֆինանսական սխեմաները եւ գործիքները, հարկաբյուջետային խթանները, ստանդարտներն ու նորմերը,

էներգապիտակավորման համակարգերը, վերապատրաստումն ու ուսուցումն իրականացնելու կամ դրանք վերահսկելու համար.

- 18) «քաղաքականության միջոցառում» նշանակում է անդամ պետությունում շուկայի դերակատարների համար բարենպաստ դաշտ, պահանջներ կամ խթաններ ստեղծելու նպատակով պաշտոնապես սահմանված եւ ներդրված կարգավորող, ֆինանսական, հարկաբյուջետային, կամավոր բնույթի կամ տեղեկատվություն տրամադրող գործիք, որպեսզի այդ դերակատարները մատուցեն եւ գնեն էներգետիկ ծառայություններ եւ իրականացնեն էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված այլ միջոցառումներ.
- 19) «առանձին գործողություն» նշանակում է գործողություն, որը հանգեցնում է ստուգման, չափման կամ գնահատման ենթակա էներգաարդյունավետության բարձրացմանը եւ իրականացվում քաղաքականության միջոցառման արդյունքում.
- 20) «էներգաբաշխիչ ընկերություն» նշանակում է ֆիզիկական կամ իրավաբանական անձ, այդ թվում՝ բաշխիչ համակարգի օպերատոր, որը պատասխանատու է էներգիան վերջնական սպառողներին կամ այդ էներգիան վերջնական սպառողներին վաճառող բաշխիչ կայաններին մատակարարելու նպատակով հաղորդելու համար.
- 21) «բաշխիչ համակարգի օպերատոր» նշանակում է համապատասխանաբար 2009/72/ԵՀ հրահանգով եւ 2009/73/ԵՀ հրահանգով սահմանված բաշխիչ համակարգի օպերատոր.
- 22) «մանրածախ իրացմամբ զբաղվող ընկերություն» նշանակում է ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որը վաճառում է էներգիա վերջնական սպառողներին.
- 23) «վերջնական սպառող» նշանակում է ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որը գնում է էներգիա՝ սեփական վերջնական սպառման համար.

- 24) «Էներգետիկ ծառայություններ մատուցող» նշանակում է ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որն էներգետիկ ծառայություններ է մատուցում կամ էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված այլ միջոցառումներ իրականացնում վերջնական սպառողի հաստատությունում կամ տարածքներում.
- 25) «Էներգետիկ աուդիտ» նշանակում է համակարգային ընթացակարգ, որն իրականացվում է շենքի կամ մի խումբ շենքերի, արդյունաբերական կամ առևտրային շահագործման, կայանքի, մասնավոր կամ պետական ծառայության էներգասպառման՝ գոյություն ունեցող նկարագրության վերաբերյալ պատշաճ գիտելիքներ ձեռք բերելու նպատակով՝ սահմանելով ծախսարդյունավետ էներգախնայողության հնարավորություններն ու որոշելով դրանց քանակը, ինչպես նաև արդյունքների վերաբերյալ հաշվետվություն ներկայացնելով.
- 26) «փոքր եւ միջին ձեռնարկություններ» կամ «ՓՄՁ-ներ» նշանակում է Հանձնաժողովի՝ միկրո, փոքր եւ միջին ձեռնարկությունների սահմանումների վերաբերյալ 2003 թվականի մայիսի 6-ի 2003/361/ԵՀ հանձնարարականին կից հավելվածի I գլխով սահմանված ձեռնարկություններ²³ միկրո, փոքր եւ միջին ձեռնարկությունների կատեգորիան կազմված է 250 աշխատակիցներից պակաս թվով աշխատակիցներ ունեցող ձեռնարկություններից, որոնց տարեկան շրջանառությունը չի գերազանցում 50 միլիոն եվրոն, եւ (կամ) տարեկան հաշվեկշիռը չի գերազանցում 43 միլիոն եվրոն.
- 27) «Էներգաարդյունավետության բարձրացման վերաբերյալ պայմանագրերի կնքում» նշանակում է շահառուի եւ պայմանագրի ողջ ժամկետի ընթացքում ստուգվող ու վերահսկվող էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառում իրականացնողի միջեւ պայմանագրային համաձայնություն, որի դեպքում այդ միջոցառմանն ուղղված ներդրումների

²³ ՊՏ թիվ L 124, 20.5.2003 թ., էջ 36:

- (աշխատանքները, մատակարարումը կամ ծառայությունները) համար վճարումները կատարվում են պայմանագրով համաձայնեցված էներգաարդյունավետության բարձրացման մակարդակին կամ այլ համաձայնեցված էներգաարդյունավետության չափանիշին համապատասխան, ինչպիսին է ֆինանսական միջոցների խնայումը.
- 28) «խելացի չափման համակարգ» կամ «չափման բանական համակարգ» նշանակում է էլեկտրոնային համակարգ, որը կարող է չափել էներգասպառման ծավալները՝ սովորական չափիչների հետ համեմատած՝ ավելի շատ տեղեկություններ տրամադրելով, ինչպես նաև կարող է տվյալներ հաղորդել եւ ստանալ էլեկտրոնային հաղորդակցության միջոցներից որեւէ մեկի օգտագործմամբ.
- 29) «հաղորդման համակարգի օպերատոր» նշանակում է համապատասխանաբար 2009/72/ԵՀ հրահանգով եւ 2009/73/ԵՀ հրահանգով սահմանված «հաղորդման համակարգի օպերատոր».
- 30) «համակցված արտադրություն» նշանակում է մեկ պրոցեսով ջերմային էներգիայի եւ էլեկտրական կամ մեխանիկական էներգիայի միաժամանակյա արտադրություն.
- 31) «տնտեսապես հիմնավորված պահանջարկ» նշանակում է պահանջարկ, որը չի գերազանցում ջեռուցման կամ հովացման պահանջները, եւ որը հակառակ դեպքում կբավարարվեր շուկայական պայմաններով՝ համակցված արտադրությունից բացի էներգիայի արտադրման այլ պրոցեսների միջոցով.
- 32) «օգտակար ջերմային էներգիա» նշանակում է ջեռուցման կամ հովացման տնտեսապես հիմնավորված պահանջարկը բավարարելու համար համակցված արտադրության պրոցեսում արտադրված ջերմային էներգիա.
- 33) «համակցված արտադրությամբ ստացվող էլեկտրաէներգիա» նշանակում է օգտակար ջերմային էներգիայի արտադրության հետ կապված պրոցեսում

- արտադրվող եւ I հավելվածում սահմանված մեթոդաբանությանը համապատասխան հաշվարկվող էլեկտրաէներգիա.
- 34) «բարձր արդյունավետություն ապահովող համակցված արտադրություն» նշանակում է II հավելվածով սահմանված չափանիշներին համապատասխանող համակցված արտադրություն.
- 35) «ընդհանուր արդյունավետություն» նշանակում է էլեկտրաէներգիայի, մեխանիկական էներգիայի արտադրանքի եւ օգտակար ջերմային էներգիայի արտահոսքի տարեկան ծավալ՝ բաժանած համակցված արտադրության պրոցեսում ջերմության, էլեկտրական էներգիայի գումարային քանակությանը եւ մեխանիկական էներգիայի արտադրության համար ծախսված վառելիքի ծավալին.
- 36) «էլեկտրաէներգիայի եւ ջերմային էներգիայի հարաբերակցություն» նշանակում է կոնկրետ տեղակայանքի շահագործման տվյալների օգտագործմամբ լրիվ համակցված արտադրության ռեժիմով շահագործման պայմաններում համակցված արտադրությամբ ստացված էլեկտրաէներգիայի եւ օգտակար ջերմության հարաբերակցություն.
- 37) «համակցված արտադրության տեղակայանք» նշանակում է համակցված արտադրության ռեժիմով աշխատելու կարողություն ունեցող տեղակայանք.
- 38) «փոքրամասշտաբ համակցված արտադրության տեղակայանք» նշանակում է մինչեւ 1 էլեկտրական ՄՎտ_ե տեղակայված հզորություն ունեցող համակցված արտադրության տեղակայանք.
- 39) «համակցված արտադրության միկրո տեղակայանք» նշանակում է մինչեւ 50 էլեկտրական կՎտ_ե առավելագույն հզորություն ունեցող համակցված արտադրության տեղակայանք.
- 40) «կառուցապատման խտության գործակից» նշանակում է շենքի ընդհանուր մակերեսի հարաբերակցությունը տվյալ տարածքում զբաղեցրած հողամասի մակերեսին.

- 41) «արդյունավետ տարածքային ջեռուցում եւ հովացում» նշանակում է ջեռուցման կամ հովացման համակարգ, որն օգտագործում է առնվազն 50 տոկոս վերականգնվող էներգիա, 50 տոկոս արտանետվող ջերմային էներգիա, 75 տոկոս համակցված արտադրությամբ ստացվող ջերմային էներգիա կամ այդպիսի էներգիայի եւ ջերմային էներգիայի 50 տոկոս կազմող համատեղում.
- 42) «արդյունավետ ջեռուցում եւ հովացում» նշանակում է ջեռուցման եւ հովացման տարբերակ, որը, ի տարբերություն երբեւէ չփոփոխվող իրավիճակն արտացոլող հիմնական սցենարի, զգալի չափով նվազեցնում է համապատասխան համակարգի շրջանակներում հաղորդված էներգիայի մեկ միավորը ծախսարդյունավետ ձեով մատակարարելու համար անհրաժեշտ առաջնային էներգիայի ներհոսքը, ինչը գնահատվել է սույն հրահանգում նշված ծախսերի եւ օգուտների վերլուծությունում՝ հաշվի առնելով արտանցման, փոխարկման, փոխադրման եւ բաշխման համար պահանջվող էներգիան.
- 43) «արդյունավետ անհատական ջեռուցում եւ հովացում» նշանակում է ջեռուցման եւ հովացման առանձին մատակարարման տարբերակ, որը, ի տարբերություն արդյունավետ տարածքային ջեռուցման եւ հովացման, զգալիորեն նվազեցնում է համապատասխան համակարգի շրջանակներում հաղորդված էներգիայի մեկ միավորը մատակարարելու համար անհրաժեշտ չվերականգնվող առաջնային էներգիայի ներհոսքը կամ պահանջում է չվերականգնվող առաջնային էներգիայի նույն ներհոսքը, սակայն ավելի ցածր գնով՝ հաշվի առնելով արտանցման, փոխարկման, փոխադրման եւ բաշխման համար պահանջվող էներգիան.
- 44) «էական բարեկարգում» նշանակում է բարեկարգում, որի հետ կապված ծախսերը գերազանցում են նոր համեմատելի միավորի հետ կապված ներդրումային ծախսերի 50 տոկոսը.

45) «ագրեգատոր» նշանակում է ըստ պահանջի ծառայություններ մատուցող կազմակերպություն, որը կազմակերպված էներգետիկ շուկաներում համատեղում է վաճառքի եւ աճուրդի գծով սպառման բազմակի կարճաժամկետ բեռները:

Հոդված 3

Էներգաարդյունավետության թիրախները

1. Յուրաքանչյուր անդամ պետություն առաջնային կամ վերջնական էներգիայի սպառման, առաջնային կամ վերջնական էներգիայի խնայողության կամ էներգատարության հիման վրա սահմանում է էներգաարդյունավետության ազգային ինդիկատիվ թիրախ: Անդամ պետություններն այդ թիրախների վերաբերյալ ծանուցում են ներկայացնում Հանձնաժողով՝ 24(1) հոդվածի եւ XIV հավելվածի 1-ին մասին համապատասխան: Ծանուցում ներկայացնելիս նրանք նաեւ պետք է այդ թիրախներն արտացոլեն 2020 թվականի առաջնային էներգիայի սպառման եւ վերջնական էներգիայի սպառման բացարձակ մակարդակի տեսքով եւ բացատրություններ ներկայացնեն առ այն, թե ինչպես եւ ինչ տվյալների հիման վրա է հաշվարկը կատարվել:

Այդ թիրախները սահմանելիս անդամ պետությունները հաշվի են առնում հետեւյալը՝

- ա) Միության 2020 թվականի էներգասպառման ծավալը չպետք է գերազանցի առաջնային էներգիայի 1 474 մլն.տնհ-ն կամ վերջնական էներգիայի 1 078 մլն.տնհ-ն.
- բ) սույն հրահանգով նախատեսված միջոցառումները.
- գ) 2006/32/ԵՀ հրահանգի 4(1) հոդվածի համաձայն ընդունված էներգախնայողության թիրախներն իրականացնելու նպատակով ընդունված միջոցառումները, եւ

- դ) անդամ պետություններում եւ Միության մակարդակով էներգաարդյունավետության խրախուսմանն ուղղված այլ միջոցառումներ:

Այդ թիրախները սահմանելիս անդամ պետությունները կարող են նաեւ հաշվի առնել առաջնային էներգիայի սպառման վրա ազդեցություն գործող ազգային պայմանները, ինչպիսիք են՝

- ա) ծախսարդյունավետ էներգախնայողության չօգտագործված ներուժը.
բ) ՀՆԱ-ի զարգացման տեմպերն ու դրա վերաբերյալ կանխատեսումները.
գ) էներգակիրների ներմուծման եւ արտահանման հետ կապված փոփոխությունները.
դ) վերականգնվող էներգիայի բոլոր աղբյուրների, ատոմային էներգիայի, ածխաթթու գազի հավաքման եւ պահեստավորման զարգացումը, եւ
ե) հրատապ գործողությունները:

2. Ամենաուշը մինչեւ 2014 թվականի հունիս 30-ը Հանձնաժողովը պետք է գնահատի գրանցված առաջընթացը եւ այն, թե որքանով է հավանական, որ Միությունը մինչեւ 2020 թվականը կհասնի առաջնային էներգիայի 1 474 մլն.տնհ-ն եւ (կամ) վերջնական էներգիայի 1 078 մլն.տնհ-ն չգերազանցող էներգասպառման:

3. 2-րդ կետում նշված գնահատումն իրականացնելիս Հանձնաժողովը պետք է՝

- ա) ամփոփի անդամ պետությունների կողմից ներկայացված էներգաարդյունավետության ազգային ինդիկատիվ թիրախները.
բ) գնահատի, թե արդյոք այդ թիրախների գումարը կարող է համարվել Միության՝ ընդհանուր առմամբ ճիշտ ուղով ընթանալու վստահելի ցուցանիշ՝ հաշվի առնելով 24(1) հոդվածին համապատասխան առաջին տարեկան հաշվետվության գնահատումը եւ 24(2) հոդվածին

համապատասխան էներգաարդյունավետության գործողությունների ազգային ծրագրերի գնահատումը.

- գ) հաշվի առնի լրացուցիչ վերլուծությունը, որը բխում է հետևյալից՝
- i) Միության մակարդակով էներգասպառման, ինչպես նաև տնտեսական գործունեության մասով էներգասպառման բնագավառում գրանցված առաջընթացի գնահատում, այդ թվում՝ էներգամատակարարման արդյունավետության մասով գրանցված առաջընթացն այն անդամ պետություններում, որոնց ազգային ինդիկատիվ թիրախները հիմնված են վերջնական էներգասպառման կամ վերջնական էներգախնայողության վրա, ներառյալ՝ այդ անդամ պետությունների կողմից սույն հրահանգի III գլխի պահանջները կատարելու շնորհիվ գրանցված առաջընթացը.
 - ii) Միության մակարդակով էներգասպառման ապագա միտումներին առնչվող մոդելավորման փորձերի արդյունքները.
- դ) համեմատի «ա»-ից «գ» կետերում նշված արդյունքները էներգասպառման այն ծավալի հետ, որն անհրաժեշտ կլինի մինչև 2020 թվականն առաջնային էներգիայի 1 474 մլն.տնհ-ն եւ (կամ) վերջնական էներգիայի 1 078 մլն.տնհ-ն չգերազանցող էներգասպառում ապահովելու համար:

ԳԼՈՒԽ II

ԷՆԵՐԳԱՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ*Հոդված 4***Շենքերի վերանորոգում**

Անդամ պետությունները բնակելի եւ առեւտրային՝ պետական եւ մասնավոր շենքային ֆոնդերի վերանորոգմանն ուղղված ներդրումներ գրավելու նպատակով հաստատում են երկարաժամկետ ռազմավարություն: Այդ ռազմավարությունը ներառում է հետեւյալը՝

- ա) ազգային բնակելի ֆոնդի համառոտ ներկայացում՝ անհրաժեշտության դեպքում հիմնված վիճակագրական նմուշառման վրա.
- բ) վերանորոգման ծախսարդյունավետ մոտեցումների վերհանում՝ շենքի տեսակին եւ կլիմայական գոտուն համապատասխան.
- գ) շենքերի հիմնանորոգում, այդ թվում՝ փուլային հիմնանորոգման խթանմանը նպատակաուղղված քաղաքականություններ եւ միջոցառումներ.
- դ) անհատների, շինարարական արդյունաբերության եւ ֆինանսական հաստատությունների կողմից ներդրումների մասով որոշումների կայացումն ուղղորդող հեռանկարային մոտեցում.
- ե) ակնկալվող էներգախնայողության եւ ավելի մեծ օգուտների՝ փաստերով հիմնավորված գնահատում:

Ռազմավարության առաջին տարբերակը հրապարակվում է ամենաուշը 2014 թվականի ապրիլի 30-ին եւ դրանից հետո երեք տարին մեկ թարմացվում, ինչպես նաեւ ներկայացվում Հանձնաժողով որպես էներգաարդյունավետության գործողությունների ազգային ծրագրերի մաս:

*Հոդված 5***Պետական մարմիններին
պատկանող շենքերի օրինակելիությունը**

1. Չսահմանափակելով 2010/31/ԵՄ հրահանգի 7-րդ հոդվածը՝ յուրաքանչյուր անդամ պետություն ապահովում է, որ 2014 թվականի հունվարի 1-ից սկսած՝ իր կենտրոնական կառավարման մարմիններին պատկանող եւ նրանց կողմից զբաղեցված ջեռուցվող եւ (կամ) հովացվող շենքերի ընդհանուր մակերեսի 3 տոկոսն ամեն տարի վերանորոգվի՝ 2010/31/ԵՄ հրահանգի 4-րդ հոդվածի կատարման նպատակով այդ անդամ պետության կողմից սահմանված էներգաարդյունավետության նվազագույն պահանջները բավարարելու նպատակով:

3 տոկոս կազմող ցուցանիշը հաշվարկվում է 500 մ²-ը գերազանցող ընդհանուր օգտակար մակերեսով այն շենքերի ընդհանուր մակերեսի հիման վրա, որոնք պատկանում են այն անդամ պետության կենտրոնական կառավարման մարմիններին եւ զբաղեցվում այն անդամ պետության կենտրոնական կառավարման մարմինների կողմից, որոնք յուրաքանչյուր տարվա հունվարի 1-ին չեն բավարարում 2010/31/ԵՄ հրահանգի 4-րդ հոդվածի կատարման նպատակով սահմանված էներգաարդյունավետության նվազագույն ազգային պահանջները: Այդ շեմը պետք է 2015 թվականի հուլիսի 9-ի դրությամբ իջեցվի մինչեւ 250 մ²-ի:

Եթե անդամ պետությունը պահանջում է, որ ամեն տարի ընդհանուր մակերեսի 3 տոկոսը վերանորոգելու պարտավորությունը տարածվի կենտրոնական կառավարման մարմիններից ցածր մակարդակի վարչական կառավարման բաժիններին պատկանող կամ նրանց կողմից զբաղեցված ընդհանուր մակերեսի վրա, ապա 3 տոկոս կազմող ցուցանիշը հաշվարկվում է 500 մ²-ը, իսկ 2015 թվականի հուլիսի 9-ից դրությամբ՝ 250 մ²-ը գերազանցող ընդհանուր օգտակար մակերեսով այն շենքերի ընդհանուր մակերեսի հիման վրա, որոնք պատկանում են այն անդամ պետության կենտրոնական կառավարման

մարմիններին կամ այդ վարչական կառավարման բաժիններին եւ զբաղեցվում այն անդամ պետության կենտրոնական կառավարման մարմինների եւ այդ վարչական բաժինների կողմից, որոնք յուրաքանչյուր տարվա հունվարի 1-ին չեն բավարարում 2010/31/ԵՄ հրահանգի 4-րդ հոդվածի կատարման նպատակով սահմանված էներգաարդյունավետության նվազագույն ազգային պահանջները:

Կենտրոնական կառավարման մարմինների շենքերի համալիր վերանորոգմանն ուղղված միջոցառումներն առաջին ենթապարբերությանը համապատասխան իրականացնելիս անդամ պետությունները կարող են շենքը, այդ թվում՝ շենքը շրջափակող կառուցվածքները, սարքավորումները, դրանց շահագործումն ու սպասարկումը դիտարկել ամբողջությամբ:

Անդամ պետությունները պահանջում են, որ էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումների մասով առաջնահերթություն տրվի ամենացածր էներգաարդյունավետություն ունեցող կենտրոնական կառավարման մարմինների շենքերին, եթե դա ծախսարդյունավետ է եւ տեխնիկապես իրագործելի:

2. Անդամ պետությունները կարող են 1-ին պարբերության մեջ նշված պահանջները չսահմանելու կամ չկիրառելու որոշում կայացնել հետեւյալ կատեգորիայի շինությունների նկատմամբ՝

- ա) շենքեր, որոնք պաշտոնապես պահպանվում են որպես հատուկ նշանակության գոտու մաս կամ հատուկ ճարտարապետական կամ պատմական նշանակություն ունենալու պատճառով այնքանով, որքանով էներգաարդյունավետության որոշակի նվազագույն պահանջների պահպանումն անընդունելի կերպով կփոխեր դրանց բնույթը կամ արտաքին տեսքը.
- բ) շենքեր, որոնք պատկանում են զինված ուժերին կամ կենտրոնական կառավարման մարմիններին եւ ծառայում ազգային պաշտպանության

նպատակներին՝ բացառությամբ զինված ուժերի եւ ազգային պաշտպանության մարմիններին ծառայող այլ անձնակազմի համար նախատեսված առանձին բնակելի տարածքների կամ կենցաղային շենքերի.

գ) որպես պաշտամունքի եւ կրոնական գործունեության վայր օգտագործվող շենքեր:

3. Եթե անդամ պետությունը տվյալ տարում վերանորոգում է կենտրոնական կառավարման մարմինների շենքերի ընդհանուր մակերեսի 3 տոկոսից ավելին, ապա ավելցուկը կարող է գումարվել նախորդող կամ հաջորդող երեք տարիներից որեւէ մեկի վերանորոգման տարեկան ցուցանիշին:

4. Անդամ պետությունները կարող են կենտրոնական կառավարության մարմինների վերանորոգման տարեկան ցուցանիշի մեջ հաշվարկել նախորդ երկու տարիներից որեւէ մեկի ընթացքում կենտրոնական կառավարության մարմինների որոշ քանդված շենքերի կամ նախորդ երկու տարիներից որեւէ մեկի ընթացքում այլ շենքերի ավելի ինտենսիվ օգտագործման պատճառով վաճառված, քանդված կամ շահագործումից հանված շենքերի փոխարեն նրանց պատկանող կամ նրանց կողմից զբաղեցված նոր շենքերը:

5. 1-ին պարբերության նպատակներով ամենաուշը 2013 թվականի դեկտեմբերի 31-ին անդամ պետությունները պետք է կենտրոնական կառավարման մարմինների՝ 500 մ²-ը, իսկ 2015 թվականի հուլիսի 9-ից դրությամբ՝ 250 մ²-ը գերազանցող ընդհանուր օգտակար մակերեսով ջեռուցվող եւ (կամ) հովացվող շենքերի, բացառությամբ 2-րդ պարբերությամբ այդ պահանջից ազատված շենքերի, գույքագրում իրականացնեն եւ այն ներկայացնեն հանրությանը: Գույքացուցակը պետք է պարունակի հետեւյալ գրառումները.

ա) ընդհանուր մակերեսը՝ արտահայտված քառակուսի մետրերով, եւ

բ) յուրաքանչյուր շենքի էներգաարդյունավետությունը կամ էներգիայի համապատասխան ցուցանիշները:

6. Չսահմանափակելով 2010/31/ԵՄ հրահանգի 7-րդ հոդվածը՝ անդամ պետությունները կարող են սույն հոդվածի 1-5-րդ պարբերությունների նկատմամբ ցուցաբերել այլընտրանքային մոտեցում, որի միջոցով նրանք կարող են այլ ծախսարդյունավետ միջոցառումներ իրականացնել, այդ թվում՝ հիմնանորոգումներ եւ շենքերը զբաղեցնողների վարքագծային փոփոխություններին ուղղված միջոցառումներ, որպեսզի մինչև 2020 թվականը հնարավոր լինի ապահովել նրանց կենտրոնական կառավարման մարմիններին պատկանող կամ նրանց կողմից զբաղեցված շենքերի՝ առնվազն 1-ին պարբերությամբ պահաջվող եւ տարեկան կտրվածքով ներկայացվող ցուցանիշին համարժեք էներգախնայողություն:

Այլընտրանքային մոտեցման նպատակով անդամ պետությունները կարող են գնահատել 1-4-րդ պարբերությունների արդյունքում իրականացվող էներգախնայողության ծավալը՝ վերանորոգումից առաջ եւ հետո կենտրոնական կառավարման մարմինների շենքերի բազային օրինակների էներգասպառման համար համապատասխան նորմատիվ արժեքներ օգտագործելով՝ դրանց շենքային ֆոնդի մակերեսի նախահաշվին համապատասխան: Կենտրոնական կառավարման մարմինների շենքերի բազային օրինակների կատեգորիաները ներկայացնում են այդպիսի շենքերի ֆոնդը:

Այլընտրանքային մոտեցում ցուցաբերող անդամ պետություններն ամենաուշը 2013 թվականի դեկտեմբերի 31-ին Հանձնաժողովին ծանուցում են այն այլընտրանքային միջոցառումների մասին, որոնք իրենք նախատեսում են ընդունել՝ ներկայացնելով, թե ինչպես են ապահովելու կենտրոնական կառավարման մարմինների գույքակազմի մեջ մտնող շենքերի էներգաարդյունավետության համարժեք բարձրացումը:

7. Հաշվի առնելով պետական մարմինների, այդ թվում՝ տարածաշրջանային եւ տեղական մակարդակով, ինչպես նաեւ հանրային իրավունքով կարգավորվող եւ սոցիալական բնակարաններով ապահովող մարմինների համապատասխան

իրավասություններն ու վարչական կառուցվածքը, անդամ պետությունները վերջիններիս խթանում են՝

- ա) ընդունել էներգաարդյունավետության ծրագիր՝ որպես առանձին ծրագիր կամ որպես կլիմայի կամ շրջակա միջավայրի վերաբերյալ ավելի լայն ծրագրի մաս, որը ներառում է էներգախնայողության եւ էներգաարդյունավետության կոնկրետ նպատակներ եւ գործողություններ՝ նպատակ ունենալով հետեւելու կենտրոնական կառավարման մարմինների՝ 1-ին, 5-րդ եւ 6-րդ պարբերություններով սահմանված օրինակին.
- բ) ներմուծել էներգակառավարման համակարգ, այդ թվում՝ որպես ծրագրի իրականացման մաս անցկացնել էներգետիկ աուդիտներ.
- գ) անհրաժեշտության դեպքում նորարարությունները ֆինանսավորելու եւ էներգաարդյունավետության երկարաժամկետ պահպանմանը կամ դրա բարձրացմանն ուղղված ծրագրեր իրականացնելու նպատակով օգտվել էներգետիկ ծառայություններ մատուցող ընկերությունների ծառայություններից, ինչպես նաեւ կնքել էներգաարդյունավետության բարձրացման վերաբերյալ պայմանագրեր:

Հոդված 6

Պետական մարմինների կողմից իրականացվող գնումները

1. Անդամ պետություններն ապահովում են, որ կենտրոնական կառավարման մարմինները գնեն միայն բարձր էներգաարդյունավետություն ունեցող ապրանքներ, ծառայություններ եւ շենքեր այնքանով, որքանով դա համապատասխանում է ծախսարդյունավետությանը, տնտեսական առումով իրագործելիությանը, ավելի մեծ կայունությանը, տեխնիկական

նպատակահարմարությանը, ինչպես նաև III հավելվածում նշված բավարար չափով մրցունակությանը:

Առաջին ենթապարբերությամբ սահմանված պարտավորությունը կիրառվում է պետական մարմինների կողմից ապրանքների, ծառայություններ եւ շենքերի գնման պայմանագրերի նկատմամբ այնքանով, որքանով այդ պայմանագրերը 2004/18/ԵՀ հրահանգի 7-րդ հոդվածով սահմանված շեմերին համարժեք կամ դրանցից մեծ արժեքներ ունեն:

2. 1-ին պարբերության մեջ նշված պարտավորությունը կիրառվում է զինված ուժերի պայմանագրերի նկատմամբ միայն այնքանով, որքանով դրա կիրառումը չի հակասում զինված ուժերի գործունեության բնույթին եւ հիմնական նպատակին: Պարտավորությունը չի կիրառվում ռազմական տեխնիկայի մատակարարման պայմանագրերի նկատմամբ, որոնք սահմանվում են Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի՝ «Պաշտպանության եւ անվտանգության ոլորտում աշխատանքների կատարման, մատակարարման եւ ծառայությունների մատուցման որոշակի պայմանագրերի՝ պայմանավորվող մարմինների կամ կազմակերպությունների կողմից շնորհման ընթացակարգերի համակարգման մասին» 2009 թվականի հուլիսի 13-ի 2009/81/ԵՀ հրահանգով (!):

3. Հաշվի առնելով պետական մարմինների, այդ թվում՝ տարածաշրջանային եւ տեղական մակարդակով համապատասխան իրավասություններն ու վարչական կառուցվածքը, անդամ պետությունները վերջիններիս խթանում են հետեւել իրենց կենտրոնական կառավարման մարմինների օրինակին՝ գնելով միայն բարձր էներգաարդյունավետություն ունեցող ապրանքներ, ծառայություններ եւ շենքեր: Անդամ պետությունները պետական մարմիններին խթանում են զգալի էներգատարություն ունեցող ծառայությունների մատուցման պայմանագրեր կնքելու մասին մրցույթ հայտարարելիս գնահատել երկարաժամկետ էներգախնայողություն ապահովող՝ էներգաարդյունավետության երկարաժամկետ պայմանագրեր կնքելու հնարավորությունը:

4. Չսահմանափակելով 1-ին պարբերությունը՝ ապրանքների այնպիսի փաթեթ գնելիս, որի վրա ընդհանուր առմամբ տարածվում է 2010/30/ԵՄ հրահանգին համապատասխան ընդունված պատվիրակված ակտը, անդամ պետությունները կարող են պահանջել, որ նախապատվություն տրվի փաթեթի ընդհանուր էներգաարդյունավետությանը, այլ ոչ այդ փաթեթի մեջ մտնող առանձին ապրանքների էներգաարդյունավետությանն ապրանքների այնպիսի փաթեթ գնելու միջոցով, որը համապատասխանում է էներգաարդյունավետության ամենաբարձր դասին պատկանելու մասով սահմանված չափանիշին:

Հոդված 7

էներգաարդյունավետության մասով պարտավորությունների սխեմաները

1. Յուրաքանչյուր անդամ պետություն սահմանում է էներգաարդյունավետության մասով պարտավորությունների վերաբերյալ սխեմաներ: Այդ սխեման ապահովում է, որ էներգաբաշխիչ եւ (կամ) մանրածախ իրացմամբ զբաղվող ընկերությունները, որոնք 4-դ պարբերության համաձայն ներկայացվում են որպես յուրաքանչյուր անդամ պետությունում գործող՝ պարտավորություններ ստանձնած կողմեր, մինչեւ 2020 թվականի դեկտեմբերի 31-ը, առանց 2-րդ պարբերությունը սահմանափակելու, ապահովեն վերջնական էներգասպառման ընդհանուր թիրախը:

Այդ թիրախը պետք է, ըստ ծավալի, առնվազն համարժեք լինի 2014 թվականի հունվարի 1-ից սկսած մինչեւ 2020 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում յուրաքանչյուր տարի բոլոր էներգաբաշխիչ կամ էներգիայի մանրածախ իրացմամբ զբաղվող ընկերությունների՝ 2013 թվականի հունվարի մեկին նախորդող եռամյա ժամանակահատվածում միջինացված ու վերջնական սպառողներին տարեկան վաճառված էներգիայի 1,5 տոկոսը կազմող նոր էներգախնայողությունների իրականացմանը: Տրանսպորտի ոլորտում

օգտագործված էներգիայի վաճառքը, ըստ ծավալի, կարող է այս հաշվարկներից մասնակիորեն կամ ամբողջությամբ բացառվել:

Անդամ պետությունները որոշում են, թե ինչպես է երկրորդ ենթապարբերության մեջ նշված նոր էներգախնայողությունների հաշվարկված քանակի ապահովումն ըստ փուլերի իրականացվելու ամբողջ ժամանակահատվածում:

2. Հաշվի առնելով 3-րդ պարբերությունը՝ անդամ պետությունները կարող են՝

- ա) 1-ին պարբերության երկրորդ ենթապարբերությամբ պահանջվող հաշվարկը կատարել՝ 2014 եւ 2015 թվականներին օգտագործելով 1 տոկոս կազմող, 2016 եւ 2017 թվականներին՝ 1,25 տոկոս կազմող, իսկ 2018, 2019 եւ 2020 թվականներին՝ 1,5 տոկոս կազմող արժեքները.
- բ) հաշվարկից բացառել 2003/87/ԵՀ հրահանգի I հավելվածում թվարկված արդյունաբերական գործունեության ընթացքում օգտագործված էներգիայի բոլոր վաճառքները կամ դրանց մի մասը՝ ըստ ծավալի.
- գ) թույլ տալ 14(4) հոդվածի, 14(5) հոդվածի «բ» կետով եւ 15(1)-(6) եւ (9) հոդվածով սահմանված պահանջների կատարման արդյունքում էներգիայի փոխակերպման, բաշխման եւ հաղորդման (փոխադրման) ոլորտներում, ինչպես նաեւ արդյունավետ տարածքային ջեռուցման եւ հովացման ենթակառուցվածքներում իրականացված էներգախնայողության ցուցանիշը գումարել I պարբերությամբ պահանջվող էներգախնայողության ցուցանիշին.
- դ) էներգախնայողության ծավալը, որը գրանցվել է 2008 թվականի դեկտեմբերի 31-ից սկսած եւ վերջերս իրականացված առանձին գործողությունների արդյունքում, որոնք շարունակում են ազդեցություն գործել 2020 թվականի վրա եւ կարող են գնահատվել ու ստուգվել, գումարել 1-ին պարբերությունում նշված թվին:

3. 2-րդ պարբերության կիրառումը չպետք է հանգեցնի 1-ին պարբերությունում նշված էներգախնայողության ծավալի 25 տոկոսից ավելի կրճատմանը: 2-րդ պարբերությունը կիրառելիս անդամ պետություններն ամենաուշը 2014 թվականի հունիսի 5-ին այդ փաստի, այդ թվում՝ 2-րդ պարբերությունում թվարկված եւ կիրառման ենթակա տարրերի, 1-ին պարբերությունում նշված էներգախնայողության ծավալի վրա դրանց ունեցած ազդեցությունն արտացոլող հաշվարկի մասին ծանուցում են ներկայացնում Հանձնաժողով:

4. Առանց 1-ին պարբերության երկրորդ ենթապարբերությանը համապատասխան էներգախնայողության թիրախի հաշվարկումը սահմանափակելու՝ յուրաքանչյուր անդամ պետություն 1-ին պարբերության առաջին ենթապարբերության նպատակներով օբյեկտիվ եւ ոչ խտրական չափանիշների հիման վրա իր տարածքում գործող էներգաբաշխիչ եւ (կամ) մանրածախ իրացմամբ զբաղվող ընկերություններից ընտրում է պարտավորություններ ստանձնող կողմեր, ինչպես նաեւ կարող է ներառել իր տարածքում գործող տրանսպորտային վառելիք բաշխող կամ դրա մանրածախ իրացմամբ զբաղվող ընկերություններ: Պարտավորությունը կատարելու համար անհրաժեշտ էներգախնայողության ծավալն ապահովվում է վերջնական սպառողներ համարվող՝ պարտավորություններ ստանձնած կողմերի կողմից, որոնք անհրաժեշտության դեպքում ընտրվում են անդամ պետության կողմից՝ անկախ 1-ին պարբերության համաձայն կատարվող հաշվարկից, կամ այն դեպքում, երբ անդամ պետությունները նման որոշում են կայացնում այլ կողմերի հաստատված էներգախնայողության արդյունքում, ինչպես նկարագրված է 7-րդ պարբերության «բ» կետում:

5. Անդամ պետությունները պարտավորություններ ստանձնած յուրաքանչյուր կողմից պահանջվող էներգախնայողության ծավալն արտահայտում են վերջնական կամ առաջնային էներգիայի սպառման տեսքով: Էներգախնայողության պահանջվող ծավալն արտահայտելու նպատակով ընտրված մեթոդը նաեւ օգտագործվում է պարտավորություններ ստանձնած

կողմերի ներկայացրած էներգախնայողության ծավալը հաշվարկելու համար:
Կիրառվում են IV հավելվածում ներկայացված փոխարկման գործոնները:

6. Անդամ պետություններն ապահովում են, որ սույն հոդվածի 1-ին, 2-րդ եւ 9-րդ պարբերություններից եւ 20(6) հոդվածից բխող էներգախնայողությունը հաշվարկվի V հավելվածի 1-ին եւ 2-րդ կետերին համապատասխան: Նրանք ներմուծում են չափման, հսկողության եւ ստուգման համակարգեր, որոնց միջոցով կստուգվեն պարտավորություններ ստանձնած կողմերի իրականացրած էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումների առնվազն վիճակագրական առումով կարելիություն ներկայացնող մասը եւ տիպային նմուշը: Այդ չափումը, հսկողությունն ու ստուգումը իրականացվում են պարտավորություններ ստանձնած կողմերից անկախ:

7. Էներգաարդյունավետության մասով պարտավորությունների սխեմայի շրջանակներում անդամ պետությունները կարող են՝

ա) էներգախնայողության մասով իրենց կողմից դրված պարտավորությունների մեջ սոցիալական նպատակ հետապնդող պահանջներ ներառել, այդ թվում՝ պահանջելով, որ էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումների մի մասն առաջնահերթ իրականացվի էներգիայի սակավություն ունեցող տնային տնտեսություններում կամ սոցիալական բնակարաններում.

բ) պարտավորություններ ստանձնած կողմերին թույլ տալ իրենց պարտավորությունների հաշվարկում ներառել էներգետիկ ծառայություններ մատուցողների կամ այլ երրորդ կողմերի հաստատված էներգախնայողությունների ծավալը, այդ թվում՝ այն դեպքում, երբ պարտավորություններ ստանձնած կողմերը պետության կողմից հաստատված այլ մարմինների կամ պետական մարմինների միջոցով խթանում են միջոցառումներ, որոնք կարող են

տեղի ունենալ պաշտոնական համագործակցությամբ կամ առանց դրա եւ զուգակցվել ֆինանսավորման այլ աղբյուրներով: Անդամ պետությունների թույլտվությամբ նրանք համապատասխան դեպքերում ապահովում են շուկայի բոլոր դերակատարների համար հստակ, թափանցիկ եւ բաց գործընթաց, որը նպատակաուղղված է հավաստագրման ծախսերը նվազեցնելուն:

- գ) պարտավորություններ ստանձնած կողմերին թույլ տալ որոշակի տարվա էներգախնայողության ծավալը ներառել նախորդող չորս կամ հաջորդող երեք տարիներից որեւէ մեկի հաշվարկում:

8. Տարին մեկ անդամ պետությունները հրապարակում են պարտավորություններ ստանձնած յուրաքանչյուր կողմի կամ պարտավորություններ ստանձնած կողմի յուրաքանչյուր ենթակատեգորիայի էներգախնայողության ծավալները, ինչպես նաեւ դրանց ընդհանուր թիվը՝ սխեմային համապատասխան:

Անդամ պետություններն ապահովում են, որ պարտավորություններ ստանձնած կողմերն ըստ պահանջի տրամադրեն հետեւյալը՝

- ա) ամփոփված վիճակագրական տեղեկություններ՝ իրենց վերջնական սպառողների վերաբերյալ (նախկինում ներկայացված տեղեկատվության զգալի փոփոխությունների վերհանում), եւ
- բ) վերջնական սպառողների սպառման, այդ թվում՝ անհրաժեշտության դեպքում բեռնվածքի պրոֆիլի, սպառողների սեզմենտացիայի եւ սպառողների աշխարհագրական դիրքի վերաբերյալ ընթացիկ տեղեկություններ՝ միեւնույն ժամանակ պահպանելով մասնավոր կամ առետրային առումով զգայուն տեղեկատվության ամբողջականությունն ու գաղտնիությունը՝ Միության կիրառելի իրավունքի համաձայն:

Այդպիսի պահանջ ներկայացվում է տարին ոչ ավելի, քան մեկ անգամ:

9. Որպես 1-ին պարբերության համաձայն էներգաարդյունավետության մասով պարտավորությունների սխեմա սահմանելու այլընտրանք՝ անդամ պետությունները կարող են քաղաքականության այլ միջոցառումներ իրականացնել՝ վերջնական սպառողների շրջանում էներգախնայողություն ապահովելու նպատակով՝ պայմանով, որ այդ քաղաքականության միջոցառումները համապատասխանեն 10-րդ եւ 11-րդ պարբերություններով նախատեսված չափանիշներին: Այդ մոտեցման միջոցով ապահովված էներգախնայողության նոր տարեկան ծավալները պետք է համարժեք լինեն 1-ին, 2-րդ եւ 3-րդ պարբերություններով պահանջված էներգախնայողության նոր ծավալներին: Եթե համարժեքությունն ապահովվում է, անդամ պետությունները կարող են պարտավորությունների սխեմաները համատեղել այլընտրանքային քաղաքականության միջոցառումների, այդ թվում՝ էներգաարդյունավետության ազգային ծրագրերի հետ:

Առաջին ենթապարբերության մեջ նշված քաղաքականության միջոցառումները կարող են ներառել քաղաքականության հետեւյալ միջոցառումները կամ դրանց համատեղումը, սակայն սահմանափակված չեն դրանցով.

- ա) էներգիայի կամ ածխաթթու գազի արտանետումների հետ կապված հարկերը, որոնք ունեն վերջնական սպառման էներգիան կրճատելու ազդեցություն.
- բ) ֆինանսական սխեմաներն ու գործիքները կամ հարկաբյուջետային խթանները, որոնք հանգեցնում են էներգաարդյունավետ տեխնոլոգիայի կամ մեթոդների կիրառմանը եւ ունեն վերջնական էներգասպառումը կրճատելու ազդեցություն.
- գ) կանոնակարգերը կամ կամավոր համաձայնագրերը, որոնք հանգեցնում են էներգաարդյունավետ տեխնոլոգիայի կամ մեթոդների կիրառմանը եւ ունեն վերջնական էներգասպառումը կրճատելու ազդեցություն.

- դ) չափանիշները եւ նորմերը, որոնք նպատակաուղղված են ապրանքների եւ ծառայությունների, այդ թվում՝ շենքերի եւ տրանսպորտային միջոցների էներգաարդյունավետության բարձրացմանը՝ բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք Միության իրավունքի համաձայն պարտադիր են եւ կիրառելի անդամ պետություններում.
- ե) էներգապիտակավորման սխեմաները՝ բացառությամբ այն սխեմաների, որոնք Միության իրավունքի համաձայն պարտադիր են եւ կիրառելի անդամ պետություններում.
- զ) վերապատրաստումներն ու ուսուցումը, այդ թվում՝ խորհրդատվական բնույթի ծրագրերը, որոնք հանգեցնում են էներգաարդյունավետ տեխնոլոգիայի կամ մեթոդների կիրառմանը եւ ունեն վերջնական էներգասպառումը կրճատելու ազդեցություն:

Անդամ պետություններն ամենաուշը 2013 թվականի դեկտեմբերի 5-ին Հանձնաժողովին ծանուցում են քաղաքականության այն միջոցառումների մասին, որոնք նախատեսում են ընդունել առաջին ենթապարբերության եւ 20(6) հոդվածի նպատակներով՝ հիմնվելով V հավելվածի 4-րդ կետով նախատեսված շրջանակի վրա, ինչպես նաեւ ներկայացնելով, թե ինչպես են նրանք ապահովելու էներգախնայողության պահանջված ծավալը: Երկրորդ ենթապարբերությունում եւ 20(6) հոդվածում նշված քաղաքականության միջոցառումների դեպքում այդ ծանուցումը ցույց է տալիս, թե ինչպես են 10-րդ պարբերությամբ նախատեսված չափորոշիչները բավարարվում: Քաղաքականության այնպիսի միջոցառումների դեպքում, որոնք տարբերվում են երկրորդ ենթապարբերությունում եւ 20(6) հոդվածում նշված միջոցառումներից, անդամ պետությունները բացատրում են, թե ինչպես է ապահովվում էներգախնայողությունների, վերահսկողության եւ ստուգման համարժեք մակարդակը: Հանձնաժողովը կարող է ծանուցմանը հաջորդող երեք ամիսների ընթացքում փոփոխությունների վերաբերյալ առաջարկություններ ներկայացնել:

10. Չսահմանափակելով 11-րդ պարբերությունը՝ 9-րդ պարբերության երկրորդ ենթապարբերության եւ 20(6) հոդվածի համաձայն իրականացված քաղաքականության միջոցառումներին ներկայացվող չափանիշները հետեւյալն են՝

- ա) քաղաքականության միջոցառումներով նախատեսվում է մինչեւ 2020 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած առնվազն երկու միջանկյալ ժամանակահատված, ինչպես նաեւ այդ միջոցառումները հանգեցնում են 1-ին պարբերությամբ սահմանված հավակնության մակարդակի ապահովմանը.
- բ) համապատասխան դեպքերում սահմանվում է յուրաքանչյուր լիազորված կողմի, մասնակից կողմի կամ իրականացնող պետական մարմնի պարտավորությունը.
- գ) էներգախնայողությունը, որը պետք է ապահովվի, սահմանվում է թափանցիկ կերպով.
- դ) քաղաքականության միջոցառմամբ պահանջվող կամ ապահովման ենթակա էներգախնայողության ծավալն արտահայտվում է վերջնական կամ առաջնային էներգիայի սպառմամբ՝ օգտագործելով IV հավելվածով նախատեսված փոխարկման գործոնները.
- ե) էներգախնայողությունը հաշվարկվում է՝ օգտագործելով V հավելվածի 1-ին եւ 2-րդ կետերով նախատեսված մեթոդներն ու սկզբունքները.
- զ) էներգախնայողությունը հաշվարկվում է՝ օգտագործելով V հավելվածի 3-րդ կետերով նախատեսված մեթոդներն ու սկզբունքները.
- է) ապահովված էներգախնայողության տարեկան հաշվետվությունը տրամադրվում է մասնակից կողմերի կողմից, եթե դա իրագործելի չէ եւ հասանելի չէ հանրությանը.

- ը) եթե առաջընթացը բավարար չէ, ապահովվում է արդյունքների վերահսկողություն, եւ նախատեսվում են համապատասխան միջոցառումներ.
- թ) ներմուծվում է հսկողության համակարգ, որը նաեւ ներառում է էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումների վիճակագրական առումով կարելիություն ներկայացնող մասի անկախ ստուգում. եւ
- ժ) էներգախնայողության տարեկան միտումների վերաբերյալ տվյալները հրապարակվում են ամեն տարի:

11. Անդամ պետություններն ապահովում են, որ 9-րդ պարբերության երկրորդ ենթապարբերության «ա» կետում նշված հարկերը համապատասխանեն 10-րդ պարբերության «ա», «բ», «գ», «դ», «զ», «ը» եւ «ժ» կետերում թվարկված չափանիշներին:

Անդամ պետություններն ապահովում են, որ 9-րդ պարբերության երկրորդ ենթապարբերության «գ» կետում նշված կանոնակարգերն ու կամավոր համաձայնագրերը համապատասխանեն 10-րդ պարբերության «ա», «բ», «գ», «դ», «ե», «է», «ը», «թ» եւ «ժ» կետերում թվարկված չափանիշներին:

Անդամ պետություններն ապահովում են, որ 9-րդ պարբերության երկրորդ ենթապարբերության մեջ նշված քաղաքականության այլ միջոցառումներ եւ 20(6)-հոդվածում նշված էներգաարդյունավետության ազգային հիմնադրամները համապատասխանեն 10-րդ պարբերության «ա», «բ», «գ», «դ», «ե», «ը», «թ» եւ «ժ» կետերում թվարկված չափանիշներին:

12. Անդամ պետություններն ապահովում են, որ այն դեպքում, երբ քաղաքականության միջոցառումների կամ առանձին գործողությունների ազդեցությունները համընկնում են, էներգախնայողության կրկնակի հաշվարկ չիրականացվի:

Հոդված 8

Էներգետիկ աուդիտները եւ էներգակառավարման համակարգերը

1. Անդամ պետությունները խթանում են բոլոր վերջնական սպառողների համար բարձր մակարդակով իրականացվող այնպիսի էներգետիկ աուդիտների մատչելիությունը, որոնք ծախսարդյունավետ են եւ՝

ա) իրականացվում են անկախ ձեւով՝ որակավորված եւ (կամ) հավատարմագրված փորձագետների կողմից՝ որակավորման չափանիշներին համապատասխան, կամ

բ) իրականացվում եւ վերահսկվում են անկախ մարմինների կողմից՝ ազգային օրենսդրությանը համապատասխան:

Առաջին ենթապարբերության մեջ նշված էներգետիկ աուդիտները կարող են իրականացվել ներքին փորձագետների կամ էներգետիկ աուդիտորների կողմից այն դեպքում, երբ շահագրգիռ անդամ պետությունը դրանց որակն ապահովելու եւ ստուգելու նպատակով ներմուծել է սխեմա, այդ թվում՝ անհրաժեշտության դեպքում կատարել իրենց կողմից իրականացված բոլոր էներգետիկ աուդիտների առնվազն վիճակագրական առումով կարելորություն ներկայացնող տոկոսի պատահական սկզբունքով ընտրությունը:

Էներգետիկ աուդիտների եւ էներգակառավարման համակարգերի բարձր մակարդակը երաշխավորելու նպատակով անդամ պետությունները VI հավելվածի հիման վրա սահմանում են էներգետիկ աուդիտների համար նախատեսված թափանցիկ եւ ոչ խտրական նվազագույն չափանիշներ:

Էներգետիկ աուդիտները չեն ներառում այնպիսի դրույթներ, որոնցով կանխվում է աուդիտի արդյունքների փոխանցումը որեւէ որակավորված (հավատարմագրված) էներգետիկ ծառայություններ մատուցողի՝ պայմանով, որ սպառողը դրան չի առարկում:

2. Անդամ պետությունները ՓՄՁ-ներին էներգետիկ աուդիտներ անցնելու եւ այդ աուդիտների հիման վրա ներկայացված հանձնարարականները հետագայում կատարելու հարցում խրախուսելուն նպատակաուղղված ծրագրեր են մշակում:

Թափանցիկ եւ ոչ խտրական չափանիշների հիման վրա եւ չսահմանափակելով Միության «Պետական աջակցության մասին» օրենքը՝ անդամ պետությունները կարող են էներգետիկ աուդիտների հետ կապված ծախսերը, ինչպես նաեւ այդ աուդիտների հիման վրա ներկայացված բավականին ծախսարդյունավետ հանձնարարականները կատարելու հետ կապված ծախսերը հոգալու նպատակով ՓՄՁ—ների համար նախատեսված աջակցության սխեմաներ սահմանել, այդ թվում այն դեպքում, երբ նրանք կամավոր համաձայնագրեր են կնքել, եթե առաջարկված միջոցառումներն իրականացվել են:

Անդամ պետությունները, այդ թվում՝ իրենց համապատասխան ներկայացուցիչ եւ միջնորդ կազմակերպությունների միջոցով ՓՄՁ-ների ուշադրությանն են ներկայացնում կոնկրետ օրինակներ այն մասով, թե էներգակառավարման համակարգերն ինչպես կարող են աջակցել իրենց բիզնեսներին: Հանձնաժողովն աջակցում է անդամ պետություններին այդ բնագավառի լավագույն գործելակերպերի փոխանակմանը օժանդակելու միջոցով:

3. Անդամ պետությունները նաեւ մշակում են ծրագրեր՝ համապատասխան խորհրդատվական ծառայությունների միջոցով այդպիսի աուդիտների օգուտների վերաբերյալ տնային տնտեսությունների շրջանում իրազեկվածությունը բարձրացնելու նպատակով:

Բավարար թվով փորձագետներ ապահովելու համար անդամ պետությունները խրախուսում են էներգետիկ աուդիտորների որակավորման նպատակով վերապատրաստման ծրագրերի իրականացումը:

4. Անդամ պետություններն ապահովում են, որ ՓՄՁ չհամարվող ձեռնարկություններն ամենաուշը 2015 թվականի դեկտեմբերի 5-ին եւ նախորդող էներգետիկ աուդիտի օրվանից սկսած առնվազն յուրաքանչյուր չորս տարին մեկ

ազգային օրենսդրությանը համապատասխան ենթարկվեն որակավորված եւ (կամ) հավատարմագրված փորձագետների կողմից անկախ եւ ծախսարդյունավետ ձեւով իրականացվող ու վերահսկվող էներգետիկ աուդիտի:

5. Համարվում է, որ էներգետիկ աուդիտները համապատասխանում են 4-րդ պարբերության պահանջներին, եթե դրանք իրականացվում են անկախ ձեւով, ըստ VI հավելվածի հիման վրա սահմանված նվազագույն չափանիշների, շահագրգիռ կողմերի կազմակերպությունների եւ շահագրգիռ անդամ պետության կողմից նշանակված մարմնի միջեւ կնքված կամավոր համաձայնագրերին համապատասխան, ինչպես նաեւ վերահսկվում են անդամ պետության կամ այլ մարմինների կողմից, որոնց իրավասու մարմինները պատվիրակել են նշված պարտավորությունը, կամ Հանձնաժողովի կողմից:

Էներգետիկ ծառայություններ առաջարկող շուկայի մասնակիցներին տրվող հնարավորությունները պետք է հիմնված լինեն թափանցիկ եւ ոչ խտրական չափանիշների հիման վրա:

6. ՓՄՁ չհամարվող եւ համապատասխան եվրոպական կամ միջազգային չափանիշներին համապատասխան անկախ մարմնի կողմից հաստատված՝ էներգիայի կամ շրջակա միջավայրի կառավարման համակարգ ներդրած ձեռնարկություններն ազատվում են 4-րդ պարբերության պահանջներից այն պայմանով, որ անդամ պետություններն ապահովում են, որ նշված կառավարման համակարգը ներառի VI հավելվածի հիման վրա սահմանված նվազագույն չափանիշներին համապատասխան իրականացվող էներգետիկ աուդիտ:

7. Էներգետիկ աուդիտները կարող են առանձին իրականացվել կամ շրջակա միջավայրի ավելի ծավալուն աուդիտի մաս կազմել: Անդամ պետությունները կարող են պահանջել, որ գործող կամ նախատեսվող տարածքային ջեռուցման կամ հովացման ցանցին միանալու տեխնիկական եւ տնտեսական իրագործելիության գնահատումն էներգետիկ աուդիտի մաս կազմի:

Չսահմանափակելով Միության «Պետական աջակցության մասին» օրենքը՝ անդամ պետությունները կարող են էներգետիկ աուդիտների եւ նմանատիպ միջոցառումների արդյունքում ներկայացված հանձնարարարականները կատարելու նպատակով խրախուսանքի եւ աջակցության սխեմաներ իրականացնել:

Հոդված 9

Չափումը

1. Անդամ պետություններն ապահովում են, որ այնքանով, որքանով դա տեխնիկապես հնարավոր է, ֆինանսական առումով ողջամիտ եւ հնարավոր էներգախնայողությանը համարժեք, էլեկտրաէներգիայի, բնական գազի, տարածքային ջեռուցման, հովացման եւ կենցաղային տաք ջրամատակարարման վերջնական սպառողներին տրամադրվեն մրցակցային գներ ունեցող առանձին չափիչ սարքեր, որոնք ճշգրտորեն արտացոլում են վերջնական սպառողի էներգասպառման փաստացի ծավալը եւ տեղեկություններ են տրամադրում օգտագործման իրական ժամանակահատվածի վերաբերյալ:

Մրցակցային գներ ունեցող այդպիսի առանձին չափիչ սարքերը մշտապես տրամադրվում են, երբ՝

- ա) փոխարինվում է գործող չափիչ սարքը, եթե դա տեխնիկապես հնարավոր է կամ նախատեսված կարճաժամկետ հնարավոր խնայողությունների առումով ծախսարդյունավետ է.
- բ) որեւէ նոր շենքում միացումներ են իրականացվում կամ որեւէ շենքում 2010/31/ԵՄ հրահանգին համապատասխան հիմնանորոգումներ են կատարվում:

2. Այն դեպքում, երբ եւ այնքանով, որքանով անդամ պետությունները 2009/72/ԵՀ եւ 2009/73/ԵՀ հրահանգներին համապատասխան բնական գազի եւ

(կամ) էլեկտրաէներգիայի չափման բանական համակարգեր եւ խելացի չափիչ սարքեր են ներդնում՝

- ա) նրանք ապահովում են, որ չափման համակարգերը վերջնական սպառողներին տեղեկություններ տրամադրեն օգտագործման փաստացի ժամանակահատվածի վերաբերյալ, եւ որ էներգաարդյունավետության նպատակներն ու վերջնական սպառողների օգուտները լիարժեք հաշվի առնվեն չափիչ սարքերի նվազագույն ֆունկցիոնալությունը եւ շուկայի մասնակիցների վրա դրվող պարտավորությունները սահմանելիս.
- բ) նրանք ապահովում են խելացի չափիչ սարքերի եւ տվյալների փոխանցման անվտանգությունը, ինչպես նաեւ վերջնական սպառողների տվյալների գաղտնիությունը՝ Միության տվյալների պաշտպանության եւ գաղտնիության վերաբերյալ օրենսդրությանը համապատասխան.
- գ) էլեկտրաէներգիայի դեպքում վերջնական սպառողի պահանջով անդամ պետությունները չափիչ սարքերի օպերատորներից պահանջում են ապահովել, որ չափիչ սարքը կամ սարքերը նաեւ չափեն վերջնական սպառողի բնակավայրից ցանց փոխանցված էլեկտրաէներգիան.
- դ) նրանք ապահովում են, որ այն դեպքում, երբ վերջնական սպառողները պահանջում են իրենց էլեկտրաէներգիայի ներհոսքի ու արտահոսքի վերաբերյալ չափման տվյալները, դրանք հասանելի լինեն իրենց կամ վերջնական սպառողի անունից գործող երրորդ կողմին հեշտ ընկալելի ձեւաչափով, որը նրանք կարող են օգտագործել նույնանման պայմաններում գործարքների համեմատություն կատարելու նպատակով.
- ե) նրանք պահանջում են խելացի չափիչ սարքերի տեղադրման ընթացքում սպառողներին տրամադրել համապատասխան

խորհրդատվություն եւ տեղեկություններ՝ մասնավորապես չափիչ սարքերի ցուցմունքների կառավարման եւ էներգասպառման վերահսկողության ողջ ներուժի վերաբերյալ:

3. Երբ ջեռուցումը եւ հովացումը կամ տաք ջուրը շենքին մատակարարվում են տարածքային ջեռուցման ցանցից կամ մի քանի շենքեր սպասարկող կենտրոնական աղբյուրից, ապա ջերմային էներգիայի կամ տաք ջրի չափիչ սարքը տեղադրվում է ջերմափոխանակչի կամ մատակարարման կետի հատվածում:

Կենտրոնական ջեռուցման (հովացման) աղբյուր ունեցող, տարածքային ջեռուցման ցանցից կամ մի քանի շենքեր սպասարկող կենտրոնական աղբյուրից մատակարարում ստացող բազմաբնակարան կամ բազմաֆունկցիոնալ շենքերում անհատական սպառման չափիչ սարքերը նաեւ տեղադրվում են մինչեւ 2016 թվականի դեկտեմբերի 31-ը՝ յուրաքանչյուր առանձին հատվածի ջեռուցման, հովացման մատակարարումը կամ տաք ջրամատակարարումը չափելու նպատակով, եթե դա տեխնիկապես իրագործելի է եւ ծախսարդյունավետ: Եթե ջերմային էներգիան չափելու համար առանձին չափիչ սարքերի օգտագործումը տեխնիկապես իրագործելի կամ ծախսարդյունավետ չէ, ապա յուրաքանչյուր ռադիատորի ջերմասպառումը չափելու նպատակով օգտագործվում են սպառված ջերմային էներգիայի առանձին բաշխիչներ այն դեպքում, երբ տվյալ անդամ պետությունը չի մատնանշում, որ սպառված ջերմության նման բաշխիչների տեղադրումը ծախսարդյունավետ չի լինի: Այդ դեպքում կարող են դիտարկվել ջերմային էներգիայի սպառումը չափելու ծախսարդյունավետ այլընտրանքային մեթոդներ:

Եթե բազմաբնակարան շենքերին մատակարարվում է տարածքային ջեռուցում կամ հովացում, կամ երբ այդպիսի շենքերի դեպքում գերիշխում են ընդհանուր ջեռուցման կամ հովացման համակարգերը, ապա անդամ պետություններն այդպիսի շենքերում կարող են ներկայացնել ստորերկրյա տաք ջրերի կամ տաք ջրի սպառման հետ կապված ծախսերի տեղաբաշխման թափանցիկ կանոններ՝

առանձին սպառման հաշվարկների մասով թափանցիկություն եւ ճշգրտություն ապահովելու նպատակով: Անհրաժեշտության դեպքում այդ կանոնները ներառում են ուղեցույցներ այն միջոցների վերաբերյալ, ըստ որոնց կարելի է տեղաբաշխել հետեւյալ նպատակներով օգտագործվող ջերմային էներգիայի եւ (կամ) տաք ջրի հետ կապված ծախսերը.

- ա) կենցաղային կարիքների համար օգտագործվող տաք ջուր.
- բ) ընդհանուր տարածքների ջեռուցման նպատակով շենքի կայանքից անջատվող ջերմային էներգիա (այն դեպքում, երբ աստիճանների մոտ ու միջանցքներում տեղադրված են ռադիատորներ).
- գ) բնակարանների ջեռուցման նպատակով:

Հոդված 10

Հաշիվների վերաբերյալ տեղեկություններ

1. Այն դեպքում, երբ սպառողները չունեն 2009/72/ԵՀ եւ 2009/73/ԵՀ հրահանգներում նշված խելացի չափիչ սարքեր, անդամ պետություններն ապահովում են, որ մինչեւ 2014 թվականի դեկտեմբերի 31-ը սույն հրահանգով կարգավորվող բոլոր ոլորտների, այդ թվում՝ էներգաբաշխիչների, բաշխիչ համակարգի օպերատորների եւ էներգիայի մանրածախ իրացմամբ զբաղվող ընկերությունների դեպքում հաշիվների վերաբերյալ ներկայացված տեղեկությունները լինեն ճշգրիտ եւ հիմնված փաստացի սպառման վրա՝ VII հավելվածի 1.1 կետին համապատասխան, եթե դա տեխնիկապես հնարավոր է եւ տնտեսական առումով հիմնավորված:

Այդ պարտավորությունը կարող է իրականացվել վերջնական սպառողների կողմից ցուցմունքների կանոնավոր ինքնագրանցման համակարգի օգնությամբ, որի միջոցով նրանք իրենց չափիչ սարքերի ցուցմունքները հաղորդում են էներգիա մատակարարողին: Միայն այն դեպքում, երբ վերջնական սպառողը

հաշիվներ ներկայացնելու տվյալ ժամանակամիջոցի համար չափիչ սարքի ցուցմունքները չի ներկայացրել, հաշիվների տվյալները հիմնվում են սպառման նախահաշվի կամ ֆիքսված դրույքաչափի վրա:

2. 2009/72/ԵՀ եւ 2009/73/ԵՀ հրահանգներին համապատասխան տեղադրված չափիչ սարքերը հնարավոր են դարձնում փաստացի սպառման հիման վրա հաշիվների վերաբերյալ ճշգրիտ տեղեկություններ ներկայացնելը: Անդամ պետություններն ապահովում են, որ վերջնական սպառողների համար մատչելի լինի մանրակրկիտ ինքնահսկողությունը հնարավոր դարձնող՝ ժամանակագրական կարգով ներկայացված սպառման վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվությունը:

Ժամանակագրական կարգով ներկայացված սպառման վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվությունը ներառում է՝

- ա) առնվազն նախորդող երեք տարիների ընթացքում կուտակված տվյալները կամ մատակարարման վերաբերյալ պայմանագիրը կնքելու ժամանակահատվածից ի վեր կուտակված տվյալները, եթե այդ ժամանակահատվածն ավելի կարճ է: Տվյալները պետք է համապատասխանեն այն ժամանակամիջոցներին, որոնց համար հաճախակի ներկայացվել են հաշիվների վերաբերյալ տեղեկություններ, եւ
- բ) մանրամասն տվյալներ ցանկացած օրվա, շաբաթվա, ամսվա եւ տարվա կտրվածքով օգտագործման ժամանակահատվածին համապատասխան: Առնվազն նախորդող 24 ամիսներին կամ մատակարարման վերաբերյալ պայմանագիրը կնքելու ժամանակահատվածին վերաբերող տվյալներն այդ ժամանակահատվածն ավելի կարճ լինելու դեպքում պետք է համացանցի կամ չափիչ սարքի միջերեսի (ինտերֆեյս) միջոցով հասանելի լինեն վերջնական սպառողներին:

3. Անկախ խելացի չափիչ սարքերի տեղադրումից՝ անդամ պետությունները՝

- ա) պահանջում են, որ այնքանով, որքանով վերջնական սպառողների էներգիայի հաշիվների կամ ժամանակագրական կարգով ներկայացված սպառման վերաբերյալ տեղեկատվությունը հասանելի է, այդ տեղեկատվությունը վերջնական սպառողի պահանջով նաեւ հասանելի լինի վերջնական սպառողի կողմից նշված էներգետիկ ծառայություններ մատուցողին.
- բ) ապահովում են, որ վերջնական սպառողներին առաջարկվի հաշիվների վերաբերյալ էլեկտրոնային եղանակով տեղեկություններ ներկայացնելու եւ էլեկտրոնային հաշիվների տարբերակը, եւ որ նրանք ըստ պահանջի ստանան հստակ եւ հասկանելի բացատրություն այն մասին, թե ինչպես է կազմվել իրենց հաշիվը, հատկապես այն դեպքում, երբ հաշիվները հիմնված չեն փաստացի սպառման վրա.
- գ) ապահովում են, որ հաշվի հետ միասին նաեւ պատշաճ տեղեկություններ հասանելի լինեն՝ վերջնական սպառողներին VII հավելվածին համապատասխան էներգիայի ընթացիկ ծախսերի վերաբերյալ սպառիչ հաշվետվություններ տրամադրելու նպատակով.
- դ) կարող են սահմանել, որ վերջնական սպառողի պահանջով այդ հաշիվներում պարունակվող տեղեկությունները չդիտարկվեն որպես վճարում կատարելու պահանջ: Այդպիսի դեպքերում անդամ պետություններն ապահովում են, որ էներգիայի աղբյուրներ մատակարարողները փաստացի վճարումների մասով ճկուն կարգավորումներ առաջարկեն.
- ե) պահանջում են, որ էներգիայի ծախսերի վերաբերյալ տեղեկություններն ու նախահաշիվն ըստ պահանջի ժամանակին եւ հեշտ ընկալելի ձեւաչափով տրամադրվեն սպառողներին՝ վերջիններիս հնարավորություն տալով նույնանման պայմաններում գործարքների համեմատություն կատարել:

Հոդված 11

Չափման եւ հաշիվների վերաբերյալ տեղեկությունների հասանելիության հետ կապված ծախսերը

1. Անդամ պետություններն ապահովում են, որ վերջնական սպառողներն անվճար ստանան իրենց բոլոր հաշիվներն ու հաշիվների վերաբերյալ տեղեկությունները, եւ որ նրանց համար նաեւ պատշաճորեն եւ անվճար հասանելի լինեն իրենց սպառման վերաբերյալ տվյալները:
2. Չհակասելով 1-ին պարբերությանը՝ 9(3) հոդվածին համապատասխան բազմաբնակարան եւ բազմաֆունկցիոնալ շենքերում ջեռուցման եւ հովացման առանձին սպառման մասով հաշիվների վերաբերյալ տեղեկությունների հետ կապված ծախսերի բաշխումն իրականացվում է ոչ առետրային հիմունքներով: Ծառայություն մատուցող կամ էներգիայի տեղական մատակարարող համարվող երրորդ կողմին առաջադրանքներ հանձնարարելու հետ կապված ծախսերը, որոնք ներառում են այդ շենքերում փաստացի առանձին սպառման չափումը, տեղաբաշխումն ու հաշվարկումը, կարող են դրվել վերջնական սպառողների վրա այնքանով, որքանով այդ ծախսերը հիմնավորված են:

Հոդված 12

Սպառողների համար նախատեսված տեղեկություններն ու լայն հնարավորություններ ընձեռող ծրագրերը

1. Անդամ պետությունները պատշաճ միջոցառումներ են ձեռնարկում փոքր էներգասպառողների, այդ թվում՝ կենցաղային սպառողների արդյունավետ էներգաօգտագործումը խթանելու եւ հեշտացնելու նպատակով: Այդ միջոցառումները կարող են ազգային ռազմավարության մաս կազմել:
2. 1-ին պարբերության նպատակներով այդ միջոցառումները ներառում են «ա» եւ «բ» կետերում թվարկված բաղադրիչներից մեկը կամ մեկից ավելին.

- ա) վարքագծային փոփոխությունների խթանմանն ուղղված մի շարք գործիքներ եւ քաղաքականություններ, որոնք կարող են ներառել հետեւյալը՝
- i) հարկաբյուջետային խթաններ,
 - ii) ֆինանսական միջոցների, դրամաշնորհների կամ սուբսիդիաների հասանելիություն,
 - iii) տեղեկատվության տրամադրում,
 - iv) օրինակելի նախագծեր,
 - v) աշխատավայրում անցկացվող վարժանքներ.
- բ) սպառողներին եւ սպառողների կազմակերպություններին խելացի չափիչ սարքերի հնարավոր գործադրման գործընթացում ներգրավելու եղանակներ եւ միջոցներ՝ հետեւյալը փոխանցելու միջոցով.
- i) էներգաօգտագործման ոլորտում ծախսարդյունավետ եւ հեշտ իրագործելի փոփոխությունների մասին տեղեկություններ,
 - ii) էներգաարդյունավետ միջոցառումների վերաբերյալ տեղեկություններ:

Հոդված 13

Տույժերը

Անդամ պետությունները սահմանում են 7-11-րդ հոդվածների եւ 18(3) հոդվածի համաձայն ընդունված ազգային դրույթների խախտման դեպքում կիրառվող տույժերի վերաբերյալ կանոններ եւ ձեռնարկում բոլոր անհրաժեշտ միջոցները՝ դրանց կիրառումն ապահովելու նպատակով: Նախատեսված տույժերը պետք է լինեն արդյունավետ, համաչափ եւ տարհամոզիչ: Անդամ պետություններն այս դրույթների մասին ամենաուշը 2011 թվականի դեկտեմբերի 4-ին ծանուցում են

Հանձնաժողովին, ինչպես նաև անհապաղ Հանձնաժողովին ծանուցում են հետագայում դրանցում կատարվող ցանկացած փոփոխության մասին:

ԳԼՈՒԽ III

ԷՆԵՐԳԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 14

Ջեռուցման եւ հովացման արդյունավետության խթանումը

1. Մինչեւ 2015 թվականի դեկտեմբերի 31-ն անդամ պետությունները պետք է կատարեն բարձր արդյունավետություն ապահովող համակցված արտադրություն եւ արդյունավետ տարածքային ջեռուցում ու հովացում կիրառելու ներուժի համապարփակ գնահատում, որը պարունակում է VIII հավելվածով նախատեսված տեղեկությունը, ինչպես նաև այդ գնահատման մասին ծանուցեն Հանձնաժողովին: Եթե նրանց կողմից արդեն իսկ կատարվել է համարժեք գնահատում, ապա վերջիններս պետք է դրա մասին ծանուցեն Հանձնաժողովին: Համապարփակ գնահատման դեպքում պետք է լիովին հաշվի առնել 2004/8/ԵՀ հրահանգին համապատասխան իրականացված բարձր արդյունավետություն ապահովող համակցված արտադրության մասով ազգային ներուժի վերլուծությունը:

Հանձնաժողովի պահանջով հինգ տարին մեկ անգամ այդ գնահատումը թարմացվում է, եւ այդ մասին ծանուցվում է Հանձնաժողովին: Հանձնաժողովը նման պահանջ է ներկայացնում սահմանված օրվանից առնվազն մեկ տարի առաջ:

2. Անդամ պետություններն ընդունում են այնպիսի քաղաքականություն, որով խրախուսվում է տեղական եւ տարածաշրջանային մակարդակով ջեռուցման եւ հովացման արդյունավետ համակարգերի, մասնավորապես՝ բարձր

արդյունավետություն ապահովող համակցված արտադրության միջոցով աշխատող համակարգերի կիրառման ներուժը պատշաճ ձևով հաշվի առնելը: Պետք է հաշվի առնել ջերմային էներգիայի՝ տեղական եւ տարածաշրջանային շուկաները զարգացնելու ներուժը:

3. 1-ին պարբերության մեջ նշված գնահատման նպատակով անդամ պետություններն իրենց տարածքի առնչությամբ կատարում են ծախսերի եւ օգուտների վերլուծություն՝ ըստ կլիմայական պայմանների, տնտեսական իրագործելիության եւ տեխնիկական նպատակահարմարության՝ IX հավելվածի 1-ին մասին համապատասխան: Ծախսերի եւ օգուտների վերլուծությունը հնարավոր է դարձնում հեշտացնել ջեռուցման եւ հովացման հետ կապված կարիքները բավարարելու նպատակով ամենաճախսարդյունավետ եւ ռեսուրսների խնայման առումով արդյունավետ լուծումները վերհանելու գործընթացը: Ծախսերի եւ օգուտների այդ վերլուծությունը կարող է Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի՝ «Շրջակա միջավայրի վրա որոշ ծրագրերի եւ նախագծերի ազդեցությունների գնահատման մասին» 2001 թվականի հունիսի 27-ի 2001/42/ԵՎ հրահանգով սահմանված շրջակա միջավայրի գնահատման մաս կազմել²⁴:

4. Եթե 1-ին պարբերությունում նշված գնահատման եւ 3-րդ պարբերությունում նշված վերլուծության արդյունքում բացահայտվում է բարձր արդյունավետություն ապահովող համակցված արտադրություն եւ (կամ) արդյունավետ տարածքային ջեռուցում ու հովացում կիրառելու ներուժ, որի օգուտները գերազանցում են ծախսերը, ապա անդամ պետությունները համապատասխան միջոցառումներ են իրականացնում արդյունավետ տարածքային ջեռուցման եւ հովացման ենթակառուցվածքների զարգացման եւ (կամ) բարձր արդյունավետություն ապահովող համակցված արտադրության զարգացումն ու արտանետվող ջերմային էներգիայից եւ վերականգնվող էներգիայի աղբյուրներից ստացվող ջեռուցման եւ հովացման կիրառումը 1-ին, 5-րդ եւ 7-րդ պարբերություններին համապատասխան համապատասխանեցնելու ուղղությամբ:

²⁴ ՊՏ թիվ L 197, 21.7.2001 թ., էջ 30:

Եթե 1-ին պարբերությունում նշված գնահատման եւ 3-րդ պարբերությունում նշված վերլուծության արդյունքում չի բացահայտվում որեւէ ներուժ, որի օգուտները գերազանցում են ծախսերը, այդ թվում՝ 5-րդ պարբերությունում նշված ծախսերի եւ օգուտների վերլուծությունն իրականացնելու հետ կապված վարչական ծախսերը, ապա շահագրգիռ անդամ պետությունները կարող են այդ կայանքներն ազատել այդ պարբերությամբ սահմանված պահանջներից:

5. Անդամ պետություններն ապահովում են, որ IX հավելվածի 2-րդ մասին համապատասխան ծախսերի եւ օգուտների վերլուծությունն իրականացվի 2014 թվականի հունիսի 5-ից հետո՝ այն ժամանակ երբ՝

- ա) նախատեսվի 20 ՄՎտ-ն գերազանցող ընդհանուր ջերմային հզորություն ունեցող եւ ջերմային էլեկտրաէներգիա արտադրող նոր կայանք, որպեսզի գնահատվեն կայանքը որպես բարձր արդյունավետություն ապահովող համակցված արտադրությամբ աշխատող կայանք շահագործման հանձնելու ծախսերն ու օգուտները.
- բ) 20 ՄՎտ-ն գերազանցող ընդհանուր ջերմային հզորություն ունեցող եւ ջերմային էլեկտրաէներգիա արտադրող՝ գոյություն ունեցող կայանքն էապես բարեկարգվի՝ գնահատելու համար այն բարձր արդյունավետություն ապահովող համակցված արտադրության փոխարկելու հետ կապված ծախսերն ու օգուտները.
- գ) նախատեսվի կամ էապես բարեկարգվի 20 ՄՎտ-ն գերազանցող ընդհանուր ջերմային հզորություն ունեցող եւ նպաստավոր ջերմաստիճանում արտանետվող ջերմային էներգիա առաջացնող արդյունաբերական կայանք՝ գնահատելու համար տնտեսապես հիմնավորված պահանջարկը բավարարելու նպատակով արտանետվող ջերմային էներգիայի, այդ թվում՝ համակցված արտադրության միջոցով օգտագործման հետ կապված ծախսերն ու օգուտները, ինչպես նաեւ

տարածքային ջեռուցման եւ հովացման ցանցին այդ կայանքի միացման հետ կապված ծախսերն ու օգուտները.

- դ) նախատեսվի տարածքային ջեռուցման եւ հովացման նոր ցանց կամ գործող տարածքային ջեռուցման կամ հովացման ցանցում նախատեսվի 20 ՄՎտ-ն գերազանցող ընդհանուր ջերմային հզորություն ունեցող էներգաարտադրող նոր կայանք, կամ այդպիսի գործող կայանքը ենթակա լինի էական բարեկարգման՝ գնահատելու համար մոտակա արդյունաբերական կայանքներից արտանետվող ջերմային էներգիայի օգտագործման հետ կապված ծախսերն ու օգուտները:

2009/31/ԵՀ հրահանգով նախատեսված կարգով ածխաթթու գազի ստորերկրյա պահեստավորման համար այրման կայանքների արտադրած ածխաթթու գազի հավաքման նպատակով սարքավորումների տեղադրումը սույն պարբերության «բ», «գ» եւ «դ» կետերի նպատակներով չի համարվում բարեկարգում:

Անդամ պետությունները կարող են պահանջել, որ ծախսերի եւ օգուտների՝ «գ» եւ «դ» կետերում նշված վերլուծությունն իրականացվի տարածքային ջեռուցման եւ հովացման ցանցերի շահագործման համար պատասխանատու ընկերությունների հետ համագործակցությամբ:

6. Անդամ պետությունները 5-րդ պարբերության պահանջներից կարող են ազատել՝

- ա) էլեկտրաէներգիա արտադրող գերծանրաբեռնված եւ վթարային նշանակության էլեկտրաէներգիա արտադրող այն կայանքները, որոնք, ըստ նախատեսվածի, հինգ տարի ժամանակահատվածում որպես սահող միջին պետք է տարեկան շահագործվեն 1500 ժամ՝ անդամ պետությունների կողմից սահմանված ստուգման ընթացակարգի հիման վրա, որով ապահովվում է այդ բացառման չափանիշի կատարումը.

- բ) ատոմային էներգիայի կայանքները.
- գ) այն կայանքները, որոնք պետք է տեղակայվեն 2009/31/ԵՀ հրահանգով հաստատված ստորերկրյա պահեստավորման վայրի մոտ:

Անդամ պետությունները նաեւ կարող են սահմանել արտանետվող օգտակար ջերմային էներգիայի քանակով, ջերմային էներգիայի նկատմամբ պահանջարկով կամ արդյունաբերական կայանքների եւ տարածքային ջեռուցման ցանցերի միջեւ առկա հեռավորությամբ արտահայտված շեմեր՝ առանձին կայանքները 5-րդ պարբերության «գ» եւ «դ» կետերի դրույթների պահանջներից ազատելու նպատակով:

Անդամ պետությունները Հանձնաժողովին ամենաուշը մինչեւ 2013 թվականի դեկտեմբերի 31-ը ծանուցում են սույն պարբերությանը համապատասխան ընդունված բացառությունների եւ հետագայում դրանցում կատարվող ցանկացած փոփոխությունների մասին:

7. Անդամ պետություններն ընդունում են 2009/72/ԵՀ հրահանգի 7-րդ հոդվածում նշված լիազորման չափանիշները կամ դրանց համարժեք թույլտվության չափանիշներ՝

- ա) 1-ին պարբերության մեջ նշված համապարփակ գնահատման արդյունքները հաշվի առնելու նպատակով.
- բ) 5-րդ պարբերության պահանջների կատարումն ապահովելու նպատակով, եւ
- գ) 5-րդ պարբերության մեջ նշված ծախսերի եւ օգուտների վերլուծության արդյունքները հաշվի առնելու նպատակով.

8. Անդամ պետությունները կարող են առանձին կայանքներն ազատել 7-րդ պարբերության մեջ նշված լիազորման կամ թույլտվության չափանիշների համաձայն այնպիսի տարբերակներ կիրառելու պահանջից, որոնց օգուտները գերազանցում են ծախսերը, եթե դա անելու համար առկա են օրենքից բխող,

սեփականության կամ ֆինանսական միջոցների հետ կապված լուրջ պատճառներ: Այդպիսի դեպքերում շահագրգիռ անդամ պետությունն իր որոշման վերաբերյալ հիմնավորված ծանուցում է ներկայացնում Հանձնաժողով այդ որոշումն ընդունելու օրվանից երեք ամսվա ընթացքում:

9. Սույն հոդվածի 5-րդ, 6-րդ, 7-րդ եւ 8-րդ պարբերությունները կիրառվում են այն կայանքների նկատմամբ, որոնք կարգավորվում են 2010/75/ԵՄ հրահանգով՝ չհակասելով այդ հրահանգի պահանջներին:

10. II հավելվածի «գ» կետում նշված՝ արդյունավետության ներդաշնակեցված բազային արժեքների հիման վրա անդամ պետություններն ապահովում են, որ բարձր արդյունավետություն ապահովող համակցված արտադրությամբ արտադրվող էլեկտրաէներգիայի ծագումը հնարավոր լինի երաշխավորվել յուրաքանչյուր անդամ պետության կողմից սահմանված օբյեկտիվ, թափանցիկ եւ ոչ խտրական չափանիշներին համապատասխան: Նրանք ապահովում են, որ ծագման այդ երաշխիքը համապատասխանի պահանջներին եւ առնվազն պարունակի X հավելվածում նշված տեղեկությունները: Անդամ պետությունները փոխադարձ ճանաչում են իրենց ծագման երաշխիքները՝ բացառապես որպես սույն պարբերության մեջ նշված տեղեկությունների ապացույց: Ծագման երաշխիքը որպես նման ապացույց ճանաչելու ցանկացած մերժում, մասնավորապես՝ խարդախությունը կանխելու հետ կապված պատճառներով պետք է հիմնված լինի օբյեկտիվ, թափանցիկ եւ ոչ խտրական չափանիշների վրա: Անդամ պետությունները Հանձնաժողովին ծանուցում են նման մերժման եւ դրա հիմնավորման մասին: Ծագման երաշխիքը ճանաչելը մերժելու դեպքում Հանձնաժողովը կարող է որոշում ընդունել մերժող կողմին այն ճանաչել ստիպելու վերաբերյալ՝ ելնելով, մասնավորապես, օբյեկտիվ, թափանցիկ եւ ոչ խտրական չափանիշներից, որոնք հիմք են նման ճանաչման համար:

Հանձնաժողովը լիազորված է սույն հրահանգի 23-րդ հոդվածի համապատասխան պատվիրակված ակտերի միջոցով մինչեւ 2014 թվականի

դեկտեմբերի 31-ը վերանայել Հանձնաժողովի 2011/877/ԵՄ²⁵ կիրարկող որոշմամբ սահմանված արդյունավետության ներդաշնակեցված բազային (հղումային) արժեքները 2004/8/ԵՀ հրահանգի հիման վրա:

11. Անդամ պետություններն ապահովում են, որ համակցված արտադրության ուղղված հասանելի ցանկացած աջակցություն պայմանավորված լինի արտադրվող էլեկտրաէներգիայով, որը ծագում է բարձր արդյունավետություն ապահովող համակցված արտադրությունից եւ առաջնային էներգիայի խնայողություն ապահովելու նպատակով արդյունավետորեն օգտագործվող՝ արտանետվող ջերմային էներգիայից: Համակցված արտադրությանն ու տարածքային ջեռուցման ստացմանն ու ցանցերին ուղղված պետական աջակցությունը համապատասխան դեպքերում կարգավորվում է պետական աջակցության կանոններով:

Հոդված 15

Էներգիայի փոխակերպումը, հաղորդումը եւ բաշխումը

1. Անդամ պետություններն ապահովում են, որ էներգետիկայի ոլորտը կարգավորող ազգային մարմինները 2009/72/ԵՀ եւ 2009/73/ԵՀ հրահանգներում նշված՝ գազի եւ էլեկտրաէներգիայի ոլորտի ենթակառուցվածքների շահագործման հետ կապված իրենց որոշումների վերաբերյալ կարգավորման հանձնարարությունները կատարելիս պատշաճ ուշադրություն դարձնեն էներգաարդյունավետությանը:

Անդամ պետությունները մասնավորապես ապահովում են, որ էներգետիկայի ոլորտը կարգավորող ազգային մարմինները ցանցային սակագների ու կանոնակարգերի մշակման միջոցով 2009/72/ԵՀ հրահանգի շրջանակներում, ինչպես նաեւ հաշվի առնելով յուրաքանչյուր միջոցառման հետ կապված ծախսերն ու օգուտները՝ ցանցի օպերատորների նկատմամբ կիրառեն խրախուսանքի

²⁵ ՊՏ թիվ L 343, 23.12.2011 թ., էջ 91:

միջոցներ՝ ցանցն օգտագործողներին հասանելի դարձնելով այնպիսի համակարգային ծառայություններ, որոնք վերջիններիս թույլ կտան իրականացնել էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումներ խելացի ցանցերի շարունակական գործարկման համատեքստում:

Այդպիսի համակարգային ծառայությունները կարող են սահմանվել համակարգի օպերատորի կողմից եւ չպետք է բացասաբար անդրադառնան համակարգի անվտանգության վրա:

Էլեկտրաէներգիայի դեպքում անդամ պետություններն ապահովում են, որ ցանցային կանոնակարգն ու ցանցային սակագները համապատասխանեն XI հավելվածի չափանիշներին՝ հաշվի առնելով 714/2009 կանոնակարգի (ԵՀ) համաձայն մշակված ուղեցույցներն ու օրենսգրքերը:

2. Անդամ պետություններն ապահովում են, որ մինչեւ 2015 թվականի հունիսի 3-ը՝

ա) իրականացվի գազի եւ էլեկտրաէներգիայի ոլորտի՝ իրենց ենթակառուցվածքների էներգաարդյունավետության ներուժի գնահատում, մասնավորապես՝ հաղորդման (փոխադրման), բաշխման, բեռնվածության կառավարման եւ փոխադարձ աշխատունակության մասով, ինչպես նաեւ էներգիա արտադրող կայանքներին միացված լինելու, այդ թվում՝ միկրոէներգիա արտադրող գեներատորների հասանելիության մասով.

բ) սահմանվեն կոնկրետ միջոցառումներ եւ ներդրումներ՝ ցանցային ենթակառուցվածքներում էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված ծախսարդյունավետ բարեփոխումներ իրականացնելու նպատակով՝ դրանց ներմուծման ժամանակացույցի հետ միասին:

3. Անդամ պետություններն էներգիան ցանցին հաղորդելու (փոխադրելու) եւ բաշխելու դեպքում կարող են թույլ տալ սոցիալական նպատակ ունեցող սխեմաների ու սակագների կառուցվածքի բաղադրիչներ՝ պայմանով,

որ հաղորդման (փոխադրման) եւ բաշխման համակարգի վրա ցանկացած խափանիչ ազդեցություն նվազագույնի է հասցվում եւ անհամատեղելի չէ սոցիալական նպատակի հետ:

4. Անդամ պետություններն ապահովում են հաղորդման (փոխադրման) եւ բաշխման սակագների հետ կապված այն խթանիչ միջոցների դադարեցումը, որոնք վնաս են հասցնում Էլեկտրաէներգիայի արտադրության, հաղորդման, բաշխման եւ մատակարարման ընդհանուր արդյունավետությանը (այդ թվում՝ էներգաարդյունավետությանը), կամ հավասարակշռող շուկաների եւ լրացուցիչ ծառայությունների հետ կապված խթանիչ միջոցների դադարեցումը, որոնք կարող են խոչընդոտել պահանջարկի կարգավորումը հաշվի առնելու: Անդամ պետություններն ապահովում են, որ ցանցի օպերատորները շահագրգռված լինեն ենթակառուցվածքների նախագծման եւ շահագործման էներգաարդյունավետությունը բարձրացնելու հարցում, ինչպես նաեւ 2009/72/ԵՀ հրահանգի շրջանակներում ապահովում են, որ սակագները մատակարարողներին հնարավորություն ընձեռեն բարելավելու սպառողների մասնակցությունը համակարգի արդյունավետության, այդ թվում՝ պահանջարկի կարգավորման հարցում՝ ազգային պայմաններից կախված:

5. Չսահմանափակելով 2009/28/ԵՀ հրահանգի 16(2) հոդվածը եւ հաշվի առնելով 2009/72/ԵՀ հրահանգի 15-րդ հոդվածը, ինչպես նաեւ ջերմային էներգիայի մատակարարման շարունակականությունն ապահովելու անհրաժեշտությունը՝ անդամ պետություններն ապահովում են, որ ցանցի հուսալիությունն ու անվտանգությունը պահպանելու հետ կապված պահանջների համաձայն, իրավասու ազգային մարմինների կողմից սահմանված թափանցիկ եւ ոչ խտրական չափանիշների հիման վրա հաղորդման համակարգերի օպերատորները եւ բաշխման համակարգերի օպերատորներն իրենց տարածքում գտնվող արտադրող կայանքների բաշխման համար պատասխանատու լինելու դեպքում՝

- ա) երաշխավորեն բարձր արդյունավետություն ապահովող համակցված արտադրությամբ ստացվող էլեկտրաէներգիայի հաղորդումը եւ բաշխումը.
- բ) նախապատվություն տան բարձր արդյունավետություն ապահովող համակցված արտադրությամբ ստացվող էլեկտրաէներգիայի ցանցին կամ ապահովեն դրա երաշխավորված հասանելիությունը.
- գ) էլեկտրաէներգիա արտադրող կայանքները բաշխելիս առաջնահերթություն տան բարձր արդյունավետություն ապահովող համակցված արտադրությամբ ստացվող էլեկտրաէներգիայի բաշխմանն այնքանով, որքանով դա թույլ է տալիս էլեկտրաէներգիայի ազգային համակարգի անվտանգ շահագործումը:

Անդամ պետություններն ապահովում են, որ իրենց էլեկտրաէներգիայի համակարգերում տրվող հասանելիության եւ բաշխման տարբեր առաջնահերթությունների դասակարգմանը վերաբերող կանոնները հստակորեն եւ մանրամասն բացատրվեն եւ հրապարակվեն: Բարձր արդյունավետություն ապահովող համակցված արտադրության առաջնահերթ հասանելիություն կամ բաշխում ապահովելիս անդամ պետությունները կարող են վերականգնվող էներգիայի եւ բարձր արդյունավետություն ապահովող համակցված արտադրության եւ դրանց տարբեր տեսակների դասակարգումներ կատարել, ինչպես նաեւ ցանկացած դեպքում ապահովել, որ վերականգնվող էներգիայի տարբեր աղբյուրներից ստացվող էներգիայի առաջնահերթ հասանելիությունը կամ բաշխումը չխոչընդոտվի:

Առաջին ենթապարբերությամբ սահմանված պարտավորություններից բացի՝ հաղորդման (փոխադրման) համակարգերի օպերատորները եւ բաշխման համակարգերի օպերատորները կատարում են XII հավելվածով նախատեսված պահանջները:

Անդամ պետությունները կարող են մասնավորապես հեշտացնել համակցված արտադրության փոքրամասշտաբ եւ միկրո տեղակայանքներից բարձր արդյունավետության համակցված արտադրությամբ ստացված էլեկտրաէներգիայի ցանցային համակարգին միանալու գործընթացը: Անդամ պետություններն անհրաժեշտության դեպքում քայլեր են ձեռնարկում, որպեսզի խրախուսեն ցանցի օպերատորներին համակցված արտադրության միկրո տեղակայանքների տեղադրման համար «տեղադրում եւ տեղեկացում» պարզ ծանուցման գործընթացը սահմանելու հարցում՝ առանձին քաղաքացիների եւ տեղադրողների համար լիազորման ընթացակարգերը պարզեցնելու եւ կրճատելու նպատակով:

6. Յանցի հուսալիությունն ու անվտանգությունը պահպանելու հետ կապված պահանջների համաձայն՝ անդամ պետությունները պատշաճ քայլեր են ձեռնարկում՝ ապահովելու, որ այն դեպքում, երբ բարձր արդյունավետություն ապահովող համակցված արտադրությամբ աշխատող կայանքի շահագործման ռեժիմի դեպքում դա տեխնիկապես եւ տնտեսապես իրագործելի է, բարձր արդյունավետություն ապահովող համակցված արտադրության օպերատորները կարող են հաղորդման համակարգերի օպերատորների կամ բաշխման համակարգերի օպերատորների մակարդակով հավասարակշռող եւ այլ ծառայություններ առաջարկել: Հաղորդման համակարգերի օպերատորները եւ բաշխման համակարգի օպերատորներն ապահովում են, որ այդ ծառայությունները թափանցիկ, ոչ խտրական եւ ուսումնասիրման համար բաց ծառայությունների մրցութային գործընթացի մաս կազմեն:

Անհրաժեշտության դեպքում անդամ պետությունները կարող են հաղորդման համակարգերի օպերատորներից եւ բաշխման համակարգի օպերատորներից պահանջել, որ վերջիններս խրախուսեն բարձր արդյունավետություն ապահովող համակցված արտադրության՝ պահանջարկի տարածքին մոտ տեղակայվածությունը՝ կրճատելով միացման եւ համակարգերի օգտագործման հետ կապված գանձումները:

7. Անդամ պետությունները կարող են թույլ տալ, որ բարձր արդյունավետություն ապահովող համակցված արտադրությամբ ստացվող էլեկտրաէներգիա արտադրողները, որոնք ուզում են միանալ ցանցին, միացման աշխատանքների մրցույթի հայտարարություն ներկայացնեն:

8. Անդամ պետություններն ապահովում են, որ էներգետիկայի ոլորտը կարգավորող ազգային մարմինները խրախուսեն, որ պահանջարկի կողմի այնպիսի ռեսուրսները, ինչպիսին է պահանջարկի կարգավորումը, ներառվեն ոչ միայն մատակարարման ոլորտում, այլև մեծածախ եւ մանրածախ առետրի շուկաներում:

Ցանցերի կառավարմանը բնորոշ տեխնիկական սահմանափակումները հաշվի առնելով՝ անդամ պետություններն ապահովում են, որ հաղորդման համակարգերի օպերատորները եւ բաշխման համակարգի օպերատորները հավասարակշռող եւ լրացուցիչ ծառայություններին ներկայացվող պահանջները բավարարելիս պահանջարկի կառավարում իրականացնողներին, այդ թվում՝ ագրեգատորներին վերաբերվեն ոչ խտրական եղանակով՝ հիմնվելով իրենց տեխնիկական կարողությունների վրա:

Ցանցերի կառավարմանը բնորոշ տեխնիկական սահմանափակումները հաշվի առնելով՝ անդամ պետությունները խթանում են պահանջարկի կարգավորման հասանելիությունն ու դրա ընդգրկումը հավասարակշռող, պահուստային եւ այլ համակարգային ծառայությունների շուկաներում՝ ի թիվս այլնի, պահանջելով էներգետիկայի ոլորտը կարգավորող ազգային մարմիններից, կամ այն դեպքում, երբ նրանց կարգավորող ազգային համակարգերով նման պահանջ է սահմանվում՝ ըստ պահանջի ծառայություններ մատուցողների եւ սպառողների հետ սերտ համագործակցող հաղորդման համակարգերի օպերատորներից եւ բաշխման համակարգերի օպերատորներից, որ վերջիններս այդ շուկաներում մասնակցության տեխնիկական մոդելներ սահմանեն՝ այդ շուկաների տեխնիկական պահանջների եւ պահանջարկի կառավարման մասով կարողությունների հիման վրա: Այդպիսի մասնագրերը ներառում են ագրեգատորների մասնակցությունը:

9. Անդամ պետությունները, 2010/75/ԵՄ հրահանգին համապատասխան հաշվետվություններ ներկայացնելիս եւ առանց այդ հրահանգի 9(2) հոդվածը սահմանափակելու, դիտարկում են 50 կամ ավելի ՄՎտ ընդհանուր գնահատված ջերմային հզորություն ունեցող վառելիքի այրում ապահովող կայանքների էներգաարդյունավետության մակարդակների վերաբերյալ տեղեկություններ ներառելու հարցը՝ հաշվի առնելով Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի՝ աղտոտման համալիր կանխարգելման եւ հսկողության վերաբերյալ 2008 թվականի հունվարի 15-ի 2010/75/ԵՄ եւ 2008/1/ԵՀ հրահանգներին²⁶ համապատասխան մշակված լավագույն հասանելի մեթոդները:

Անդամ պետությունները կարող են առաջին ենթապարբերության մեջ նշված կայանքների օպերատորներին խրախուսել տարեկան շահագործման միջին տեսակարար կշիռը բարելավելու հարցում:

ԳԼՈՒԽ IV

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 16

Որակավորման, հավատարմագրման

եւ հավաստագրման սխեմաները

1. Եթե անդամ պետությունը համարում է, որ տեխնիկական կարողությունների, օբյեկտիվության եւ հուսալիության ազգային մակարդակը բավարար չէ, ապա այն ապահովում է, որ մինչեւ 2014 թվականի դեկտեմբերի 31-ը հավաստագրման եւ (կամ) հավատարմագրման եւ (կամ) որակավորման համարժեք սխեմաները,

²⁶ ՊՏ L 24, 29.1.2008 թ., էջ 8:

այդ թվում՝ անհրաժեշտության դեպքում համապատասխան վերապատրաստման ծրագրերը հասանելի լինեն կամ հասանելի դարձվեն էներգետիկ ծառայություններ մատուցողներին, էներգետիկ աուդիտներ իրականացնողներին, էներգետիկայի ոլորտի ընկերությունների կառավարիչներին եւ 2010/31/ԵՄ հրահանգի 2(9) հոդվածով սահմանված էներգասպառող շինարարական տարրեր տեղադրողներին:

2. Անդամ պետություններն ապահովում են, որ 1-ին պարբերության մեջ նշված սխեմաները սպառողների համար թափանցիկ եւ հուսալի լինեն, ինչպես նաեւ նպաստեն էներգաարդյունավետության ազգային նպատակների իրականացմանը:

3. Անդամ պետությունները հանրությանը հասանելի են դարձնում 1-ին պարբերությունում նշված հավատարմագրման եւ (կամ) հավաստագրման սխեմաները կամ որակավորման համարժեք սխեմաները եւ համագործակցում են միմյանց եւ Հանձնաժողովի հետ այդ սխեմաները համեմատելու եւ դրանք ճանաչելու հարցում:

Անդամ պետությունները ձեռնարկում են համապատասխան միջոցառումներ՝ սպառողներին որակավորման եւ (կամ) հավաստագրման սխեմաների առկայության վերաբերյալ 18(1) հոդվածին համապատասխան իրազեկելու նպատակով:

Հոդված 17

Տեղեկատվությունը եւ վերապատրաստումը

1. Անդամ պետություններն ապահովում են, որ էներգաարդյունավետության հասանելի մեխանիզմների եւ ֆինանսաիրավական շրջանակների վերաբերյալ տեղեկատվությունը լինի թափանցիկ եւ լայնորեն տարածվի բոլոր համապատասխան դերակատարների շրջանում, ինչպիսիք են

սպառողները, շինարարները, ճարտարապետները, ինժեներները, բնապահպանական եւ էներգետիկ աուդիտորները, ինչպես նաեւ 2010/31/ԵՄ հրահանգով սահմանված շինարարական տարրեր տեղադրողները:

Անդամ պետությունները խրախուսում են բանկերին եւ այլ ֆինանսական հաստատություններին այնպիսի տեղեկատվություն տրամադրելը, որն առնչվում է էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումների ֆինանսավորմանը, այդ թվում՝ պետական (մասնավոր) համագործակցություն հիմնելու միջոցով դրան մասնակցելու հնարավորություններին:

2. Անդամ պետությունները պատշաճ պայմաններ են ստեղծում շուկաների օպերատորների համար, որ վերջիններս էներգասպառողներին էներգաարդյունավետության վերաբերյալ համապատասխան եւ նպատակային տեղեկատվություն ու խորհրդատվություն տրամադրեն:

3. Հանձնաժողովը հարթակների մշակմանն աջակցելու նպատակով ուսումնասիրում է իր կողմից իրականացված միջոցառումների ազդեցությունը, ինչը, ի թիվս այլնի, ներառում է սոցիալական երկխոսության եվրոպական մարմիններին աջակցելն էներգաարդյունավետության վերաբերյալ վերապատրաստման ծրագրերը խթանելու հարցում, ինչպես նաեւ անհրաժեշտության դեպքում՝ ներկայացնում լրացուցիչ միջոցառումներ: Հանձնաժողովը խրախուսում է եվրոպական սոցիալական գործընկերներին էներգաարդյունավետության վերաբերյալ իրենց քննարկումներում:

4. Անդամ պետությունները շահագրգիռ կողմերի, այդ թվում՝ տեղական եւ տարածաշրջանային մարմինների մասնակցությամբ խթանում են պատշաճ տեղեկատվություն տրամադրելուն, իրազեկվածության մակարդակը բարձրացնելուն եւ վերապատրաստումներին ուղղված նախաձեռնությունները՝ քաղաքացիներին էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումներ իրականացնելու օգուտների ու գործնական կիրառելիության մասին տեղեկացնելու համար:

5. Հանձնաժողովը խրախուսում է անդամ պետություններում էներգաարդյունավետության լավագույն գործելակերպերի վերաբերյալ տեղեկատվության փոխանակումը եւ լայն տարածումը:

Հոդված 18

Էներգետիկ ծառայություններ

1. Անդամ պետությունները խթանում են էներգետիկ ծառայությունների շուկան եւ այդ շուկայի հասանելիությունը ՓՄՁ-ներին.

- ա) հետեւյալի մասին հստակ եւ մատչելի տեղեկատվություն տարածելով՝
 - i) էներգետիկ ծառայությունների վերաբերյալ գործող պայմանագրեր եւ դրույթներ, որոնք պետք է ներառվեն այդպիսի պայմանագրերում՝ էներգախնայողությունը եւ վերջնական սպառողների իրավունքները երաշխավորելու նպատակով.
 - ii) ֆինանսական գործիքներ, խթաններ, դրամաշնորհներ եւ վարկեր՝ էներգաարդյունավետ ծառայությունների վերաբերյալ նախագծերին աջակցելու նպատակով.
- բ) խրախուսելով համապատասխանության նշանների մշակումը, ի թիվս այլնի, առետրային ասոցիացիաների միջոցով.
- գ) հանրությանը հասանելի դարձնելով եւ կանոնավոր կերպով թարմացնելով այն էներգետիկ ծառայություններ մատուցողների գոյություն ունեցող ցանկը, որոնք որակավորված եւ (կամ) հավաստագրված են, եւ վերջիններիս որակավորումները եւ (կամ) հավաստագրերը համապատասխանում են 16-րդ հոդվածին, կամ ապահովելով միջերես (ինտերֆեյս), որի միջոցով էներգետիկ ծառայություններ մատուցողները կարող են տեղեկատվություն տրամադրել.

- դ) պետական հատվածին էներգետիկ ծառայությունների, մասնավորապես՝ շենքի բարեկարգման մասով առաջարկություններն ընդունելու հարցում աջակցելով՝ հետեւյալի միջոցով՝
- i) էներգաարդյունավետության բարձրացման վերաբերյալ պայմանագրեր կնքելու նպատակով առնվազն XIII հավելվածում նշված կետերը ներառող օրինակելի պայմանագրեր տրամադրելը.
 - ii) էներգաարդյունավետության բարձրացման վերաբերյալ պայմանագրեր կնքելու նպատակով լավագույն գործելակերպերի, այդ թվում՝ հնարավորության դեպքում կենսունակության ամբողջ ցիկլի մոտեցումը կիրառող ծախսերի եւ օգուտների վերլուծության վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելը.
- ե) էներգաարդյունավետության գործողությունների ազգային ծրագրի շրջանակում էներգետիկ ծառայությունների շուկայի ներկայիս եւ ապագա զարգացումների վերաբերյալ որակական գնահատում ապահովելով:

2. Անդամ պետությունները պետք է աջակցեն էներգետիկ ծառայությունների շուկայի բնականոն գործունեությանը՝ համապատասխան դեպքերում հետեւյալի միջոցով՝

- ա) նախանշել եւ հրապարակել այն կոնտակտային կետերը, որոնցից վերջնական սպառողները կարող են ստանալ 1-ին պարբերության մեջ նշված տեղեկատվությունը.
- բ) անհրաժեշտության դեպքում ձեռնարկել միջոցառումներ այն օրենսդրական եւ ոչ օրենսդրական խոչընդոտները վերացնելու նպատակով, որոնք խոչընդոտում են էներգախնայողությանն ուղղված միջոցառումներ սահմանելու եւ (կամ) դրանք իրականացնելու նպատակով էներգաարդյունավետության բարձրացման վերաբերյալ պայմանագրերի եւ էներգաարդյունավետության մասով ծառայությունների այլ մոդելների ներդրումը.

- գ) դիտարկել անկախ մեխանիզմ, ինչպիսին է օմբուդսմենը, ստեղծելու կամ դրան այդպիսի անկախ մեխանիզմի դեր վերապահելու հարցը՝ էներգետիկ ծառայությունների վերաբերյալ պայմանագրերից ծագող բողոքներին արդյունավետորեն ընթացք տալն ու վեճերի արտահատական եղանակով լուծումն ապահովելու համար.
- դ) հնարավորություն տալ շուկայի անկախ միջնորդներին դեր խաղալու պահանջարկի եւ առաջարկի կողմում շուկայի զարգացումը խթանելու հարցում:

3. Անդամ պետություններն ապահովում են, որ էներգաբաշխիչ ընկերությունները, բաշխիչ համակարգի օպերատորները եւ էներգիայի մանրածախ իրացմամբ զբաղվող ընկերությունները զերծ մնան այնպիսի գործունեությունից, որը կարող է խոչընդոտել էներգետիկ ծառայությունների կամ էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված այլ միջոցառումների պահանջարկին ու մատուցմանը կամ արգելք հանդիսանալ այդպիսի ծառայություններ կամ միջոցառումներ առաջարկող շուկաների համար, այդ թվում՝ շուկայի հասանելիությունը մրցակիցների համար սահմանափակելու կամ գերիշխող դիրքը չարաշահելու եղանակով:

Հոդված 19

Էներգաարդյունավետության բարձրացումը

խթանելուն ուղղված այլ միջոցառումներ

1. Անդամ պետությունները գնահատում են եւ անհրաժեշտության դեպքում պատշաճ միջոցառումներ իրականացնում էներգաարդյունավետության օրենսդրական եւ ոչ օրենսդրական խոչընդոտները վերացնելու նպատակով՝ չսահմանափակելով անդամ պետությունների սեփականության եւ վարձակալության վերաբերյալ օրենքների հիմնական սկզբունքները, մասնավորապես՝ հետեւյալի առնչությամբ.

- ա) շենքի սեփականատիրոջ եւ վարձակալի կամ սեփականատերերի միջեւ դրդապատճառների վերաբերյալ հակասությունները՝ նպատակ ունենալով ապահովել, որ լիարժեք անձնական օգուտ չստանալու կամ ծախսերն ու օգուտներն իրենց մեջ բաշխելու մասով կանոնների, այդ թվում՝ մի քանի սեփականատեր ունեցող սեփականության վերաբերյալ որոշումների կայացման գործընթացները կարգավորող ազգային կանոնների ու միջոցառումների բացակայության պատճառով այդ կողմերը չհրաժարվեն արդյունավետության բարձրացմանն ուղղված այնպիսի ներդրումներ կատարելուց, որոնք նրանք այլ պայմաններում կկատարեին.
- բ) պետական գնումների եւ տարեկան բյուջեի կազմման ու հաշվապահական հաշվառման վերաբերյալ իրավակարգավորող դրույթներ, վարչական գործելակերպեր՝ նպատակ ունենալով ապահովել, որ առանձին պետական մարմինները չհրաժարվեն էներգաարդյունավետության բարձրացմանն ու շահագործման ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող ծախսերը նվազագույնի հասցնելուն ուղղված ներդրումներ կատարելուց, ինչպես նաեւ էներգաարդյունավետության վերաբերյալ պայմանագրեր կնքելուց եւ երկարաժամկետ պայմանագրային հիմքով երրորդ կողմի կողմից ֆինանսավորման մեխանիզմներ օգտագործելուց:

Խոչընդոտները վերացնելուն ուղղված այդպիսի միջոցառումները կարող են ներառել խրախուսանքի միջոցներ կիրառելը, իրավական կամ կարգավորող դրույթներն ուժը կորցրած ճանաչելը կամ փոփոխելը, ուղեցույցներ եւ մեկնաբանական հաղորդագրություններ ընդունելը կամ վարչական ընթացակարգեր պարզեցնելը: Այս միջոցառումները կարող են համատեղվել էներգաարդյունավետության վերաբերյալ ուսուցում, վերապատրաստումներ եւ որոշակի տեղեկատվություն ապահովելու, ինչպես նաեւ այդ մասով տեխնիկական աջակցություն տրամադրելու հետ:

2. Հանձնաժողովը 1-ին պարբերության մեջ նշված խոչընդոտների եւ միջոցառումների գնահատման վերաբերյալ ծանուցվում է 24(2) հոդվածում նշված էներգաարդյունավետության գործողությունների առաջին ազգային ծրագրի միջոցով: Հանձնաժողովը խրախուսում է այդ առնչությամբ լավագույն ազգային գործելակերպերով կիսվելը:

Հոդված 20

Էներգաարդյունավետության ազգային հիմնադրամը, Ֆինանսական եւ տեխնիկական աջակցությունը

1. Չսահմանափակելով «Եվրոպական միության գործունեության մասին» պայմանագրի 107-րդ եւ 108-րդ հոդվածները՝ անդամ պետությունները հեշտացնում են ֆինանսական գործիքների ստեղծումը կամ առկա գործիքների կիրառումը, որպեսզի էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումների արդյունքում առավելագույնի հասցվեն ֆինանսավորման բազմաթիվ հոսքերից ստացվող օգուտները:

2. Հանձնաժողովն անհրաժեշտության դեպքում անմիջականորեն կամ եվրոպական ֆինանսական հաստատությունների միջոցով աջակցում է անդամ պետություններին տարբեր ոլորտներում էներգաարդյունավետության մակարդակը բարձրացնելու նպատակ ունեցող ֆինանսական գործիքներ եւ տեխնիկական աջակցության սխեմաներ ստեղծելու հարցում:

3. Հանձնաժողովը խթանում է իրավասու ազգային կամ տարածաշրջանային իշխանությունների կամ մարմինների միջեւ լավագույն գործելակերպերի փոխանակման գործընթացը, օրինակ՝ կարգավորող մարմինների ամենամյա հանդիպումների, անդամ պետությունների կողմից միջոցառումների իրականացման վերաբերյալ տեղեկատվություն պարունակող ընդհանուր տվյալների բազաների, ինչպես նաեւ երկրների համեմատության միջոցով:

4. Անդամ պետությունները կարող են էներգաարդյունավետության ազգային հիմնադրամ ստեղծել: Այդ հիմնադրամի նպատակն էներգաարդյունավետության ազգային նախաձեռնություններին աջակցելն է:

5. Անդամ պետությունները կարող են թույլ տալ, որ 5(1) կետով նախատեսված պարտավորությունները կատարվեն էներգաարդյունավետության ազգային հիմնադրամին կատարված այն ամենամյա վճարումների միջոցով, որոնց գումարը հավասար է այդ պարտավորությունները կատարելու համար պահանջվող ներդրումների գումարին:

6. Անդամ պետությունները կարող են նախատեսել, որ պարտավորություններ ստանձնած կողմերն իրենց՝ 7(1) հոդվածով նախատեսված պարտավորությունները կատարեն էներգաարդյունավետության ազգային հիմնադրամին ամենամյա վճարումներ կատարելու միջոցով, որոնց գումարը հավասար է այդ պարտավորությունները կատարելու համար պահանջվող ներդրումների գումարին:

7. Անդամ պետությունները կարող են 406/2009/ԵՀ որոշմամբ նախատեսված սահմանային թույլատրելի տարեկան արտանետումներից ստացվող իրենց եկամուտներն օգտագործել 5-րդ հոդվածով նախատեսված՝ շենքերի էներգաարդյունավետության բարձրացման նպատակին գործնական կիրառություն տալու նպատակով՝ ֆինանսավորման նորարարական մեխանիզմներ մշակելու համար:

Հոդված 21

Փոխարկման գործոնները

Էներգախնայողությունը համեմատելու եւ այլ համեմատելի միավորի փոխարկելու նպատակով IV հավելվածով նախատեսված փոխարկման գործոնները կիրառվում են, եթե փոխարկման այլ գործոնների կիրառումը հիմնավորված չէ:

ԳԼՈՒԽ V

ԵՋՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ*Հոդված 22***Պատվիրակված ակտերը**

1. Հանձնաժողովը լիազորված է ընդունել 23-րդ հոդվածին համապատասխան պատվիրակված ակտեր՝ 14(10) հոդվածի երկրորդ ենթապարբերության մեջ նշված արդյունավետության ներդաշնակեցված բազային (հղումային) արժեքները վերանայելու նպատակով:
2. Հանձնաժողովը լիազորված է ընդունել 23-րդ հոդվածին համապատասխան պատվիրակված ակտեր՝ I, II, III, IV, V, VII, VIII, IX, X եւ XII հավելվածներում նշված արժեքները, հաշվարկման մեթոդները, առաջնային էներգիայի նախապես սահմանված գործակիցը եւ պահանջները տեխնիկական առաջընթացին համապատասխանեցնելու նպատակով:

*Հոդված 23***Լիազորությունների պատվիրակումը**

1. Պատվիրակված ակտեր ընդունելու լիազորությունը վերապահվում է Հանձնաժողովին՝ սույն հոդվածով սահմանված պայմանների համաձայն:
2. 22-րդ հոդվածում նշված պատվիրակված ակտերն ընդունելու լիազորությունները վերապահվում են Հանձնաժողովին՝ 2012 թվականի դեկտեմբերի 4-ից սկսած՝ հինգ տարի ժամկետով:
3. Եվրոպական պառլամենտը կամ Խորհուրդը կարող են ցանկացած պահի չեղյալ հայտարարել 22-րդ հոդվածում նշված լիազորությունների պատվիրակումը: Չեղյալ հայտարարելու մասին որոշմամբ դադարեցվում է այդ որոշման մեջ նշված

լիազորությունների պատվիրակումը: Այն ուժի մեջ է մտնում այդ որոշումը *Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրում* հրապարակվելուն հաջորդող օրը կամ դրանում նշված ավելի ուշ ժամկետում: Այն չի ազդում արդեն ուժի մեջ մտած պատվիրակված ակտերի գործողության ժամկետի վրա:

4. Պատվիրակված ակտն ընդունելուց անմիջապես հետո Հանձնաժողովն այդ մասին միաժամանակ ծանուցում է Եվրոպական պառլամենտին եւ Խորհրդին:

5. 22-րդ հոդվածի համաձայն ընդունված պատվիրակված ակտն ուժի մեջ է մտնում միայն այն դեպքում, երբ Եվրոպական պառլամենտը կամ Խորհուրդն այդ ակտի մասին ծանուցումն ստանալուց հետո՝ 2 ամսվա ընթացքում, չի առարկել այդ ակտի դեմ, կամ եթե նախքան այդ ժամկետը լրանալը Եվրոպական պառլամենտը եւ Խորհուրդը տեղեկացրել են Հանձնաժողովին, որ չեն առարկելու: Այդ ժամկետը երկարաձգվում է 2 ամսով՝ Եվրոպական պառլամենտի կամ Խորհրդի նախաձեռնությամբ:

Հոդված 24

Կիրարկման ուսումնասիրությունն ու մշտադիտարկումը

1. 2013 թվականից սկսած՝ ամեն տարի՝ ամենաուշը ապրիլի 30-ին, անդամ պետություններն էներգաարդյունավետության ազգային թիրախների մասով արձանագրված առաջընթացի վերաբերյալ հաշվետվություն են ներկայացնում XIV հավելվածի 1-ին մասին համապատասխան: Հաշվետվությունը կարող է Խորհրդի՝ «Անդամ պետությունների եւ Միության տնտեսական քաղաքականությունների համար նախատեսված ընդհանուր ուղեցույցների մասին» 2010 թվականի հուլիսի 13-ի 2010/410/ԵՄ հանձնարարականի²⁷ մեջ նշված բարեփոխումների ազգային ծրագրերի մաս կազմել:

²⁷ ՊՏ թիվ L 191, 23.7.2010 թ., էջ 28:

2. Անդամ պետություններն ամենաուշը 2014 թվականի ապրիլի 30-ին եւ դրանից հետո՝ յուրաքանչյուր երեք տարին մեկ, ներկայացնում են Էներգաարդյունավետության գործողությունների ազգային ծրագրերը: Էներգաարդյունավետության գործողությունների ազգային ծրագրերը ներառում են Էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված կարելորագույն միջոցառումները եւ Էներգախնայողության ակնկալվող եւ (կամ) ապահովված ծավալը, այդ թվում՝ Էներգիայի մատակարարման, հաղորդման եւ բաշխման ծավալը, ինչպես նաեւ Էներգիայի վերջնական սպառման ծավալը՝ նկատի ունենալով 3(1) հոդվածում նշված Էներգաարդյունավետության ազգային ինդիկատիվ թիրախների ապահովումը: Էներգաարդյունավետության գործողությունների ազգային ծրագրերը լրացվում են 2020 թվականին ակնկալվող ընդհանուր առաջնային Էներգիայի սպառման թարմացված նախահաշվով, ինչպես նաեւ XIV հավելվածի 1-ին մասում նշված ոլորտներում առաջնային Էներգասպառման նախատեսվող մակարդակներով:

Հանձնաժողովն ամենաուշը 2012 թվականի դեկտեմբերի 31-ին տրամադրում է նմուշօրինակ՝ որպես Էներգաարդյունավետության գործողությունների ազգային ծրագրերի ուղեցույց: Այդ նմուշօրինակն ընդունվում է 26(2) հոդվածում նշված խորհրդատվական ընթացակարգի համաձայն: Էներգաարդյունավետության գործողությունների ազգային ծրագրերն ամեն դեպքում ներառում են XIV հավելվածում նշված տեղեկությունները:

3. Հանձնաժողովը գնահատում է տարեկան հաշվետվություններն ու Էներգաարդյունավետության գործողությունների ազգային ծրագրերը, ինչպես նաեւ անդամ պետությունների՝ 3(1) հոդվածով պահանջվող Էներգաարդյունավետության ազգային թիրախների ապահովման եւ սույն հրահանգի իրականացման հարցում գրանցած առաջընթացը: Հանձնաժողովն իր գնահատման եզրակացությունն ուղարկում է Եվրոպական պառլամենտին եւ Խորհրդին: Հանձնաժողովը հաշվետվությունների եւ Էներգաարդյունավետության

գործողությունների ազգային ծրագրերի գնահատման հիման վրա կարող է անդամ պետություններին հանձնարարականներ տալ:

4. Հանձնաժողովը վերահսկում է սույն հրահանգի կիրառման ազդեցությունը 2003/87/ԵՀ, 2009/28/ԵՀ եւ 2010/31/ԵՀ հրահանգների եւ թիվ 406/2009/ԵՀ որոշման, ինչպես նաեւ արդյունաբերական ոլորտների, մասնավորապես՝ 2010/2/ԵՄ որոշմամբ սահմանված՝ ածխածնի արտահոսքի զգալի վտանգի տակ գտնվող ոլորտների վրա:

5. Հանձնաժողովը 14(6) հոդվածով նախատեսված պահանջներից ազատվելու հնարավորության շարունակական անհրաժեշտությունն առաջին անգամ ուսումնասիրում է էներգաարդյունավետության գործողությունների առաջին ազգային ծրագրերի գնահատման միջոցով, ինչպես նաեւ դրանից հետո՝ յուրաքանչյուր երեք տարին մեկ: Եթե ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այդ պահանջներից ազատվելու չափանիշներն այլեւս չեն կարող հիմնավորվել՝ հաշվի առնելով պահանջներից ազատված կայանքների ջերմային բեռնվածության առկայությունն ու շահագործման իրական պայմանները, ապա Հանձնաժողովն առաջարկում է համապատասխան միջոցառումներ:

6. Անդամ պետություններն ամենաուշը յուրաքանչյուր տարվա ապրիլի 30-ին, I հավելվածում ներկայացված մեթոդաբանությանը համապատասխան, Հանձնաժողով են ներկայացնում բարձր եւ ցածր արդյունավետություն ապահովող համակցված արտադրությամբ ստացվող էլեկտրաէներգիայի եւ ջերմային էներգիայի արտադրության ազգային ծավալների վերաբերյալ վիճակագրությունը՝ ջերմային էներգիայի եւ էլեկտրաէներգիայի արտադրության ընդհանուր ծավալի հարաբերակցությամբ: Նրանք նաեւ ներկայացնում են համակցված արտադրությամբ ստացվող ջերմային էներգիայի եւ էլեկտրաէներգիայի հզորության, ինչպես նաեւ տարածքային ջեռուցման եւ հովացման իրականացման ու դրանց հզորության վերաբերյալ տարեկան վիճակագրությունը՝ ջերմային էներգիայի եւ էլեկտրաէներգիայի արտադրության եւ հզորությունների ընդհանուր ծավալի հարաբերակցությամբ:

Անդամ պետությունները, II հավելվածում ներկայացված մեթոդաբանությանը համապատասխան, ներկայացնում են վիճակագրություն՝ առաջնային էներգիայի խնայողության ծավալների վերաբերյալ, որոնք ապահովվել են համակցված արտադրությամբ:

7. Հանձնաժողովն ամենաուշը 2014 թվականի հունիսի 30-ին Եվրոպական պառլամենտ եւ Խորհուրդ է ներկայացնում 3(2) հոդվածում նշված գնահատումը, որին անհրաժեշտության դեպքում կից ներկայացվում են հետագա միջոցառումների վերաբերյալ առաջարկություններ:

8. Հանձնաժողովը մինչեւ 2015 թվականի դեկտեմբերի 5-ն ուսումնասիրում է 6-րդ հոդվածի կիրարկման արդյունավետությունը՝ հաշվի առնելով 2004/18/ԵՀ հրահանգով սահմանված պահանջները, ինչպես նաեւ զեկույց է ներկայացնում Եվրոպական պառլամենտ եւ Խորհուրդ: Անհրաժեշտության դեպքում զեկույցին կից ներկայացվում են հետագա միջոցառումների վերաբերյալ առաջարկություններ:

9. Հանձնաժողովն ամենաուշը 2016 թվականի հունիսի 30-ին Եվրոպական պառլամենտ եւ Խորհուրդ է ներկայացնում զեկույց՝ 7-րդ հոդվածի կիրարկման վերաբերյալ: Այդ զեկույցին անհրաժեշտության դեպքում կից ներկայացվում է օրենսդրական առաջարկ հետեւյալ մեկ կամ մի քանի նպատակներով՝

- ա) 7(1) հոդվածով սահմանված վերջնաժամկետի փոփոխություն.
- բ) 7(1), (2) եւ (3) կետերով սահմանված պահանջների վերանայում.
- գ) լրացուցիչ ընդհանուր պահանջների սահմանում, մասնավորապես՝ 7(7) հոդվածում նշված հարցերի առնչությամբ:

10. Հանձնաժողովն ամենաուշը մինչեւ 2018 թվականի հունիսի 30-ը պետք է գնահատի 19(1) հոդվածում նշված օրենսդրական եւ ոչ օրենսդրական խոչընդոտները վերացնելու հարցում անդամ պետությունների գրանցած

առաջընթացը: Անհրաժեշտության դեպքում զեկույցին կից ներկայացվում են հետագա միջոցառումների վերաբերյալ առաջարկություններ:

11. Հանձնաժողովը հանրությանը հասանելի է դարձնում 1-ին եւ 2-րդ պարբերություններում նշված զեկույցները:

Հոդված 25

Առցանց հարթակները

Հանձնաժողովն առցանց հարթակ է ստեղծում սույն հրահանգի գործնական կիրառմանը՝ ազգային, տարածաշրջանային եւ տեղական մակարդակներով նպաստելու համար: Այդ հարթակն ապահովում է գործելակերպերի, համեմատական վերլուծության, ցանցային աշխատանքների, ինչպես նաեւ նորարարական գործելակերպերի մասով փորձի փոխանակումը:

Հոդված 26

Կոմիտեի գործունեության կարգը

1. Հանձնաժողովին աջակցում է կոմիտեն: Այդ կոմիտեն պետք է համապատասխանի 182/2011 կանոնակարգով (ԵՄ) սահմանված իմաստին:
2. Եթե հղում է կատարվում սույն պարբերությանը, ապա կիրառվում է 182/2011 կանոնակարգի (ԵՄ) 4-րդ հոդվածը:

Հոդված 27

Փոփոխությունները եւ ուժը կորցրած ճանաչելը

1. 2006/32/ԵՀ հրահանգը, բացառությամբ դրա 4(1)-(4) հոդվածի եւ դրա I, III եւ IV հավելվածների, 2014 թվականի հունիսի 4-ից ուժը կորցրած է ճանաչվում՝

չսահմանափակելով անդամ պետությունների՝ հրահանգն ազգային օրենսդրության մեջ փոխատեղելու ժամկետների մասով պարտավորությունները: 2006/32/ԵՀ հրահանգի 4(1)-(4) հոդվածը, ինչպես նաև I, III եւ IV հավելվածներն ուժը կորցրած են ճանաչվում 2017 թվականի հունվարի 1-ից:

2004/8/ԵՀ հրահանգն ուժը կորցրած է ճանաչվում 2014 թվականի հունիսի 5-ից՝ չհակասելով անդամ պետությունների՝ հրահանգն ազգային օրենսդրության մեջ փոխատեղելու ժամկետների մասով պարտավորությունները:

2006/32/ԵՀ եւ 2004/8/ԵՀ հրահանգներին արվող հղումները պետք է դիտվեն որպես սույն հրահանգին հղումներ եւ պետք է մեկնաբանվեն XV հավելվածում ներկայացված համեմատական աղյուսակի համաձայն:

2. 2010/30/ԵՄ հրահանգի 9(1) եւ (2) հոդվածը հանվում է 2014 թվականի հունիսի 5-ից:

3. 2009/125/ԵՀ հրահանգում կատարել հետեւյալ փոփոխությունները.

1) ավելացնել հետեւյալ հոդվածը.

«35ա) Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի՝ «Շենքերի էներգաարդյունավետության մասին»(*) 2010 թվականի մայիսի 19-ի 2010/31/ԵՄ հրահանգով անդամ պետություններից պահանջվում է շրջափակող կառուցվածքների մաս կազմող շինարարական տարրերի նկատմամբ էներգաարդյունավետության պահանջներ սահմանել, ինչպես նաև գոյություն ունեցող շենքերում տեղադրված տեխնիկական շինարարական համակարգերի ընդհանուր էներգաարդյունավետության, ճիշտ տեղադրման, պատշաճ չափազօման, հարմարեցման եւ վերահսկողության նկատմամբ համակարգային պահանջներ սահմանել: Սույն հրահանգի նպատակներին չի հակասում այն, որ այդ պահանջները կարող են որոշակի հանգամանքներում սահմանափակել այնպիսի էներգասպառող արտադրանքի տեղադրումը, որը

համապատասխանում է սույն հրահանգին եւ դրա՝ կիրարկումն ապահովող միջոցառումներին՝ պայմանով, որ այդ պահանջները շուկայի համար ոչ արդարացված խոչընդոտ չեն հանդիսանա:»:

(*) ՊՏ L 153, 18.6.2010 թ., էջ. 13:

2) 6(1) հոդվածի վերջում ավելացնել հետեւյալ նախադասությունը.

«Դա չպետք է սահմանափակի անդամ պետությունների կողմից 2010/31/ԵՄ հրահանգի 4(1) հոդվածին եւ 8-րդ հոդվածին համապատասխան սահմանված էներգաարդյունավետության պահանջները եւ համակարգային պահանջները:»:

Հոդված 28

Փոխատեղումը

1. Անդամ պետություններն ամենաուշը 2014 թվականի հունիսի 5-ին գործողության մեջ են դնում սույն հրահանգին համապատասխանությունն ապահովելու համար անհրաժեշտ օրենքները, կանոնակարգերը եւ վարչական դրույթները:

Չհակասելով առաջին ենթապարբերությանը՝ անդամ պետությունները գործողության մեջ են դնում 4-րդ հոդվածին, 5(1) հոդվածի առաջին ենթապարբերությանը, 5(5) հոդվածին, 5(6) հոդվածին, 7(9) հոդվածի վերջին ենթապարբերությանը, 14(6) հոդվածին, 19(2) հոդվածին, 24(1) հոդվածին եւ 24(2) հոդվածին ու V հավելվածի 4-րդ կետին համապատասխանությունն ապահովելու համար անհրաժեշտ օրենքները, կանոնակարգերը եւ վարչական դրույթները՝ դրանցում նշված ժամկետներին համապատասխան:

Նրանք այդ դրույթների տեքստն անմիջապես ներկայացնում են Հանձնաժողով:

Երբ անդամ պետություններն ընդունում են այդ դրույթները, դրանք պետք է հղում պարունակեն սույն հրահանգին կամ դրանց պաշտոնական հրապարակման դեպքում ուղեկցվեն նման հղումով: Անդամ պետությունները որոշում են, թե ինչպես պետք է կատարվեն նման հղումները:

2. Անդամ պետությունները Հանձնաժողով են ներկայացնում ազգային իրավունքի հիմնական դրույթների տեքստը, որը նրանք ընդունում են սույն հրահանգով կարգավորվող ոլորտի վերաբերյալ:

Հոդված 29

Ուժի մեջ մտնելը

Սույն հրահանգն ուժի մեջ է մտնում *Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրում* հրապարակվելուց հետո քսաներորդ օրը:

Հոդված 30

Հասցեատերերը

Սույն հրահանգը հասցեագրված է անդամ պետություններին:

Կատարված է Ստրասբուրգում 2012 թվականի հոկտեմբերի 25-ին:

Եվրոպական պառլամենտի կողմից՝

Նախագահ

Մ. ՇՈՒԼՑ

Խորհրդի կողմից՝

Նախագահ

Ա. Դ. ՄԱՎՐՈՅԱՆՆԻՍ

ՀԱՎԵԼՎԱԾ I**ՀԱՄԱԿՑՎԱԾ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՄԲ ՍՏԱՑՎՈՂ****ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ****Մաս I***Ընդհանուր սկզբունքները*

Համակցված արտադրությամբ ստացվող էլեկտրաէներգիայի հաշվարկման համար կիրառվող արժեքները պետք է սահմանվեն՝ ելնելով բնականոն պայմաններում տեղակայանքի ակնկալվող կամ փաստացի շահագործումից: Համակցված արտադրության միկրո տեղակայանքների դեպքում հաշվարկը կարող է կատարվել հավաստագրված արժեքների հիման վրա:

- ա) էլեկտրաէներգիայի համակցված արտադրությամբ ստացումը համարվում է տարեկան կտրվածքով տվյալ տեղակայանքի արտադրած այն ընդհանուր էլեկտրաէներգիայի ծավալին հավասար, որը չափվում է գլխավոր գեներատորների արտանցիչներում՝
 - i) II մասում նշված «բ», «դ», «ե», «զ», «է» եւ «ը» տեսակի՝ անդամ պետությունների կողմից սահմանված՝ առնվազն 75 տոկոս տարեկան ընդհանուր արդյունավետություն ունեցող համակցված արտադրության տեղակայանքներում, եւ
 - ii) II մասում նշված «ա» եւ «զ» տեսակի՝ անդամ պետությունների կողմից սահմանված՝ առնվազն 80 տոկոս տարեկան ընդհանուր արդյունավետություն ունեցող համակցված արտադրության տեղակայանքներում.
- բ) «ա» կետի «i» ենթակետում նշված արժեքից ցածր տարեկան ընդհանուր արդյունավետությամբ համակցված արտադրության տեղակայանքներում (II մասում նշված «բ», «դ», «ե», «զ», «է» եւ «ը» տեսակի համակցված

արտադրության տեղակայանքներ) կամ «ա» կետի «ii» ենթակետում նշված արժեքից ցածր տարեկան ընդհանուր արդյունավետությամբ համակցված արտադրություն ապահովող տեղակայանքներում (II մասում նշված «ա» եւ «գ» տեսակի համակցված արտադրության տեղակայանքներ) համակցված արտադրության ծավալը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$E_{\text{ECU}} = R_{\text{ECU}} * C$$

որտեղ՝

E_{ECU} -ն համակցված արտադրությամբ ստացվող էլեկտրաէներգիայի քանակն է.

C -ն էլեկտրաէներգիայի եւ ջերմության հարաբերակցությունն է.

R_{ECU} -ն համակցված արտադրությամբ ստացվող օգտակար ջերմության քանակն է (որը այս նպատակով հաշվարկվում է ջերմության ընդհանուր արտադրանքից հանելով առանձին կաթսայական ագրեգատներում կամ մինչեւ տուրբին մտնելը գոլորշու գեներատորից թարմ շոգու շոգեառմամբ ստացված ջերմությունը):

Համակցված արտադրությամբ ստացվող էլեկտրաէներգիայի հաշվարկը պետք է կատարվի էլեկտրաէներգիայի եւ ջերմության հարաբերակցության փաստացի մեծության հիման վրա: Եթե համակցված արտադրության տեղակայանքի համար հայտնի չէ էլեկտրաէներգիայի եւ ջերմության հարաբերակցության փաստացի մեծությունը, ապա մասնավորապես վիճակագրական նպատակներով II մասում նշված «ա», «բ», «գ», «դ» եւ «ե» տեսակի տեղակայանքների համար կարող են կիրառվել հետևյալ ստանդարտ արժեքները՝ պայմանով, որ համակցված արտադրությամբ ստացվող հաշվարկված էլեկտրաէներգիան պակաս է տեղակայանքի կողմից արտադրվող էլեկտրաէներգիայի ընդհանուր ծավալից կամ հավասար է դրան.

Տեղակայանքի տեսակը	Էլեկտրաէներգիայի եւ ջերմության հարաբերակցության ստանդարտ մեծություն, <
Համակցված ցիկլով աշխատող՝ ջերմափոխանակիչ գազատուրբինային կայանք	0,95
Հակաճնշումային տուրբին	0,45
Կարգավորվող շոգեառմամբ կոնդենսացիոն տուրբին	0,45
Ջերմափոխանակիչ գազատուրբինային կայանք	0,55
Ներքին այրման շարժիչ	0,75

Եթե անդամ պետությունները ներմուծում են II մասում նշված «գ», «է», «ը», «թ», «ժ» եւ «ժա» տեսակի տեղակայանքների համար կիրառվող՝ էլեկտրաէներգիայի եւ ջերմության հարաբերակցության ստանդարտ արժեքներ, ապա այդ ստանդարտ արժեքները հրապարակվում են եւ դրանց մասին ծանուցվում է Հանձնաժողովին.

- գ) եթե համակցված արտադրության պրոցեսում ծախսվող վառելիքի էներգապարունակության որեւէ մաս վերականգնվում է քիմիական նյութերի տեսքով եւ կրկին օգտագործվում, ապա «ա» եւ «բ» կետերում նշված ընդհանուր արդյունավետությունը հաշվարկելուց առաջ այդ մասը հանվում է վառելիքի ծախսից.
- դ) անդամ պետությունները կարող են էլեկտրաէներգիայի եւ ջերմության հարաբերակցությունը սահմանել որպես էլեկտրականության եւ օգտակար ջերմության միջեւ հարաբերակցություն՝ առավել ցածր հզորությամբ համակցված արտադրության ռեժիմով շահագործման դեպքում՝ օգտագործելով կոնկրետ տեղակայանքի շահագործման սվյալները.

- ե) անդամ պետությունները «ա» եւ «բ» կետերին համապատասխան հաշվարկներ կատարելու նպատակով կարող են կիրառել մեկ տարվանից բացի այլ հաշվետու ժամանակահատվածներ:

Մաս II

Սույն հրահանգով կարգավորվող՝

համակցված արտադրության տեխնոլոգիաները

- ա) համակցված ցիկլով աշխատող՝ ջերմափոխանակիչ գազատուրբինային կայանք
- բ) հակաճնշումային տուրբին
- գ) կարգավորվող շոգեառմամբ կոնդենսացիոն տուրբին
- դ) ջերմափոխանակիչ գազատուրբինային կայանք
- ե) ներքին այրման շարժիչ
- զ) միկրոտուրբիններ
- է) անթափոն (stirling) շարժիչներ
- ը) վառելիքային տարրեր
- թ) շոգեշարժիչներ
- ժ) Ռենկինի օրգանական ցիկլեր
- ժա) 2 (30) հոդվածում ներկայացված սահմանմանը համապատասխանող ցանկացած այլ տեսակի տեխնիկական կառուցվածքներ կամ դրանց համակցված տեսակները:

Համակցված արտադրությամբ ստացվող էլեկտրաէներգիայի հաշվարկման ընդհանուր սկզբունքները կիրարկելիս եւ կիրառելիս անդամ պետություններն օգտագործում են Հանձնաժողովի՝

«Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2004/8/ԵՀ հրահանգի II հավելվածի կիրարկման եւ կիրառության մանրամասն ուղեցույցները սահմանելու մասին» 2008 թվականի նոյեմբերի 19-ի 2008/952/ԵՀ որոշմամբ սահմանված մանրամասն ուղեցույցները²⁸:

²⁸ ՊՏԼ 338, 17.12.2008 թ., էջ 55:

ՀԱՎԵԼՎԱԾ II

ՀԱՄԱԿՑՎԱԾ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՊՐՈՑԵՍԻ

ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Համակցված արտադրության արդյունավետության եւ առաջնային էներգիայի խնայողության ցուցանիշների հաշվարկման համար կիրառվող արժեքները պետք է սահմանվեն՝ ելնելով բնականոն պայմաններում տեղակայանքի ակնկալվող կամ փաստացի շահագործումից:

ա) Բարձր արդյունավետություն ապահովող համակցված արտադրություն

Սույն հրահանգի նպատակով բարձր արդյունավետություն ապահովող համակցված արտադրությունը պետք է բավարարի հետևյալ չափանիշները՝

— համակցված արտադրության տեղակայանքներում ջերմային եւ էլեկտրական էներգիայի անջատ արտադրության բազային (հղումային) արժեքների համեմատ՝ համակցված արտադրությամբ պետք է ապահովվի առաջնային էներգիայի առնվազն 10 տոկոս խնայողություն՝ հաշվարկված «բ» կետի համաձայն,

— առաջնային էներգիայի խնայողություն ապահովող փոքր եւ միկրո տեղակայանքների արտադրությունը կարող է որակվել որպես բարձր արդյունավետություն ապահովող համակցված արտադրություն:

բ) Առաջնային էներգիայի խնայողության ցուցանիշների հաշվարկը

Ըստ I հավելվածի սահմանված համակցված արտադրությամբ ապահովվող առաջնային էներգիայի խնայողության ցուցանիշը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$PES = \left(1 - \frac{1}{\frac{CHP_{H\eta}}{Ref_{H\eta}} + \frac{CHP_{E\eta}}{Ref_{E\eta}}} \right) \times 100 \%$$

որտեղ՝

ԱԷԽ-ն առաջնային էներգիայի խնայողության ցուցանիշն է:

ՀԶԷ Ջղ-ն ջերմային էներգիայի համակցված արտադրության արդյունավետությունն է, որը սահմանվում է որպես օգտակար ջերմային էներգիայի տարեկան արտադրանք՝ բաժանած ստացվող օգտակար ջերմության ու համակցված արտադրությամբ էներգիայի գումարային քանակության արտադրության համար օգտագործված վառելիքին:

Բազ Ջղ-ն ջերմային էներգիայի անջատ արտադրության արդյունավետության բազային (հղումային) արժեքն է:

ՀԶԷ Էղ-ն էլեկտրաէներգիայի համակցված արտադրության արդյունավետությունն է, որը սահմանվում է որպես համակցված արտադրությամբ ստացվող էլեկտրական էներգիայի տարեկան արտադրանք՝ բաժանած ստացվող օգտակար ջերմության ու համակցված արտադրությամբ էլեկտրական էներգիայի արտադրության գումարային քանակության համար օգտագործված վառելիքին: Եթե համակցված արտադրության տեղակայանքն արտադրում է մեխանիկական էներգիա, համակցված եղանակով արտադրված էլեկտրական էներգիայի տարեկան քանակությունը կարող է ավելացվել եւս մեկ լրացուցիչ՝ էլեկտրական էներգիայի քանակը ներկայացնող տարրով, որը համարժեք է մեխանիկական էներգիայի քանակին: Այդ լրացուցիչ տարրը 14(10) հոդվածի համաձայն ծագման երաշխիքներ տրամադրելու իրավունք չի առաջացնում:

Բազ Էղ-ն էլեկտրաէներգիայի անջատ արտադրության արդյունավետության բազային (հղումային) արժեքն է:

- գ) էներգախնայողության ցուցանիշների հաշվարկն այլընտրանքային մեթոդով

Անդամ պետությունները կարող են ներքոնշյալ եղանակով հաշվարկել ջերմության եւ էլեկտրաէներգիայի ու մեխանիկական էներգիայի արտադրության արդյունքում ապահովված առաջնային էներգիայի խնայողության ցուցանիշները՝ առանց I հավելվածը կիրառելու՝ նույն պրոցեսում համակցված արտադրության արտադրանք չհանդիսացող ջերմային ու էլեկտրական էներգիայի ծավալը բացառելու համար: Այդ արտադրությունը կարող է համարվել բարձր արդյունավետության համակցված արտադրություն այն դեպքում, եթե բավարարված են սույն հավելվածի «ա» կետում նշված արդյունավետության չափանիշները, իսկ 25 ՄՎտ-ից ավելի էլեկտրական հզորություն ունեցող համակցված արտադրության տեղակայանքների դեպքում ընդհանուր արդյունավետությունը կազմում է 70 տոկոս: Այնուամենայնիվ, ծագման երաշխիքի տրամադրման եւ վիճակագրական նպատակներով, համակցված արտադրությամբ ստացված էլեկտրական էներգիայի քանակական բնութագրերը որոշվում են I հավելվածի համաձայն:

Եթե պրոցեսի համար առաջնային էներգիայի խնայողության ցուցանիշները հաշվարկվում են վերոնշյալ այլընտրանքային հաշվարկի եղանակով, ապա առաջնային էներգիայի խնայողության ցուցանիշները հաշվարկվում են՝ օգտագործելով սույն հավելվածի «բ» կետում նշված բանաձեւը՝ փոխարինելով «ԶԷ Զդ»-ն «Զդ»-ով եւ «ՀԷ Էդ»-ն «Էդ»-ով՝ որտեղ՝

Զդ-ն նշանակում է պրոցեսի ջերմային արդյունավետություն, որը սահմանվում է որպես ջերմային էներգիայի տարեկան արտադրանք՝ բաժանած ջերմության ու էլեկտրական էներգիայի արտադրության գումարային քանակության համար օգտագործված վառելիքին:

Էդ-ն նշանակում է պրոցեսի էլեկտրաէներգետիկ արդյունավետություն, որը սահմանվում է որպես էլեկտրական էներգիայի տարեկան արտադրանք՝ բաժանած ջերմության ու էլեկտրական էներգիայի արտադրության գումարային քանակության համար տարվա ընթացքում ծախսված վառելիքին: Եթե համակցված արտադրության տեղակայանքն արտադրում է մեխանիկական

էներգիա, համակցված արտադրությամբ ստացվող էլեկտրաէներգիայի տարեկան քանակությունը կարող է ավելացվել եւս մեկ լրացուցիչ՝ էլեկտրաէներգիայի քանակը ներկայացնող տարրով, որը համարժեք է մեխանիկական էներգիայի քանակին: Այդ լրացուցիչ տարրը 14(10) հոդվածի համաձայն ծագման երաշխիքներ տրամադրելու իրավունք չի առաջացնի:

- դ) Անդամ պետությունները սույն հավելվածի «բ» եւ «գ» կետերին համապատասխան հաշվարկներ կատարելու նպատակով կարող են կիրառել մեկ տարվանից բացի այլ հաշվետու ժամանակահատվածներ:
- ե) Համակցված արտադրության միկրո տեղակայանքների դեպքում առաջնային էներգիայի խնայողության ցուցանիշների հաշվարկները կարող են կատարվել հավաստագրված արժեքների հիման վրա:
- զ) Ջերմային եւ էլեկտրական էներգիայի անջատ արտադրության արդյունավետության բազային (հղումային) արժեքները

Արդյունավետության այդ ներդաշնակեցված բազային (հղումային) արժեքները պետք է բաղկացած լինեն ըստ համապատասխան գործոնների, այդ թվում՝ կառուցման տարվա եւ վառելիքի տեսակների հետ կապված գործոնների տարբերակված արժեքների աղյուսակից եւ պետք է հիմնված լինեն փաստաթղթերով հիմնավորված վերլուծության վրա՝ հաշվի առնելով, ի թիվս այլնի, իրական պայմաններում շահագործման տվյալները, վառելիքի կազմը եւ կլիմայական պայմանները, ինչպես նաեւ կիրառվող համակցված արտադրության տեխնոլոգիաները:

Ջերմության եւ էլեկտրաէներգիայի անջատ արտադրության արդյունավետության բազային (հղումային) արժեքներով «բ» կետում նշված բանաձեւին համապատասխան պետք է սահմանվի ջերմային եւ էլեկտրական էներգիայի անջատ արտադրության շահագործման արդյունավետությունը, որը նախատեսվում է փոխարինել համակցված արտադրությամբ:

Արդյունավետության բազային (հղումային) արժեքները հաշվարկվում են հետեւյալ սկզբունքների համաձայն՝

1. Համակցված արտադրության տեղակայանքների դեպքում անջատ արտադրության հետ համեմատությունը պետք է հիմնված լինի այն սկզբունքի վրա, որ համեմատվեն վառելիքի միեւնույն կատեգորիաները:
 2. Համակցված արտադրության յուրաքանչյուր տեղակայանք համեմատվում է այդ տեղակայանքի կառուցման տարվա դրությամբ շուկայում առկա ջերմային եւ էլեկտրական էներգիայի անջատ արտադրության լավագույն եւ տնտեսապես հիմնավորված տեխնոլոգիայի հետ:
 3. Ավելի քան 10 տարվա հնություն ունեցող համակցված արտադրության տեղակայանքների արդյունավետության բազային (հղումային) արժեքները ֆիքսելու համար պետք է վերցվեն տեղակայանքների 10 տարի առաջվա բազային (հղումային) արժեքները:
 4. Էլեկտրաէներգիայի եւ ջերմային էներգիայի անջատ արտադրության արդյունավետության բազային (հղումային) արժեքներում պետք է արտահայտված լինեն անդամ պետությունների միջեւ բնակլիմայական պայմանների տարբերություններ:
-

ՀԱՎԵԼՎԱԾ III**ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ
ԱՊՐԱՆՔՆԵՐ, ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՇԵՆՔԵՐ ԳՆԵԼՈՒՆ
ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԷՆԵՐԳԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ**

Կենտրոնական կառավարման մարմինները, որոնք ապրանքներ, ծառայություններ կամ շենքեր են գնում, այնքանով, որքանով դա համապատասխանում է ծախսարդյունավետությանը, տնտեսական առումով իրագործելիությանը, ավելի մեծ կայունությանը, տեխնիկական նպատակահարմարությունը, ինչպես նաև բավարար չափով մրցունակությանը.

- ա) այն դեպքում, երբ ապրանքների վրա տարածվում է 2010/30/ԵՄ հրահանգով ընդունված պատվիրակված ակտը կամ Հանձնաժողովի՝ դրան առնչվող եւ կիրարկումն ապահովող հրահանգը, գնում են միայն այնպիսի ապրանքներ, որոնք համապատասխանում են էներգաարդյունավետության հնարավորինս ամենաբարձր դասի ապրանքներին ներկայացվող չափանիշներին՝ հաշվի առնելով բավարար մրցունակություն ապահովելու անհրաժեշտությունը.
- բ) այն դեպքում, երբ «ա» կետով չկարգավորվող ապրանքի վրա տարածվում է 2009/125/ԵՀ հրահանգով նախատեսված՝ կիրարկումն ապահովող միջոցառումը, գնում են միայն այնպիսի ապրանքներ, որոնք համապատասխանում են կիրարկումն ապահովող այդ միջոցառման մեջ նշված էներգաարդյունավետության հենանիշներին.
- գ) գնում են գրասենյակային սարքավորումներ համարվող ապրանքներ, որոնց վրա տարածվում է Խորհրդի՝ «Գրասենյակային սարքավորումների էներգաարդյունավետության պիտակավորման ծրագրերի համակարգման մասով Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարության եւ Եվրոպական համայնքի միջեւ համաձայնագրի կնքման մասին» 2006 թվականի դեկտեմբերի 18-ի 2006/1005/ԵՀ

որոշումը¹, եւ որոնք համապատասխանում են այդ որոշմանը կից համաձայնագրի «Գ» հավելվածում թվարկված էներգաարդյունավետության պահանջներից ոչ պակաս խիստ պահանջներին.

- դ) գնում են միայն այնպիսի անվադողեր, որոնք համապատասխանում են վառելիքի էներգաարդյունավետության ամենաբարձր դասի անվադողերին ներկայացվող չափանիշներին, ինչպես սահմանվում է Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի՝ «Վառելիքի արդյունավետության եւ այլ կարեւոր պարամետրերի առումով անվադողերի պիտակավորման մասին» 2009 թվականի նոյեմբերի 25-ի թիվ 1222/2009 (ԵՀ) կանոնակարգով²: Այդ պահանջով չի կանխվում պետական մարմինների կողմից թաց պայմաններում կցորդման դասակարգի կամ պտույտի արտաքին աղմուկի դասակարգի պատկանող անվադողեր գնելը, եթե դա հիմնավորվում է անվտանգության կամ հանրային առողջության հետ կապված պատճառներով.
- ե) ծառայությունների մատուցման պայմանագրեր կնքելու իրենց մրցույթների ժամանակ պահանջում են, որ ծառայություններ մատուցողները տվյալ ծառայությունները մատուցելու նպատակով եւ տվյալ ծառայությունները մատուցելիս օգտագործեն միայն այնպիսի ապրանքներ, որոնք համապատասխանում են «ա»-«բ» կետերում նշված պահանջներին: Այդ պահանջը կիրառվում է միայն այն նոր ապրանքների նկատմամբ, որոնք ծառայություններ մատուցողները գնել են մասամբ կամ ամբողջովին տվյալ ծառայությունը մատուցելու նպատակով.

¹ ՊՏ L 381, 28.12.2006 թ., էջ 24:

² ՊՏ L 342, 22.12.2009 թ., էջ 46:

- զ) գնում կամ վարձակալության նոր համաձայնագրեր են կնքում միայն այն շենքերի մասով, որոնք համապատասխանում են առնվազն 5(1) հոդվածում նշված էներգաարդյունավետության նվազագույն պահանջներին, եթե գնման նպատակը հետեւյալը չէ.
- i) հիմնանորոգում կամ քանդում իրականացնել.
 - ii) պետական մարմինների դեպքում՝ շենքը վերավաճառել՝ առանց այդ շենքը պետական մարմնի սեփական նպատակներով օգտագործելու, կամ
 - iii) պահպանել այն որպես հատուկ նշանակության գոտու մաս կազմող շենք կամ ճարտարապետական կամ պատմական նշանակություն ունենալու համար:

Այդ պահանջներին համապատասխանությունն ստուգվում է 2010/31/ԵՄ հրահանգում նշված էներգաարդյունավետության հավաստագրերի միջոցով:

ՀԱՎԵԼՎԱԾ IV

ՎԵՐՋՆԱԿԱՆ ՍՊԱՌՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԵՎ ՀԱՏՈՒԿ

ԸՆՏՐՎԱԾ ՎԱՌԵԼԻՔԻ ԷՆԵՐԳԱՊԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ.

ՓՈԽԱՐԿՄԱՆ ԱՂՅՈՒՍԱԿ¹

Էներգետիկ ապրանք	կՋ (ՍՋԱ)	Նավթին համարժեք կգ (ՍՋԱ)	կՎտժ (ՍՋԱ)
1 կգ կոքս	28 500	0,676	7,917
1 կգ քարածուխ	17 200 — 30 700	0,411 — 0,733	4,778 — 8,528
1 կգ գորշ քարածխի բրիկետներ	20 000	0,478	5,556
1 կգ սեւ լիգնիտ	10 500 — 21 000	0,251 — 0,502	2,917 — 5,833
1 կգ գորշ ածուխ	5 600 — 10 500	0,134 — 0,251	1,556 — 2,917
1 կգ նավթաբեր թերթաքար	8 000 — 9 000	0,191 — 0,215	2,222 — 2,500
1 կգ տորֆ	7 800 — 13 800	0,186 — 0,330	2,167 — 3,833
1 կգ տորֆային բրիկետներ	16 000 — 16 800	0,382 — 0,401	4,444 — 4,667
1 կգ մնացորդային նավթային վառելիք (չմշակված նավթ)	40 000	0,955	11,111
1 կգ թեթեւ հեղուկ նավթ	42 300	1,010	11,750
1 կգ ավտոմոբիլային բենզին (բենզին)	44 000	1,051	12,222
1 կգ պարաֆին	40 000	0,955	11,111
1 կգ հեղուկացված նավթային գազ	46 000	1,099	12,778
1 կգ բնական գազ ⁽¹⁾	47 200	1,126	13,10
1 կգ հեղուկացված բնական գազ	45 190	1,079	12,553
1 կգ փայտ (25 տոկոս խոնավությամբ) ⁽²⁾	13 800	0,330	3,833
1 կգ հատիկներ/փայտե աղյուսներ	16 800	0,401	4,667
1 կգ թափոն	7 400 — 10 700	0,177 — 0,256	2,056 — 2,972
1 ՄՋ անջատված ջերմային էներգիա	1 000	0,024	0,278
1 կՎտժ էլեկտրական էներգիա	3 600	0,086	1 ⁽³⁾

Աղբյուրը՝ Եվրոստատ:

1) 93 տոկոս մեթան:

2) Անդամ պետությունները կարող են այլ արժեքներ կիրառել՝ համապատասխան անդամ պետությունում հաճախակի օգտագործվող փայտի տեսակից կախված:

3) Կիրառելի է այն դեպքում, երբ էներգախնայողության ծավալը հաշվարկվում է առաջնային էներգիայի ցուցանիշներով՝ օգտագործելով վերջնական էներգասպառման վրա հիմնված «ներքեւից վերեւ» մոտեցումը: Անդամ պետությունները կՎտժ-ով արտահայտված էներգախնայողության դեպքում կարող են կիրառել նախապես սահմանված 2.5 գործակիցը: Անդամ պետությունները կարող են այլ գործակից կիրառել, եթե կարողանան դա հիմնավորել:

¹ Անդամ պետությունները կարող են փոխարկման այլ գործոններ կիրառել, եթե կարողանան դրանք հիմնավորել:

ՀԱՎԵԼՎԱԾ V

Էներգաարդյունավետության մասով պարտավորությունների սխեմաների եւ 7(1), (2) եւ (9) հոդվածով, ինչպես նաեւ 20(6) հոդվածով նախատեսված քաղաքականության այլ միջոցառումների ազդեցությունը գնահատելու ընդունված մեթոդներն ու սկզբունքները

1. Էներգախնայողության ծավալը հաշվարկելու մեթոդները 7(1) եւ (2) հոդվածի, 7(9) հոդվածի երկրորդ ենթապարբերության «բ», «գ», «դ», «ե» եւ «զ» կետերի, ինչպես նաեւ 20(6) հոդվածի նպատակներով:

Պարտավորություն ստանձնած, մասնակից կամ լիազորված կողմերը կամ իրականացնող պետական մարմինները Էներգախնայողության ծավալը հաշվարկելու նպատակով կարող են կիրառել հետեւյալ մեթոդներից մեկը կամ մի քանիսը.

- ա) ենթադրվող խնայողություններ՝ հղում կատարելով նմանատիպ կայանքներում անկախ ձեռով մշտադիտարկման ենթարկված էներգետիկ բնույթի նախորդ բարելավումների արդյունքներին: Ընդհանուր մոտեցումը կոչվում է *«կանխատեսվող»*.
- բ) չափված խնայողություններ, որոնց դեպքում միջոցառման կամ միջոցառումների փաթեթի իրականացման արդյունքում ապահովված խնայողությունների ծավալը որոշվում է էներգաօգտագործման փաստացի կրճատումն արձանագրելու միջոցով՝ պատշաճորեն հաշվի առնելով այնպիսի գործոններ, ինչպիսիք են լրացուցչության սկզբունքը, ծանրաբեռնվածությունը, արտադրության մակարդակները եւ սպառման վրա ազդեցություն գործող եղանակը: Ընդհանուր մոտեցումը կոչվում է *«փաստացի»*.
- գ) ըստ մասշտաբի չափված խնայողություններ, որոնց դեպքում օգտագործվում են խնայողությունների տեխնիկական գնահատումներ:

Այս մոտեցումը կարող է կիրառվել միայն այն դեպքում, երբ որոշակի կայանքի համար դժվար է կամ անհամաչափորեն թանկ է հուսալի եւ հիմնավոր տվյալներ սահմանել, օրինակ՝ ճնշակի (կոմպրեսորի) կամ էլեկտրական շարժիչի կՎտժ-ով չափման սանդղակն այլ սանդղակով փոխարինելը, որի դեպքում գնահատվել է խնայողությունների վերաբերյալ անկախ տեղեկատվությունը, կամ եթե դրանք իրականացվում են ազգային մակարդակով սահմանված մեթոդաբանությունների եւ հենանիշերի հիման վրա՝ որակավորված կամ հավատարմագրված փորձագետների կողմից, որոնք անկախ են պարտավորություն ստանձնած, մասնակից կամ լիազորված շահագրգիռ կողմերից.

- դ) վերահսկվող խնայողություններ, երբ որոշվում է սպառողների արձագանքը խորհրդատվություններին, տեղեկատվական քարոզարշավներին, պիտակավորմանը կամ հավաստագրման սխեմաներին կամ խելացի չափումներին: Այս մոտեցումը կարող է միայն կիրառվել սպառողների վարքագծում փոփոխություններից բխող խնայողությունների դեպքում: Այն չի կարող կիրառվել նյութական միջոցառումների իրականացումից բխող խնայողությունների դեպքում:

2. 7(1) եւ (2) հոդվածի ու 7(9) հոդվածի երկրորդ ենթապարբերության «բ», «գ», «դ», «ե» եւ «զ» կետերի, ինչպես նաեւ 20(6) հոդվածի նպատակներով էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառման էներգախնայողությունը սահմանելիս կիրառվում են հետեւյալ սկզբունքները.

- ա) գովասանքի կարելի է արժանացնել միայն այն խնայողությունները, որոնք գերազանցում են հետեւյալ մակարդակները.
- ի) Միության՝ նոր ուղեւորատար ավտոմեքենաների եւ թեթեւ բեռնատար մեքենաների համար արտանետման չափանիշներ՝ համապատասխանաբար Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի՝

«Թեթեւ մարդատար մեքենաների կողմից CO2-ի արտանետումների նվազեցման վերաբերյալ Համայնքի միասնական մոտեցման շրջանակներում նոր ուղեւորատար ավտոմեքենաների համար արտանետման չափանիշներ սահմանելու մասին» 2009 թվականի ապրիլի 23-ի թիվ 443/2009 կանոնակարգի (ԵՀ)¹ ու Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի՝ «Թեթեւ մարդատար մեքենաների կողմից ածխաթթու գազի արտանետումների կրճատման վերաբերյալ Միության միասնական մոտեցման շրջանակներում նոր թեթեւ բեռնատար փոխադրամիջոցների համար արտանետման չափանիշներ սահմանելու մասին» 2011 թվականի մայիսի 11-ի թիվ 510/2011 կանոնակարգի (ԵՄ) կիրարկումից հետո.

- ii) Միության՝ շուկայից որոշակի էներգասպառող արտադրատեսակների դուրսհանմանը վերաբերող պահանջներ՝ 2009/125/ԵՀ հրահանգով նախատեսված կիրարկումն ապահովող միջոցառումներն իրականացնելուց հետո, եւ
 - բ) տարածաշրջանների կլիմայական փոփոխություններն արձանագրելու նպատակով անդամ պետությունները կարող են խնայողությունները հարմարեցնել ստանդարտ արժեքների կամ էներգախնայողության տարբեր ծավալները համապատասխանեցնել ըստ տարածաշրջանների ջերմաստիճանի տատանումների.
 - գ) պարտավորություն ստանձնած, մասնակից կամ լիազորված կողմի գործունեությունը պետք է ակնհայտորեն էական նշանակություն ունենա պահանջվող խնայողություններն ապահովելու համար.
 - դ) առանձին գործողության արդյունքում ապահովված խնայողությունները չեն կարող վերագրվել մեկից ավելի կողմի.

¹ ՊՏ L 140, 5.6.2009 թ., էջ 1:

- ե) Էներգախնայողությունը հաշվարկելիս հաշվի է առնվում խնայողությունների ամբողջ ժամանակահատվածը: Դա կարող է իրականացվել՝ հաշվարկելով այն խնայողությունները, որոնք կարելի է ապահովել յուրաքանչյուր առանձին գործողության միջոցով դրա իրականացման եւ 2020 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում: Որպես այլընտրանք՝ անդամ պետությունները կարող են կիրառել այլ մեթոդ, որով նախատեսվում է ապահովել խնայողությունների առնվազն միեւնույն ընդհանուր ծավալը: Այլ մեթոդներ կիրառելիս անդամ պետություններն ապահովում են, որ նշված այլ մեթոդներով հաշվարկված էներգախնայողության ընդհանուր ծավալը չգերազանցի էներգախնայողությունների այն ծավալը, որը կստացվեր իրենց հաշվարկների արդյունքում, եթե հաշվարկվեին խնայողությունները, որոնք կարելի է ապահովել յուրաքանչյուր առանձին գործողության միջոցով դրա իրականացման եւ 2020 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում: Անդամ պետությունները, սույն հրահանգի XIV հավելվածին համապատասխան, իրենց էներգաարդյունավետության գործողությունների առաջին ազգային ծրագրում մանրամասն նկարագրում են իրենց կողմից կիրառված մյուս մեթոդները, ինչպես նաեւ այն դրույթները, որոնք կիրառվել են հաշվարկման վերաբերյալ այս պարտադիր պահանջի կատարումն ապահովելու նպատակով, եւ
- զ) թույլատրվում են պարտավորություն ստանձնած, մասնակից կամ լիազորված կողմերի առանձին կամ միասնական գործողությունները, որոնք նպատակաուղղված են արտադրանքի, սարքավորումների կամ շուկաների էներգաարդյունավետության ավելի բարձր մակարդակի երկարաժամկետ ապահովմանը, եւ
- է) էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումների կիրառումը խթանելիս անդամ պետություններն ապահովում են, որ

պահպանվեն ապրանքների, ծառայությունների եւ միջոցառումների իրականացմանը ներկայացվող որակի չափանիշները: Եթե այդպիսի չափանիշներ գոյություն չունեն, ապա անդամ պետություններն աշխատում են պարտավորություն ստանձնած, մասնակից կամ լիազորված կողմերի հետ դրանք ներմուծելու ուղղությամբ:

3. 7(9) հոդվածի երկրորդ ենթապարբերության «ա» կետով նախատեսված քաղաքականության միջոցառումների արդյունքում ապահովված էներգախնայողությունը որոշելիս կիրառվում են հետեւյալ սկզբունքները.

ա) գովասանքի են արժանանում միայն հարկային միջոցառումների արդյունքում ապահովված էներգախնայողությունները, որոնք գերազանցում են վառելիքի նկատմամբ կիրառվող հարկման նվազագույն մակարդակը, ինչպես պահանջվում է Խորհրդի՝ էներգակիրների եւ էլեկտրաէներգիայի հարկման վերաբերյալ Համայնքի օրենսդրական շրջանակը վերակառուցող՝ 2003 թվականի հոկտեմբերի 27-ի 2003/96/ԵՀ հրահանգով ⁽¹⁾ կամ Խորհրդի՝ «Ավելացված արժեքի հարկի ընդհանուր համակարգի մասին» 2006 թվականի նոյեմբերի 28-ի 2006/112/ԵՀ հրահանգով ⁽²⁾.

բ) գնային ճկունության վերաբերյալ վերջերս ներկայացված պաշտոնական ներկայացուցչական տվյալներն օգտագործվում են ազդեցությունների հաշվարկման նպատակով, եւ

գ) լրացուցիչ հարկային քաղաքականության գործիքների, այդ թվում՝ հարկաբյուջետային խթանների կամ հիմնադրամին ուղղված վճարների միջոցով ապահովված էներգախնայողությունը հաշվարկվում է առանձին:

4. Մեթոդաբանության վերաբերյալ ծանուցումը

¹⁾ ՊՏ L 283, 31.10.2003 թ., էջ 51:

²⁾ ՊՏ L 347, 11.12.2006 թ., էջ 1:

Անդամ պետություններն ամենաուշը 2013 թվականի դեկտեմբերի 5-ին Հանձնաժողովին ծանուցում են էներգաարդյունավետության մասով պարտավորությունների սխեմաների իրականացման վերաբերյալ եւ 7(9) հոդվածի ու 20(6) հոդվածի նպատակներով իրենց կողմից առաջարկվող մանրամասն մեթոդաբանության մասին: Բացառությամբ հարկերի հետ կապված դեպքերի՝ այդ ծանուցումը ներառում է տեղեկություններ՝

- ա) պարտավորություն ստանձնած, մասնակից կամ լիազորված կողմերի կամ իրականացնող պետական մարմինների մասին.
- բ) թիրախային ոլորտների մասին.
- գ) էներգախնայողության թիրախի կամ ակնկալվող էներգախնայողության մակարդակի մասին, որը պետք է ապահովվի ամբողջ կամ միջանկյալ ժամկետների ընթացքում.
- դ) պարտավորության ժամկետի եւ միջանկյալ ժամկետների տևողության մասին.
- ե) չափանիշներին համապատասխանող միջոցառումների կատեգորիաների մասին.
- զ) հաշվարկի մեթոդաբանության, այդ թվում՝ այն մասին, թե ինչպես պետք է որոշվեն լրացուցչության եւ էականության սկզբունքները, եւ որ մեթոդաբանություններն ու հենանիշերն են կիրառվում տեխնիկական գնահատումների համար.
- է) միջոցառումների ամբողջ ժամանակահատվածի մասին.
- ը) այն մոտեցման մասին, որը կիրառվել է անդամ պետության կլիմայական փոփոխությունների հաղթահարման նպատակով.
- թ) որակի չափանիշների մասին.
- ժ) մշտադիտարկման եւ ստուգման վերաբերյալ արձանագրությունների մասին, ինչպես նաեւ այն մասին, թե ինչպես է ապահովվում դրանց

անկախությունը պարտավորություն ստանձնած, մասնակից կամ լիազորված կողմերի կողմից.

ժա) աուդիտի վերաբերյալ արձանագրությունների մասին, եւ

ժբ) այն մասին, թե ինչպես է հաշվի առնվում 7(1) հոդվածի երկրորդ ենթապարբերությամբ նախատեսված պահանջն իրականացնելու անհրաժեշտությունը:

Հարկերի դեպքում այդ ծանուցումը ներառում է տեղեկություններ հետեւյալի մասին.

ա) թիրախային ոլորտների եւ հարկատուների հատվածի մասին.

բ) իրականացնող պետական մարմնի մասին.

գ) այն խնայողությունների մասին, որոնք ակնկալվում է կատարել.

դ) հարկային միջոցառման եւ միջանկյալ ժամկետների տեւողության մասին, եւ

ե) հաշվարկման մեթոդոլոգիայի, այդ թվում՝ այն մասին, թե ինչպիսի գնային ճկունություն է կիրառվում:

ՀԱՎԵԼՎԱԾ VI

**Էներգետիկ աուդիտներին, այդ թվում՝
որպես էներգակառավարման համակարգի մաս իրականացված
աուդիտներին ներկայացվող նվազագույն չափանիշները**

8-րդ հոդվածում նշված էներգետիկ աուդիտները հիմնվում են հետևյալ ուղենիշների վրա.

- ա) հիմնված լինել էներգասպառման եւ (էլեկտրաէներգիայի դեպքում) բեռնվածքի պրոֆիլի վերաբերյալ շահագործման թարմ, հիմնավոր եւ վերահսկելի տվյալների վրա.
- բ) կազմել մանրակրկիտ հաշվետվություն՝ շենքերի կամ մի խումբ շենքերի, արդյունաբերական շահագործման կամ կայանքների, այդ թվում՝ տրանսպորտի էներգասպառման պրոֆիլի վերաբերյալ.
- գ) հնարավորության դեպքում փոխհատուցվելիության պարզ ժամանակահատվածի փոխարեն հիմնվել կենսունակության ամբողջ ցիկլի ընթացքում կատարված ծախսերի վերլուծության վրա՝ երկարաժամկետ խնայողությունները, երկարաժամկետ ներդրումների մնացորդային արժեքները եւ զեղչատոկոսները հաշվի առնելու նպատակով.
- դ) լինել համաչափ եւ բավարար չափով ներկայացուցչական՝ թույլ տալով ներկայացնել ընդհանուր էներգաարդյունավետության ճշգրիտ պատկերը, ինչպես նաեւ բարելավման ամենակարելի հնարավորությունների ճշգրիտ սահմանումը:

Էներգետիկ աուդիտները հնարավոր են դարձնում առաջարկված միջոցառումների մասով մանրամասն եւ հաստատված հաշվարկներ կատարելը՝ հնարավոր խնայողությունների վերաբերյալ հստակ տեղեկություններ տրամադրելու նպատակով:

Էներգետիկ աուդիտների ընթացքում օգտագործված տվյալները պահպանվում են վիճակագրության վերլուծության եւ արդյունավետությունը հսկելու նպատակով:

ՀԱՎԵԼՎԱԾ VII

**Փաստացի սպառման վրա հիմնված
հաշիվներ ներկայացնելու ու հաշիվների վերաբերյալ
տեղեկությունների մասով նվազագույն պահանջները**

1. Հաշիվներ ներկայացնելու մասով նվազագույն պահանջները

1.1. Փաստացի սպառման վրա հիմնված հաշիվներ ներկայացնելը

Սեփական էներգասպառումը կարգավորելու հնարավորություն ընձեռելու նպատակով վերջնական սպառողներին փաստացի սպառման վրա հիմնված հաշիվները պետք է ներկայացվեն առնվազն տարին մեկ անգամ, իսկ հաշիվների վերաբերյալ տեղեկությունները պետք է հասանելի լինեն առնվազն եռամսյակը մեկ անգամ՝ ըստ պահանջի կամ այն դեպքում, երբ սպառողները նախընտրել են հաշիվները ստանալ տարին երկու անգամ՝ էլեկտրոնային կամ այլ եղանակով: Միայն խոհարարական նպատակներով օգտագործված գազը կարող է ազատվել այս պահանջից:

1.2. Հաշվի մեջ պարունակվող նվազագույն տեղեկությունները

Անդամ պետություններն ապահովում են, որ անհրաժեշտության դեպքում վերջնական սպառողներին հստակ եւ հասկանալի ձեւով կամ վերջիններիս հաշիվներում, պայմանագրերում, գործարքներում եւ բաշխիչ կայաններում տրվող ստացականներում կամ դրանց հետ միասին ներկայացվեն հետեւյալ տեղեկությունները.

ա) էներգիայի փաստացի ընթացիկ գները եւ փաստացի էներգասպառումը.

բ) վերջնական սպառողների ընթացիկ էներգասպառման համեմատությունը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի էներգասպառման հետ՝ նախընտրելի է գծագրերի տեսքով.

գ) վերջնական սպառողների կազմակերպությունների, էներգետիկ գործակալությունների կամ նմանատիպ մարմինների համար կոնտակտային տվյալներ, այդ թվում՝ կայքէջի հասցեներ, որտեղ կարելի է էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված հասանելի միջոցառումների, վերջնական սպառողների համեմատական պրոֆիլների եւ էներգասպառող սարքավորումների օբյեկտիվ տեխնիկական մասնագրերի վերաբերյալ տեղեկություններ ձեռք բերել:

Դրանից բացի, անդամ պետությունները հնարավորության եւ նպատակահարմար լինելու դեպքում ապահովում են, որ սպառողների նույն կատեգորիայում ներառված՝ նորմերին եւ ուղենիշներին համապատասխանող միջին վերջնական սպառողի հետ համեմատությունները վերջնական սպառողներին ներկայացվեն հստակ եւ հասկանալի ձեւով՝ վերջիններիս հաշիվներում, պայմանագրերում, գործարքներում եւ բաշխիչ կայաններում տրվող ստացականներում կամ դրանց հետ միասին կամ դրանցում արվող հատուկ նշումով:

1.3. Էներգաարդյունավետության կից ներկայացվող հաշիվների եւ վերջնական սպառողների համար հետադարձ կապ ապահովելու այլ միջոցների վերաբերյալ խորհրդատվություն

Պայմանագրերն ու պայմանագրային փոփոխություններն ուղարկելիս, ինչպես նաեւ սպառողների կողմից ստացվող հաշիվներում կամ առանձին սպառողների, էներգաբաշխիչ ընկերությունների, բաշխիչ համակարգի օպերատորների եւ մանրածախ իրացմամբ զբաղվող ընկերությունների համար նախատեսված կայքերի միջոցով իրենց սպառողներին հստակ եւ հասկանալի ձեւով տեղեկացնում են անկախ սպառողների խորհրդատվական կենտրոնների, էներգետիկ գործակալությունների կամ նմանատիպ հաստատությունների համար նախատեսված կոնտակտային տվյալների, այդ թվում՝ վերջիններիս ինտերնետային հասցեների մասին, որտեղ նրանք կարող են

խորհրդատվություն ստանալ էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված հասանելի միջոցառումների, իրենց էներգասպառման եւ էներգասպառող սարքերի տեխնիկական մասնագրերի հենանիշային պրոֆիլների վերաբերյալ, ինչը կարող է ծառայել այդ սարքերի էներգասպառումը նվազեցնելու գործին:

*ՀԱՎԵԼՎԱԾ VIII***Ջեռուցման եւ հովացման արդյունավետության ներուժը**

1. 14(1) հոդվածում նշված՝ ջեռուցման եւ հովացման ազգային ներուժի համապարփակ գնահատումը ներառում է՝

- ա) ջեռուցման եւ հովացման պահանջարկի նկարագրությունը.
- բ) կանխատեսում, թե ինչպես է այս պահանջարկը փոփոխվելու հաջորդող տասը տարիների ընթացքում՝ հաշվի առնելով մասնավորապես պահանջարկի փոփոխությունը շենքերի եւ արդյունաբերության տարբեր ոլորտների մասով.
- գ) ազգային տարածքի քարտեզ՝ միեւնույն ժամանակ պահպանելով առեւտրային առումով զգայուն տեղեկատվությունը.
 - i) ջեռուցման եւ հովացման պահանջարկի կետերը, այդ թվում՝
 - կառուցապատման առնվազն 0,3 գործակից ունեցող քաղաքապետարաններ եւ կոնուրբացիաներ, եւ
 - ջեռուցման եւ հովացման տարեկան ընդհանուր 20 ԳՎտ/ժամից ավելի սպառմամբ արդյունաբերական գոտիներ.
 - ii) տարածքային ջեռուցման եւ հովացման՝ գոյություն ունեցող եւ նախատեսվող ենթակառուցվածք.
 - iii) ջեռուցման եւ հովացման մատակարարման կետերը, այդ թվում՝
 - տարեկան ընդհանուր 20 ԳՎտ/ժամից ավելի էլեկտրաէներգիա արտադրող կայանքներ.
 - թափոնների այրման կայաններ.
 - համակցված արտադրության՝ գոյություն ունեցող եւ նախատեսվող տեղակայանքներ, որոնց դեպքում

կիրառվում են I հավելվածի II մասում նշված տեխնոլոգիաները, ինչպես նաև տարածքային ջեոուցման կայանքներ.

- դ) ջեոուցման եւ հովացման պահանջարկի որոշում, որը կարող է բավարարվել բարձր արդյունավետություն ապահովող համակցված արտադրությամբ, այդ թվում՝ կենցաղային նպատակներով համակցված միկրոարտադրությամբ, ինչպես նաև տարածքային ջեոուցմամբ եւ հովացմամբ.
- ե) բարձր արդյունավետություն ապահովող լրացուցիչ համակցված արտադրության, այդ թվում՝ էլեկտրաէներգիա արտադրող՝ գոյություն ունեցող կայանքների բարեկարգման, ինչպես նաև նոր արդյունաբերական կայանքների կառուցման կամ արտանետվող ջերմային էներգիա արտադրող այլ հարմարանքների հետ կապված ներուժի որոշում.
- զ) տարածքային ջեոուցման եւ հովացման ենթակառուցվածքի էներգաարդյունավետության ներուժի որոշում.
- է) ռազմավարություններ, քաղաքականություններ եւ միջոցառումներ, որոնք կարող են ընդունվել մինչև 2020 եւ 2030 թվականները, որպեսզի իրացվի «ե» կետում նշված ներուժը՝ «դ» կետում նշված պահանջարկը բավարարելու, այդ թվում՝ անհրաժեշտության դեպքում հետեւյալ առաջարկություններն ընդունելու նպատակով.
 - i) մեծացնել համակցված արտադրության բաժինը ջեոուցման եւ հովացման, ինչպես նաև էլեկտրաէներգիայի արտադրության մեջ.
 - ii) մշակել տարածքային ջեոուցման եւ հովացման արդյունավետ ենթակառուցվածք՝ բարձր արդյունավետություն ապահովող համակցված արտադրության զարգացմանը եւ արտանետվող

ջերմային էներգիայի ու վերականգնվող աղբյուրներից ստացվող էներգիայի օգտագործմանը հարմարվելու նպատակով.

- iii) խրախուսել ջերմային էներգիա արտադրող էլեկտրաէներգիայի կայանքներ եւ արտանետվող ջերմային էներգիա արտադրող արդյունաբերական գործարանների տեղակայվածությունն այնպիսի վայրերում, որտեղ վերականգնվում է հասանելի արտանետվող ջերմային էներգիայի առավելագույն քանակը՝ ջեռուցման կամ հովացման գոյություն ունեցող կամ կանխատեսվող պահանջարկը բավարարելու նպատակով.
- iv) խրախուսել արտադրական պրոցեսում ջերմային էներգիա սպառող նոր բնակելի գոտիների կամ նոր արդյունաբերական գործարանների տեղակայվածությունն այնպիսի վայրերում, որտեղ արտանետվող ջերմային էներգիան կարող է նպաստել դրանց ջեռուցման եւ հովացման պահանջարկի բավարարմանը, ինչպես սահմանված է համապարփակ գնահատման մեջ: Դա կարող է ներառել այնպիսի առաջարկություններ, որոնք ուղղված են միեւնույն վայրում գտնվող մի շարք առանձին կայանքների խմբավորմանը աջակցելուն՝ ջեռուցման եւ հովացման պահանջարկի ու առաջարկի օպտիմալ ձեւով համապատասխանեցումն ապահովելու նպատակով.
- v) խրախուսել ջերմային էներգիա արտադրող էլեկտրաէներգիայի կայանքների, արտանետվող ջերմային էներգիա արտադրող արդյունաբերական գործարանների, թափոնների այրման կայանների եւ

թափոններով աշխատող այլ էլեկտրակայանների միացումը տարածքային ջեռուցման կամ հովացման տեղական ցանցին.

vi) խրախուսել արտադրական պրոցեսում ջերմային էներգիա սպառող բնակելի գոտիների եւ արդյունաբերական գործարանների միացումը տարածքային ջեռուցման կամ հովացման տեղական ցանցին.

ը) բարձր արդյունավետություն ապահովող համակցված արտադրության բաժինը եւ 2004/8/ԵՀ հրահանգին համապատասխան սահմանված ներուժն ու ապահովված առաջընթացը.

թ) խնայման ենթակա առաջնային էներգիայի նախահաշիվը.

ժ) առկայության դեպքում ջեռուցմանն ու հովացմանն ուղղված պետական աջակցության գնահատումը՝ տարեկան բյուջեի եւ հնարավոր օժանդակության տարրի նախանշման հետ մեկտեղ: Դա չի ենթադրում պետական աջակցության սխեմաների վերաբերյալ առանձին ծանուցում՝ պետական օժանդակությունը գնահատելու նպատակով:

2. Այնքանով, որքանով հնարավոր է, համապարփակ գնահատումը կարող է պարունակել տարածաշրջանային եւ տեղական ծրագրերի ու ռազմավարությունների փաթեթ:

*ՀԱՎԵԼՎԱԾ IX***ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ՕԳՈՒՏՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ****Մաս 1***Ծախսերի եւ օգուտների**վերլուծության ընդհանուր սկզբունքները*

14(3) հոդվածում նշված՝ ջեռուցման եւ հովացման արդյունավետությունը խթանելուն ուղղված միջոցառումների վերաբերյալ ծախսերի եւ օգուտների վերլուծության նպատակը հասարակական մակարդակով սահմանափակ ռեսուրսների՝ ըստ առաջնահերթության պատշաճ դասակարգման համար որոշում կայացնելու հիմք տրամադրելն է:

Ծախսերի եւ օգուտների վերլուծությունը կարող է ներառել նախագծի գնահատում կամ մի խումբ նախագծեր՝ ավելի ծավալուն տեղական, տարածաշրջանային կամ ազգային գնահատման համար, որպեսզի ջեռուցման պլանավորման նպատակով սահմանվի տվյալ աշխարհագրական գոտու համար ամենաձախսարդյունավետ եւ նպաստավոր ջեռուցման կամ հովացման տարբերակը:

14(3) հոդվածի նպատակներով ծախսերի եւ օգուտների վերլուծությունները ներառում են սոցիալ-տնտեսական եւ բնապահպանական գործոնները հաշվի առնող տնտեսական վերլուծություն:

Ծախսերի եւ օգուտների վերլուծությունը ներառում է հետեւյալ քայլերն ու նկատառումները.

- ա) Համակարգի շրջանակների եւ աշխարհագրական սահմանների սահմանում

Ծախսերի եւ օգուտների տվյալ վերլուծության շրջանակի միջոցով սահմանվում է համապատասխան էներգահամակարգը: Աշխարհագրական սահմանը ենթադրում է հստակ սահմանված

համապատասխան աշխարհագրական գոտի, օրինակ՝ որոշակի տարածաշրջան կամ քաղաքային ագլոմերացիա՝ առանձին նախագծերի հիման վրա ոչ օպտիմալ լուծումներ ընտրելուց խուսափելու նպատակով:

- բ) Միասնական մոտեցում պահանջարկի եւ մատակարարման տարբերակներին

Ծախսերի եւ օգուտների վերլուծության դեպքում հաշվի են առնվում համակարգի եւ աշխարհագրական սահմանի շրջանակներում առկա մատակարարման բոլոր հասանելի ռեսուրսները՝ օգտագործելով հասանելի տվյալները, այդ թվում՝ էլեկտրաէներգայի արտադրությունից ստացվող արտանետվող ջերմային էներգիան, արդյունաբերական կայանքները եւ վերականգնվող էներգիան, ինչպես նաեւ ջեռուցման եւ հովացման պահանջարկի առանձնահատկություններն ու միտումները:

- գ) Ելակետի ստեղծում

Ելակետի նպատակն է ծառայել որպես կողմնորոշման հիմք, որի համեմատությամբ գնահատվում են այլընտրանքային սցենարները:

- դ) Այլընտրանքային սցենարների սահմանում

Դիտարկվում են ելակետի բոլոր համապատասխան այլընտրանքները: Այն սցենարները, որոնք տեխնիկական, ֆինանսական պատճառներով իրագործելի չեն, ազգային կարգավորմամբ կամ ժամանակային սահմանափակումներով պայմանավորված, կարող են ծախսերի եւ օգուտների վերլուծության սկզբնական փուլում բացառվել, եթե դրա հիմնավորման հիմքում ընկած են ստույգ եւ հստակ, ինչպես նաեւ փաստաթղթերով հիմնավորված նկատառումներ:

Ծախսերի եւ օգուտների վերլուծության ժամանակ որպես ելակետի համեմատական այլընտրանքային սցենարներ պետք է հաշվի առնել միայն բարձր արդյունավետություն ապահովող համակցված

արտադրության, արդյունավետ տարածքային ջեռուցման եւ հովացման կամ արդյունավետ անհատական ջեռուցման եւ հովացման մատակարարման տարբերակները:

- ե) Ծախսերի եւ օգուտների ավելցուկի հաշվարկման մեթոդ
- i) ջեռուցման կամ հովացման մատակարարման տարբերակների ընդհանուր երկարաժամկետ ծախսերն ու օգուտները գնահատվում եւ համեմատվում են.
 - ii) գնահատման չափանիշը զուտ ներկա արժեքի (ՁՆԱ) չափանիշն է.
 - iii) ընտրվում է այնպիսի ժամանակահատված, որ ընդգրկվեն սցենարների բոլոր համապատասխան ծախսերն ու օգուտները: Օրինակ՝ գազային էլեկտրակայանների դեպքում պատշաճ ժամանակահատված կարող է համարվել 25 տարին, տարածքային ջեռուցման համակարգի դեպքում՝ 30 տարին, իսկ այնպիսի ջեռուցման սարքավորումների դեպքում, ինչպիսիք կաթսաներն են՝ 20 տարին:
- զ) Գների հաշվարկ եւ կանխատեսում, ինչպես նաեւ տնտեսական վերլուծության մասով այլ ենթադրություններ
- i) անդամ պետությունները ծախսերի եւ օգուտների վերլուծության նպատակով ներկայացնում են ենթադրություններ՝ ներդրված ռեսուրսների եւ արդյունքի հիմնական ցուցանիշներով ու զեղչատուկոսներով պայմանավորված գների վերաբերյալ.
 - ii) զուտ ներկա արժեքը հաշվարկելու նպատակով տնտեսական վերլուծության մեջ կիրառված զեղչատուկոսն ընտրվում է եվրոպական կամ ազգային ուղեցույցներին համապատասխան¹.

¹ Տնտեսական վերլուծության նպատակով ազգային զեղչատուկոսն ընտրվում է՝ հաշվի առնելով Եվրոպական կենտրոնական բանկի կողմից տրամադրված տվյալները:

- iii) անդամ պետություններն էներգիայի գների շարժի մասով կիրառում են ազգային, եվրոպական կամ միջազգային կանխատեսումներ, եթե դա համապատասխանում է իրենց ազգային եւ (կամ) տարածաշրջանային (տեղական) համատեքստին.
- iv) տնտեսական վերլուծության մեջ կիրառված գներն արտացոլում են իրական սոցիալ-տնտեսական ծախսերն ու օգուտները եւ պետք է ներառեն այնպիսի արտաքին ծախսեր, ինչպիսիք են շրջակա միջավայրի եւ առողջության վրա ունեցած ազդեցությունների հետ կապված ծախսերն այնքանով, որքանով դա հնարավոր է, այսինքն՝ այն դեպքում, երբ գոյություն ունի շուկայական գին կամ այն արդեն իսկ ներառված է եվրոպական կամ ազգային կանոնակարգի մեջ:

է) Տնտեսական վերլուծություն. Հետեւանքների գույքագրում

Տնտեսական վերլուծությունների դեպքում հաշվի են առնվում բոլոր համապատասխան տնտեսական հետեւանքները:

Անդամ պետությունները վերլուծության ենթարկված սցենարներում որոշումներ կայացնելիս կարող են գնահատել եւ հաշվի առնել էներգամատակարարման առավել մեծ ճկունության եւ էլեկտարական ցանցերի ավելի օպտիմալ շահագործման արդյունքում գրանցված գներն ու էներգախնայողությունը, այդ թվում՝ ենթակառուցվածքներին ուղղված կրճատված ներդրումների հետեւանքով կանխված ծախսերն ու խնայողությունները:

Հաշվի առնված ծախսերն ու օգուտները ներառում են առնվազն հետեւյալը՝

i) Օգուտներ

- սպառողին մատակարարված արտադրանքի արժեքը (ջերմային էներգիա եւ էլեկտրաէներգիա)

- արտաքին օգուտներ, ինչպիսիք են շրջակա միջավայրի եւ առողջության հետ կապված օգուտները՝ այնքանով, որքանով հնարավոր է

ii) Ծախսեր

- Գործարանների եւ սարքավորումների հետ կապված կապիտալ ծախսեր
- Փոխկապակցված էներգետիկ ցանցերի հետ կապված կապիտալ ծախսեր

Շահագործման հետ կապված փոփոխական եւ մշտական ծախսեր

Էներգետիկ ծախսեր

- Շրջակա միջավայրի եւ առողջության հետ կապված ծախսեր՝ այնքանով, որքանով հնարավոր է

ը) Զգայունության վերլուծություն.

Զգայունության վերլուծությունն իրականացվում է էներգիայի տարբեր գների, զեղչատոկոսների եւ հաշվարկների արդյունքի վրա էական ազդեցություն ունեցող այլ փոփոխական գործոնների հիման վրա նախագծի կամ մի խումբ նախագծերի ծախսերն ու օգուտները գնահատելու նպատակով:

Անդամ պետությունները պետք է նշանակեն 14-րդ հոդվածով նախատեսված ծախսերի եւ օգուտների վերլուծության իրականացման համար պատասխանատու իրավասու մարմիններին: Անդամ պետությունները կարող են իրավասու տեղական, տարածաշրջանային եւ ազգային մարմիններից կամ առանձին կայանքների օպերատորներից պահանջել տնտեսական եւ ֆինանսական վերլուծությունների իրականացում: Նրանք, սույն հավելվածին

համապատասխան, տրամադրում են մանրամասն ներկայացված մեթոդաբանություններն ու ենթադրությունները, ինչպես նաև սահմանում եւ հանրությանն են ներկայացնում տնտեսական վերլուծության ընթացակարգերը:

Մաս 2

Սկզբունքներ՝ 14(5) եւ (7) հոդվածի նպատակներով

Ծախսերի եւ օգուտների վերլուծությամբ ներկայացվում է տեղեկատվություն՝ 14(5) եւ (7) հոդվածում նշված միջոցառումների նպատակներով.

Եթե նախատեսվում է միայն էլեկտրաէներգիա արտադրող կայանք կամ ջերմային էներգիայի վերականգնում չնախատեսող կայանք, ապա պետք է համեմատություն կատարվի նախատեսվող կայանքների կամ նախատեսվող բարեկարգման եւ նույն ծավալով էլեկտրաէներգիա ու տեխնոլոգիական գործընթացների արդյունքում անջատվող ջերմային էներգիա արտադրող, սակայն արտանետվող ջերմային էներգիան վերականգնող եւ բարձր արդյունավետություն ապահովող համակցված արտադրության եւ (կամ) տարածքային ջեռուցման ու հովացման ցանցերի միջոցով ջերմային էներգիա մատակարարող համարժեք կայանքի միջեւ:

Որոշակի աշխարհագրական սահմաններում գնահատումն իրականացվում է՝ հաշվի առնելով նախատեսվող կայանքը եւ ջերմային էներգիայի պահանջարկի՝ գոյություն ունեցող կամ հնարավոր համապատասխան կետերը, որոնց մատակարարումը կարելի է իրականացնել այդ կայանքից՝ հաշվի առնելով խելամիտ հնարավորությունները (օրինակ՝ տեխնիկական իրագործելիությունը եւ հեռավորությունը):

Համակարգի շրջանակները սահմանվում են նախատեսվող կայանքն ու այնպիսի ջերմային բեռնվածությունն ընդգրկելու նպատակով, ինչպիսիք են շենքը (շենքերը) եւ արդյունաբերական գործընթացը: Այդ համակարգի շրջանակներում ջերմություն եւ էլեկտրաէներգիա ապահովելու ընդհանուր արժեքը երկուսի դեպքում որոշվում է եւ համեմատվում:

Ջերմային բեռնվածությունը ներառում է գոյություն ունեցող ջերմային բեռնվածությունը, ինչպիսիք են արդյունաբերական կայանքը կամ գոյություն ունեցող տարածքային ջեռուցման համակարգը, իսկ քաղաքային տարածքներում՝ այն ջերմային բեռնվածությունը, որը գոյություն կունենար, եթե մի խումբ շենքեր կամ քաղաքի մի հատվածն ապահովվեն տարածքային ջեռուցման նոր ցանցով եւ (կամ) միացվեին դրան:

Ծախսերի եւ օգուտների վերլուծությունը հիմնվում է նախատեսվող կայանքի եւ համեմատվող կայանքի (կայանքների) նկարագրության վրա, որը ներառում է էլեկտրաունակությունն ու ջերմունակությունը, համապատասխան դեպքերում՝ վառելիքի տեսակը, նախատեսվող կիրառությունը եւ տարեկան նախատեսվող շահագործման ժամերը, գտնվելու վայրը եւ էլեկտրաէներգիայի ու ջերմային էներգիայի պահանջարկը:

Համեմատության նպատակով հաշվի են առնվում ջերմային էներգիայի պահանջարկը եւ ջերմության պահանջարկի մոտակա կետերի կողմից օգտագործվող ջեռուցման եւ հովացման տեսակները: Համեմատությունը ներառում է նախատեսվող եւ համեմատության կայանքի՝ ենթակառուցվածքների հետ կապված ծախսերը:

14(5) հոդվածի նպատակներով ծախսերի եւ օգուտների վերլուծությունները ներառում են տնտեսական վերլուծություն, ինչն ընդգրկում է առանձին կայանքներին ուղղված ներդրումների եւ շահագործման արդյունքում իրականացված՝ դրամական հոսքերին առնչվող փաստացի գործարքներն արտացոլող ֆինանսական վերլուծություն:

Ծախսերի եւ օգուտների դրական արդյունք ունեցող նախագծերն այն նախագծերն են, որոնց դեպքում նվազեցված օգուտների գումարը տնտեսական եւ ֆինանսական վերլուծության մեջ գերազանցում է նվազեցված ծախսերի գումարը (ծախսերի եւ օգուտների ավելցուկ):

Անդամ պետությունները տնտեսական վերլուծության մեթոդաբանության, ենթադրությունների եւ ժամանակահատվածի վերաբերյալ ուղղորդող սկզբունքներ են սահմանում:

Անդամ պետությունները կարող են ջերմային էլեկտրաէներգիա արտադրող կայանքների շահագործման համար պատասխանատու ընկերություններից, արդյունաբերական ընկերություններից, տարածքային ջեռուցման եւ հովացման ցանցերից կամ սահմանված համակարգի շրջանակի եւ աշխարհագրական սահմանի ազդեցությունները կրող այլ կողմերից պահանջել, որ վերջիններս տրամադրեն տվյալներ՝ առանձին կայանքի ծախսերն ու օգուտները գնահատելու նպատակով դրանք օգտագործելու համար:

*ՀԱՎԵԼՎԱԾ X***Բարձր արդյունավետություն ապահովող համակցված արտադրությամբ արտադրվող էլեկտրաէներգիայի ծագման երաշխիքը**

ա) Անդամ պետությունները ձեռնարկում են միջոցներ՝ ապահովելու, որ՝

(i) բարձր արդյունավետություն ապահովող համակցված արտադրությամբ արտադրվող էլեկտրաէներգիայի ծագման երաշխիքը՝

— հնարավորություն ընձեռնի արտադրողներին ցույց տալ իրենց կողմից վաճառվող էլեկտրաէներգիայի՝ բարձր արդյունավետություն ապահովող համակցված արտադրությամբ արտադրված լինելը, եւ այդ նպատակով տրամադրվի արտադրողի դիմումի հիման վրա,

— լինի ճշգրիտ, վստահելի եւ կեղծիքներից պաշտպանված,

— տրամադրվի, փոխանցվի եւ չեղյալ ճանաչվի էլեկտրոնային եղանակով.

ii) բարձր արդյունավետություն ապահովող համակցված արտադրությամբ ստացվող էներգիայի միեւնոյն միավորը դիտարկվում է միայն մեկ անգամ:

բ) 14(10) հոդվածում նշված ծագման երաշխիքը պետք է պարունակի առնվազն հետեւյալ տեղեկությունները՝

գ) այն կայանքի անվանումը, գտնվելու վայրը, տեսակը եւ հզորությունը (ջերմային եւ էլեկտրական), որտեղ արտադրվել է այդ էներգիան.

ii) արտադրության ամսաթվերն ու վայրերը.

iii) վառելիքի ստորին ջերմարարությունը, որից արտադրվել է էլեկտրաէներգիան.

- iv) էլեկտրաէներգիայի հետ միասին արտադրված ջերմության քանակությունը եւ օգտագործումը.
- v) երաշխիքով ներկայացվող՝ բարձր արդյունավետություն ապահովող եւ համակցված արտադրությամբ ստացվող էլեկտրաէներգիայի քանակությունը՝ II հավելվածի համաձայն.
- vi) II հավելվածին համապատասխան հաշվարկված առաջնային էներգիայի խնայողության ցուցանիշը՝ արդյունավետության՝ II հավելվածի «գ» կետում նշված ներդաշնակեցված բազային արժեքների հիման վրա.
- vii) գործարանի էլեկտրական եւ ջերմային օգտակար գործողության անվանական արժեքը.
- viii) արդյոք կայանքը ստացել է ներդրումային օժանդակություն եւ ինչ չափով.
- ix) արդյոք աջակցության ազգային սխեման որեւէ կերպ օգտակար եղել է էներգիայի միավորի համար եւ ինչ չափով, ինչպես նաեւ աջակցության սխեմայի տեսակը.
- x) կայանքի շահագործման մեկնարկի օրը, եւ
- xi) արտադրման օրն ու երկիրը եւ նույնականացման յուրօրինակ համարը:

Ծագման երաշխիքը պետք է լինի 1ՄՎտ/ժամ ստանդարտ չափով: Այն կապված է էլեկտրաէներգիայի զուտ արտադրության հետ, որը չափվում է կայանի սահմանին եւ փոխանցվում ցանցին:

*ՀԱՎԵԼՎԱԾ XI***Էներգացանցի կարգավորմանը եւ էլեկտրաէներգիայի ցանցի սակագներին ներկայացվող էներգաարդյունավետության չափանիշները**

1. Յանցային սակագները պետք է արտացոլեն ցանցերին առնչվող ծախսերի խնայողությունները, որոնք ապահովվել են պահանջարկի կողմի եւ պահանջարկի կառավարման միջոցառումների եւ բաշխված արտադրության, այդ թվում՝ մատակարարման կամ ցանցային ներդրումների հետ կապված ծախսերի նվազեցման, ինչպես նաեւ ցանցի առավել օպտիմալ շահագործման արդյունքում:

2. Յանցային կարգավորումը եւ սակագները չեն խոչընդոտում ցանցի օպերատորների կամ էներգիայի մանրածախ իրացմամբ զբաղվող ընկերությունների կողմից պահանջարկի կարգավորման միջոցառումների, պահանջարկի կառավարման եւ բաշխված արտադրության համար համակարգային ծառայություններն էլեկտրաէներգիայի կազմակերպված շուկաներում հասանելի դարձնելուն, մասնավորապես՝

ա) վերջնական սպառողների կողմից ծանրաբեռնվածության փոխանցմանը գերծանրաբեռնված ժամերից թեթեւ ծանրաբեռնվածության ժամերի՝ հաշվի առնելով վերականգնվող էներգիայի, համակցված արտադրությամբ եւ բաշխված արտադրությամբ ստացվող էներգիայի հասանելիությունը.

բ) էներգետիկ ագրեգատորների կողմից բաշխված սպառողների պահանջարկի կարգավորման արդյունքում ապահովված էներգախնայողություններին.

գ) էներգետիկ ծառայություններ մատուցողների, այդ թվում՝ էներգետիկ ծառայություններ մատուցող ընկերությունների կողմից իրականացված՝ էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումների արդյունքում պահանջարկի նվազեցմանը,

- դ) ցածր լարման մակարդակի արտադրության ռեսուրսների միացմանն ու առաքմանը.
- ե) մոտակա վայրից արտադրության ռեսուրսների՝ սպառման համակարգին միացնելուն, եւ
- զ) էներգիայի պահեստավորմանը:

Սույն դրույթի նպատակներով «Էլեկտրաէներգիայի կազմակերպված շուկաներ» եզրույթը ներառում է արտաբորսայական շուկաներ եւ էլեկտրաէներգիայի փոխանակումներ էներգետիկ, հզորությունների, հավասարակշռման եւ լրացուցիչ ծառայությունների իրացման նպատակով բոլոր ժամանակահատվածներում, այդ թվում՝ այնպիսի շուկաները, որտեղ կնքվում են ապագայում որոշակի ժամկետում, հաջորդ օրը կամ տվյալ օրը մատուցվող ապրանքների եւ ծառայությունների մասով գործարքներ:

3. Ցանցային կամ մանրածախ առետրի սակագները կարող են աջակցել վերջնական սպառողների կողմից պահանջարկի կարգավորման միջոցառումների համար այնպիսի դինամիկ գնագոյացման, ինչպիսիք են՝

- ա) ըստ օգտագործման ժամանակի տարբերակվող սակագներ.
- բ) առավելագույն ծանրաբեռնվածության գնագոյացում.
- գ) գնագոյացում իրական ժամանակում, եւ
- դ) գերծանրաբեռնված ժամերին արվող նվազեցումներ:

*ՀԱՎԵԼՎԱԾ XII***ՀԱՂՈՐԴՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՕՊԵՐԱՏՈՐՆԵՐԻՆ
ԵՎ ԲԱՇԽԻՉ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՕՊԵՐԱՏՈՐՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ
ԷՆԵՐԳԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ**

Հաղորդման համակարգի օպերատորները եւ բաշխիչ համակարգի օպերատորները՝

- ա) սահմանում են եւ հանրությանը հասանելի դարձնում իրենց ստանդարտ կանոնները, որոնք վերաբերում են տեխնիկական համապատասխանեցման ծախսերի կատարմանը եւ բաշխմանը, ինչպիսիք են ցանցային միացումները եւ ցանցի վերաշահագործումը, ցանցի բարելավված գործունեությունը, ինչպես նաեւ կանոններ ցանցերի մասին օրենսգրքերի ոչ խտրական կիրարկման վերաբերյալ, որոնք անհրաժեշտ են բարձր արդյունավետություն ապահովող համակցված արտադրությամբ արտադրվող էլեկտրաէներգիա արտադրողներին համակցված ցանցի մեջ ընդգրկելու համար.
- բ) համակարգին միանալու ցանկություն ունեցող՝ բարձր արդյունավետություն ապահովող համակցված արտադրությամբ արտադրվող էլեկտրաէներգիայի ցանկացած նոր արտադրողի տրամադրում են պահանջվող համապարփակ եւ անհրաժեշտ տեղեկություններ, այդ թվում՝
 - i) ցանցին միանալու հետ կապված ծախսերի համապարփակ եւ մանրամասն գնահատումը.
 - ii) ցանցին միանալու դիմումը ստանալու եւ վերանայելու ողջամիտ ու ճշգրիտ ժամանակացույց.
 - iii) ողջամիտ ինդիկատիվ ժամանակացույց՝ ցանցին միանալու յուրաքանչյուր առաջարկի համար: Ցանցին միանալու ողջ

գործընթացը չպետք է գերազանցի 24 ամիսը՝ ելնելով այն սկզբունքից, թե ինչն է գործնականում հնարավոր եւ ոչ խտրական.

գ) ապահովում են ստանդարտացված եւ պարզեցված ընթացակարգեր բարձր արդյունավետություն ապահովող բաշխված, համակցված արտադրությամբ արտադրվող էլեկտրաէներգիա արտադրողների միացման համար՝ վերջիններիս միացումը ցանցին հեշտացնելու նպատակով.

«ա» կետում նշված ստանդարտ կանոնները պետք է հիմնված լինեն օբյեկտիվ, թափանցիկ եւ ոչ խտրական չափորոշիչների վրա՝ մասնավորապես հաշվի առնելով ցանցի մեջ այդ արտադրողներին ընդգրկելու հետ կապված բոլոր ծախսերն ու օգուտները: Այդ կանոններով կարող են նախատեսվել ցանցին միացման տարբեր տեսակներ:

*ՀԱՎԵԼՎԱԾ XIII***Նվազագույն դրույթներ, որոնք պետք է ներառվեն պետական հատվածի հետ կնքվող էներգաարդյունավետության պայմանագրերում կամ համապատասխան մրցույթի մասնագրերում**

- էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումների հստակ եւ թափանցիկ ցանկ, որոնք պետք է իրականացվեն, կամ էներգաարդյունավետության արդյունքներ, որոնք պետք է ապահովվեն:
- Երաշխավորված խնայողություններ, որոնք պետք է ապահովել պայմանագրում նշված միջոցառումներն իրականացնելու միջոցով:
- Պայմանագրի տեւողությունն ու ուղենիշները, ծանուցման պայմաններն ու ժամկետները:
- Յուրաքանչյուր պայմանավորվող կողմի պարտավորությունների հստակ եւ թափանցիկ ցանկ:
- Ապահովված խնայողություններ սահմանելու բազիսային ամսաթիվ (ամսաթվեր):
- Որեւէ միջոցառում կամ միջոցառումների փաթեթ իրականացնելու նպատակով ձեռնարկվելիք քայլերի հստակ ու թափանցիկ ցանկ եւ անհրաժեշտության դեպքում՝ դրանց հետ կապված համապատասխան ծախսեր:
- Պայմանագրում նշված միջոցառումները լիարժեքորեն իրականացնելու պարտավորություն եւ նախագծի ընթացքում կատարվող բոլոր փոփոխությունների փաստաթղթավորում:
- Կանոնակարգեր, որոնցով մանրամասն ներկայացվում է համարժեք պահանջների ներառումը երրորդ կողմերի հետ ենթապայմանագրերում:

- Նախագծի ֆինանսական հետեւանքների եւ երկու կողմերի՝ կատարված դրամական խնայողություններում ունեցած ներդրումների բաշխման հստակ եւ թափանցիկ ներկայացում (այսինքն՝ ծառայություն մատուցողի վարձատրություն):
- Հստակ եւ թափանցիկ դրույթներ՝ երաշխավորված եւ կատարված խնայողությունների չափման եւ ստուգման, որակի ստուգումների եւ երաշխիքների վերաբերյալ:
- Պայմանագրի բովանդակության եւ արդյունքի վրա ազդեցություն գործող՝ փոփոխվող կառուցվածքային պայմաններին առնչվելու կարգը (այսինքն՝ էներգիայի գների, կայանքի կիրառման ինտենսիվությունը) պարզաբանող դրույթներ:
- Մանրամասն տեղեկություններ՝ պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրի պարտավորությունների եւ դրանք չկատարելու համար նախատեսվող տույժերի վերաբերյալ:

*ՀԱՎԵԼՎԱԾ XIV***ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՇՐՋԱՆԱԿԸ****Մաս 1***Տարեկան հաշվետվությունների ընդհանուր շրջանակը*

24(1) հոդվածում նշված տարեկան հաշվետվությունները 2020 թվականի ազգային թիրախների մասով գրանցված առաջընթացի մշտադիտարկման հիմք են: Անդամ պետություններն ապահովում են, որ հաշվետվությունները ներառեն հետևյալ նվազագույն տեղեկատվությունը.

- ա) վերջին տարվան նախորդող տարվա հետևյալ ցուցանիշների գնահատումը (տարի X¹ - 2).
 - i) առաջնային էներգիայի սպառում.
 - ii) ընդհանուր վերջնական էներգիայի սպառում.
 - iii) վերջնական էներգիայի սպառումն ըստ ոլորտի
 - արդյունաբերություն
 - տրանսպորտ (հնարավորության դեպքում՝ ուղեւորափոխադրումների եւ բեռնափոխադրումների տարանջատում)
 - տնային տնտեսություններ
 - ծառայություններ.
 - iv) համախառն ավելացված արժեքն ըստ ոլորտի
 - արդյունաբերություն

¹ X = ընթացիկ տարի:

— ծառայություններ.

- v) տնային տնտեսությունների զուտ եկամուտը.
- vi) համախառն ներքին արդյունք (ՀՆԱ).
- vii) ջերմային էներգիայի արտադրությամբ ստացվող էլեկտրաէներգիայի արտադրություն.
- viii) ջերմության եւ էլեկտրաէներգիայի համակցումից ստացվող էլեկտրաէներգիա.
- ix) ջերմային էներգիայի անջատմամբ ջերմության արտադրություն.
- x) ջերմության եւ էլեկտրաէներգիայի համակցված արտադրության կայաններից ստացվող ջերմություն, այդ թվում՝ արտանետվող ջերմային էներգիա.
- xi) վառելիքի ծախսը ջերմային էներգիայի արտադրության դեպքում.
- xii) ուղեւոր-կիլոմետր (ուղ. կմ.)՝ առկայության դեպքում.
- xiii) տոննա-կիլոմետր (տ. կմ.)՝ առկայության դեպքում.
- xiv) ընդհանուր տրանսպորտ-կիլոմետր (ուղ. կմ. +տ. կմ.) այն դեպքում, երբ «xii» եւ «xiii» կետերում նշված միավորներն առկա չեն.
- xv) բնակչություն:

Այն ոլորտներում, որտեղ էներգասպառումը մնում է կայուն կամ աճում է, անհամ պետությունները վերլուծում են դրա պատճառներն ու իրենց գնահատումը կցում են նախահաշվիներին:

Երկրորդ եւ դրան հաջորդող հաշվետվությունները նաեւ ներառում են «բ»-«ե» կետերը.

- բ) նախորդ տարի իրականացված խոշոր օրենսդրական եւ ոչ օրենսդրական միջոցառումները, որոնք նպաստում են 2020 թվականի էներգաարդյունավետության ընդհանուր ազգային ինդիկատիվ թիրախների ապահովմանը.
- գ) 500 մ²-ն գերազանցող ընդհանուր օգտակար մակերեսով եւ 2015 թվականի հուլիսի 9-ի դրությամբ անդամ պետությունների կենտրոնական կառավարման մարմիններին պատկանող եւ նրանց կողմից զբաղեցրած շենքերի ընդհանուր մակերեսը, որը հաշվետվությունը ներկայացնելու տարվա հունվարի 1-ի դրությամբ չի համապատասխանել 5(1) հոդվածում նշված էներգաարդյունավետության պահանջներին.
- դ) անդամ պետությունների կենտրոնական կառավարման մարմիններին պատկանող եւ նրանց կողմից զբաղեցրած ու 5(1) հոդվածում նշված՝ ջեռուցվող եւ (կամ) հովացվող շենքերի ընդհանուր մակերեսը, որը նախորդ տարի վերանորոգվել է, կամ անդամ պետությունների կենտրոնական կառավարման մարմիններին պատկանող եւ նրանց կողմից զբաղեցրած՝ պահանջներին համապատասխանող շենքերում էներգախնայողության քանակը, ինչպես նշված է 5(6) հոդվածում.
- ե) 7(1) հոդվածում նշված էներգաարդյունավետության մասով պարտավորությունների ազգային սխեմաների միջոցով ապահովված էներգախնայողությունը կամ 7(9) հոդվածի կիրառման նպատակով ընդունված այլընտրանքային միջոցառումները:

Առաջին հաշվետվությունը նաեւ ներառում է 3(1) հոդվածում նշված ազգային թիրախը:

Անդամ պետությունները 24(1) հոդվածում նշված տարեկան հաշվետվություններում նաեւ ներառում են լրացուցիչ ազգային թիրախներ: Դա կարող է մասնավորապես վերաբերել սույն մասի «ա» կետում թվարկված վիճակագրական ցուցանիշներին կամ դրանց համակցություններին, ինչպիսիք են առաջնային կամ վերջնական էներգատարությունը կամ ոլորտային էներգատարությունը:

Մաս 2

Էներգաարդյունավետության գործողությունների ազգային ծրագրերի ընդհանուր շրջանակը

24(2) հոդվածում նշված էներգաարդյունավետության գործողությունների ազգային ծրագրերով նախատեսվում է էներգաարդյունավետության ազգային ռազմավարությունների զարգացման շրջանակ:

Էներգաարդյունավետության գործողությունների ազգային ծրագրերն ընդգրկում են էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված կարելու միջոցառումները եւ էներգախնայողության ակնկալվող (ապահովված) ծավալը, այդ թվում՝ էներգիայի մատակարարման, հաղորդման եւ բաշխման ծավալը, ինչպես նաեւ էներգիայի վերջնական սպառման ծավալը: Անդամ պետություններն ապահովում են, որ էներգաարդյունավետության գործողությունների ազգային ծրագրերը ներառեն հետեւյալ նվազագույն տեղեկությունները.

1. Թիրախներ եւ ռազմավարություններ

— 2020 թվականի էներգաարդյունավետության ազգային ինդիկատիվ թիրախ, ինչպես պահանջվում է 3(1) հոդվածով.

- 2006/32/ԵՀ հրահանգի 4(1) հոդվածով նախատեսված՝ էներգախնայողության ազգային ինդիկատիվ թիրախ.
- էներգաարդյունավետության գոյություն ունեցող այլ թիրախներ, որոնք ուղղված են ամբողջ տնտեսությանը կամ որոշակի ոլորտների:

2. Միջոցառումներ եւ էներգախնայողություն

Էներգաարդյունավետության գործողությունների ազգային ծրագրերով տրամադրվում է տեղեկություններ՝ սույն հրահանգի հիմնական տարրերի կիրարկման նպատակով ընդունված միջոցառումների կամ այն միջոցառումների մասին, որոնք նախատեսվում է ընդունել ապագայում, ինչպես նաեւ դրանց առնչվող խնայողության մասին:

ա) Առաջնային էներգիայի խնայողություն

Էներգաարդյունավետության գործողությունների ազգային ծրագրերում թվարկվում են տնտեսության բոլոր ոլորտներում առաջնային էներգիայի խնայողությանն ուղղված կարելուր միջոցառումներն ու գործողությունները: Յուրաքանչյուր միջոցառման կամ միջոցառումների (գործողությունների) փաթեթի դեպքում տրամադրվում են 2020 թվականին ակնկալվող խնայողության եւ մինչեւ հաշվետու ժամանակաշրջանն ապահովվող խնայողության մոտավոր հաշվարկները:

Հնարավորության դեպքում պետք է տրամադրվի միջոցառումների ունեցած այլ ազդեցությունների (օգուտների) (ջերմոցային գազերի արտանետումների մակարդակի կրճատում, օդի բարելավված որակ, աշխատատեղերի ստեղծում եւ այլն), ինչպես նաեւ դրանց իրականացման նպատակով նախատեսված բյուջեի վերաբերյալ տեղեկություններ:

բ) Վերջնական էներգիայի խնայողություն

Էներգաարդյունավետության գործողությունների առաջին եւ երկրորդ ազգային ծրագրերը ներառում են 2006/32/ԵՀ հրահանգի 4(1) եւ (2) հոդվածում նշված վերջնական էներգախնայողության թիրախի ապահովման հետ կապված արդյունքները: Եթե խնայողությունների հաշվարկը (գնահատումը) չափման միավորով հասանելի չէ, ապա էներգիայի նվազման ոլորտային մակարդակը ցուցադրվում է չափման միավորներով (դրանց համատեղ օգտագործմամբ):

Էներգաարդյունավետության գործողությունների առաջին եւ երկրորդ ազգային ծրագրերը նաեւ ներառում են էներգախնայողությունը հաշվարկելու նպատակով օգտագործվող չափման եւ (կամ) հաշվարկման մեթոդաբանությունը: Եթե կիրառվում է «առաջարկվող մեթոդաբանությունը»⁽¹⁾, ապա էներգաարդյունավետության գործողությունների ազգային ծրագրում դրա վերաբերյալ հղումներ են ներկայացվում:

3. Որոշակի տեղեկություններ սույն հրահանգի վերաբերյալ

3.1. Պետական մարմիններ (Հոդված 5)

Էներգաարդյունավետության գործողությունների ազգային ծրագրերը ներառում են 5(7) հոդվածին համապատասխան էներգաարդյունավետության ծրագիր մշակած պետական մարմինների ցանկը:

3.2. Էներգաարդյունավետության մասով պարտավորությունները (Հոդված 7)

Էներգաարդյունավետության գործողությունների ազգային ծրագրերը ներառում են IV հավելվածին համապատասխան ընտրված ազգային գործակիցները:

Էներգաարդյունավետության գործողությունների առաջին ազգային ծրագիրը

ներառում է 7(1) հոդվածում նշված ազգային սխեմայի կամ 7(9) հոդվածի կիրարկման նպատակով ընդունված այլընտրանքային միջոցառումների վերաբերյալ հակիրճ նկարագրություն:

3.3. Էներգետիկ աուդիտներ եւ կառավարման համակարգեր (Հոդված 8)

Էներգաարդյունավետության գործողությունների ազգային ծրագրերը ներառում են հետեւյալը՝

- ա) նախորդ ժամանակահատվածում իրականացված էներգետիկ աուդիտների թիվը.
- բ) նախորդ ժամանակահատվածում խոշոր ձեռնարկություններում իրականացված էներգետիկ աուդիտների թիվը.
- գ) տվյալ տարածքում առկա խոշոր ընկերությունների թիվն այն ընկերությունների թվի վերաբերյալ նշումով, որոնց նկատմամբ կիրառվում է 8(5) հոդվածը:

3.4. Արդյունավետ ջեռուցման եւ հովացման խթանումը (Հոդված 14)

Էներգաարդյունավետության գործողությունների ազգային ծրագրերը ներառում են 14(1) հոդվածում նշված համապարփակ գնահատումն իրականացնելու հարցում ապահովված առաջընթացի գնահատում:

3.5. Էներգիայի հաղորդումը եւ բաշխումը (Հոդված 15)

Էներգաարդյունավետության գործողությունների առաջին ազգային ծրագիրը եւ դրանից հետո յուրաքանչյուր տասը տարին մեկ ներկայացվող հաջորդող հաշվետվությունները ներառում են իրականացված գնահատումը, 15(2) հոդվածում նշված՝ գազի եւ էլեկտրաէներգիայի ենթակառուցվածքների էներգաարդյունավետության մասով ներուժն իրացնելու նպատակով սահմանված միջոցառումներն ու ներդրումները:

3.6. Անդամ պետությունները, որպես իրենց՝ էներգաարդյունավետության գործողությունների ազգային ծրագրերի մաս, հաշվետվություն են ներկայացնում

15-րդ հոդվածում նշված պահանջարկի կարգավորումը հնարավոր դարձնելու եւ այն զարգացնելու նպատակով իրականացված միջոցառումների վերաբերյալ:

3.7. Որակավորման, հավատարմագրման եւ հավաստագրման սխեմաների հասանելիությունը (Հոդված 16)

Էներգաարդյունավետության գործողությունների ազգային ծրագրերը ներառում են էներգետիկ ծառայություններ մատուցողների, էներգետիկ աուդիտներ եւ էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումներ իրականացնողների համար նախատեսված՝ հասանելի որակավորման, հավատարմագրման եւ հավաստագրման սխեմաների կամ դրանց համարժեք որակավորման սխեմաների վերաբերյալ տեղեկություններ:

3.8. Էներգետիկ ծառայություններ (Հոդված 18)

Էներգաարդյունավետության գործողությունների ազգային ծրագրերը ներառում են այն կայքի հասցեն, որտեղ հասանելի է 18(1) հոդվածի «գ» ենթակետում նշված էներգետիկ ծառայություններ մատուցողների ցանկը կամ միջերեսը (ինտերֆեյս):

3.9. Էներգաարդյունավետության բարձրացումը խթանելուն ուղղված այլ միջոցառումներ (Հոդված 19)

Էներգաարդյունավետության գործողությունների առաջին ազգային ծրագիրը պետք է ներառի 19(1) հոդվածում նշված միջոցառումների ցանկը:

ՀԱՎԵԼՎԱԾ XV

Համեմատական աղյուսակ

2004/8/ԵՀ հրահանգ	Սույն հրահանգը
Հոդված 1	Հոդված 1(1)
Հոդված 2	Հոդված 1(1)
Հոդված 3, կետ «ա»	Հոդված 2, կետ 30
Հոդված 3, կետ «բ»	Հոդված 2, կետ 32
Հոդված 3, կետ «գ»	Հոդված 2, կետ 31
Հոդված 3, կետ «դ»	Հոդված 2, կետ 33
Հոդված 3, կետեր «ե» եւ «զ»	—
Հոդված 3, կետ «է»	Հոդված 2, կետ 35
Հոդված 3, կետ «ը»	—
Հոդված 3, կետ «թ»	Հոդված 2, կետ 34
Հոդված 3, կետ «ժ»	—
Հոդված 3, կետ «ժա»	Հոդված 2, կետ 36
Հոդված 3, կետ «ժբ»	Հոդված 2, կետ 37
Հոդված 3, կետ «ժգ»	Հոդված 2, կետ 39
Հոդվածի 3, կետ «ժդ»	Հոդված 2, կետ 38
Հոդված 3, կետ «ժե»	—
—	Հոդված 2, կետեր 40, 41, 42, 43 եւ 44
Հոդված 4(1)	Հավելված II, կետ «զ», առաջին ենթակետ
Հոդված 4(2)	Հոդված 14(10), երկրորդ ենթապարբերություն
Հոդված 4(3)	—
Հոդված 5	Հոդված 14(10), առաջին ենթապարբերություն եւ Հավելված X
Հոդված 6	Հոդված 14(1) եւ (3), Հավելված VIII եւ IX
Հոդված 7(1)	Հոդված 14(11)
Հոդված 7(2) եւ (3)	—
Հոդված 8	Հոդված 15(5)
—	Հոդված 15(6), (7), (8) եւ (9)

2004/8/ԵՀ հրահանգ	Սույն հրահանգը
Հոդված 9	—
Հոդված 10(1) եւ (2)	Հոդված 14(1) եւ 24(2), Հավելված XIV, Մաս 2
Հոդված 10(3)	Հոդված 24(6)
Հոդված 11	Հոդված 24(3)
—	Հոդված 24(5)
Հոդված 12(1) եւ (3)	—
Հոդված 12(2)	Հավելված II, կետ «գ»
Հոդված 13	Հոդված 22(2)
Հոդված 14	—
Հոդված 15	Հոդված 28
Հոդված 16	—
Հոդված 17	Հոդված 29
Հոդված 18	Հոդված 30
Հավելված I	Հավելված I, Մաս II
Հավելված II	Հավելված I, Մաս I եւ Մաս II, վերջին ենթապարբերություն
Հավելված III	Հավելված II
Հավելված IV	Հավելված VIII
—	Հավելված IX
Հոդված 1	Հոդված 1(1)
Հոդված 2	Հոդված 1(1)
Հոդված 3, կետ «ա»	Հոդված 2, կետ 1
Հոդված 3, կետ «բ»	Հոդված 2, կետ 4
Հոդված 3, կետ «գ»	Հոդված 2, կետ 6
Հոդված 3, կետ «դ»	Հոդված 2, կետ 5
—	Հոդված 2, կետեր) եւ 3
Հոդված 3, կետ «ե»	Հոդված 2, կետ 7
Հոդված 3, կետեր «զ», «է», «ը» եւ «թ»	—
—	Հոդված 2, կետեր 8-19
Հոդված 3, կետ «ժ»	Հոդված 2, կետ 2)
—	Հոդված 2, կետ 2)

2004/8/ԵՀ հրահանգ	Սույն հրահանգը
Հոդված 3, կետ «ժա»	—
Հոդված 3, կետ «ժբ»	Հոդված 2, կետ 2)
—	Հոդված 2, կետ 26
Հոդված 3, կետ «ժգ»	—
Հոդված 3, կետ «ժդ»	Հոդված 2, կետ 23
Հոդված 3, կետ «ժե»	Հոդված 2, կետ 20
Հոդված 3, կետ «ժզ»	Հոդված 2, կետ 21
Հոդված 3, կետ «ժէ»	Հոդված 2, կետ 22
Հոդված 3, կետեր «ժը» եւ «ժթ»	—
—	Հոդված 2, կետեր 24, 29, 44 եւ 45
—	Հոդված 3
—	Հոդված 4
Հոդված 4	—
Հոդված 5	Հոդվածներ 5 եւ 6
Հոդված 6(1) «ա»	Հոդված 7(8), կետեր «ա» եւ «բ»
Հոդված 6(1) «բ»	Հոդված 18(3)
Հոդված 6(2)	Հոդված 7(1), (5), (6), (7), (9), (10), (11) եւ (12)
—	Հոդված 7(2) եւ (3)
Հոդված 6(3)	Հոդված 18(2), կետեր «բ» եւ «գ»
Հոդված 6(5)	—
Հոդված 7	Հոդված 17
Հոդված 8	Հոդված 16(1)
—	Հոդված 16(2) եւ (3)
Հոդված 9(1)	Հոդված 19
Հոդված 9(2)	Հոդված 18(1), կետ «դ», ենթակետ «i»
—	Հոդված 18(1), կետեր «ա», «բ», «գ», «դ», ենթակետ (ii), եւ կետ «ե»
Հոդված 10(1)	Հոդված 15(4)
Հոդված 10(2)	Հոդված 15(3)
—	Հոդված 15(7), (8) եւ (9)
Հոդված 11	Հոդված 20

2004/8/ԵՀ հրահանգ	Սույն հրահանգը
Հոդված 12(1)	Հոդված 8(1)
Հոդված 12(2)	—
—	Հոդված 8(2), (3), (4), (5), (6) եւ (7)
Հոդված 12(3)	—
Հոդված 13(1)	Հոդված 9
Հոդված 13(2)	Հոդված 10 եւ Հավելված VII, կետ 1.1
Հոդված 13(3)	Հավելված VII, կետեր 1.2 եւ 1.3
—	Հոդված 11
—	Հոդված 12
—	Հոդված 13
—	Հոդված 15(1) եւ (2)
—	Հոդված 18(2), կետեր «ա» եւ «դ»
—	Հոդված 21
Հոդված 14(1) եւ (2)	Հոդված 24(1) եւ (2)
Հոդված 14(3)	—
Հոդված 14(4) եւ (5)	Հոդված 24(3)
—	Հոդված 24(4) եւ (7)-ից (11)
—	Հոդված 22(1)
Հոդված 15(1)	Հոդված 22(2)
Հոդված 15(2), (3) եւ (4)	—
—	Հոդված 23
—	Հոդված 25
Հոդված 16	Հոդված 26
Հոդված 17	Հոդված 27
Հոդված 18	Հոդված 28
Հոդված 19	Հոդված 29
Հոդված 20	Հոդված 30
Հավելված I	—
Հավելված II	Հավելված IV
Հավելված III	—
Հավելված IV	—

2004/8/ԵՀ հրահանգ	Սույն հրահանգը
Հավելված V	—
Հավելված VI	Հավելված III
—	Հավելված V
—	Հավելված VI
—	Հավելված VII
—	Հավելված XI
—	Հավելված XII
—	Հավելված XIII
—	Հավելված XIV
—	Հավելված XV